



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

371.3  
C-24

19220

2010

371·3  
6-29

# ՆԿԱՏՈՂԱԿԱՆ

## ՈՒՍՈՒՄ

ԱԿՏԵՐՆԻ ԳՈՐԾՎԱԿԱՆ ՀԱՅՈՒԹԿ

ՏԱՐՏՈՎԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏՈՐԻՆԵՑ

Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

Հ. ԿԵԶԻՌԱԽԵԱՆԻ ԵԿ ԸՆԿ. ՏԱՐԵՐԵ

1873

370  
9247-24

# ՆԿԱՏՈՂՈՎԱՆ

371.3  
6-94 *մէ*

## ՊԻՍՈՒՄ

ՎԿՐԵԱԿԱՆ ԳՈՐԽՆԱԿԱՆ ՀԵՂՈՎՐԾ

ՏԱՐՁԱԿԱՆ ԱԻՍՈՒՄՆԱՐԱԵՐԻ ՀԱՄԱՐ

150  
150

ՀԱՅ Յ Հ Ա Յ Ե Տ — Հ Ա Յ Ո Ւ Թ Ա Յ Ե Տ Ո Վ Ե Տ Ո Վ Ե Տ

2001

Յ Ո Ւ Թ Ա Յ Ե Տ

Գ Ո Ւ Յ Ե Ր Դ Ե Ա Ն

Բ Ի Ֆ Լ Ի Ս

Հ Ա Յ Ո Ւ Թ Ա Յ Ե Տ Ի Ւ Թ Ա Յ Ե Տ Ի Ւ Թ Ա Յ Ե Տ

1873



8428

056  
ԱՐԴՅՈՒՆ

# ԱՐԴՅՈՒՆ

ԽՎԱԼՈ

Дозволено цензурою. — Тифлисъ, 3 Мая,  
1873 г.

Ուսուցիչը նախ պէտք է ցոյց տայ երեխաններին նկարագրող առարկաններից ամէն մինը առանձին և հարցնէ. այս բնուշ է, կամ լուս է այս առարկայի տնօւնը։ Աշակերտը պէտք է պատասխանէ. այս լուսահուտ է, այս լուսահուտներ են, այս առարկայի տնօւնը գերէ է, այս առարկաները գրչեր են տառմ։ Թեթեազնելու համար կարելի է պահանջնել, որ պատասխանող աշակերտից յետոյ մի և նոյնը կրկնեն մի քանի ուրիշ աշակերտներ, կամ մինչև անդամ բոլոր աշակերտները, մանաւանդ երր առարկան, կամ նորա անունը աշակերտներին քիչ է յայսնի։ Մի և նոյն հարցը ուսուցիչը պէտք է առաջարկէ բարր աշակերտներին։ Այս աշակերտները, որոնք կարող են հարցին պատասխանել, պէտք է բարձրացնեն աջ ձեռի ցուցամատը (և ոչ բոլոր ձեռը)։ Ուսուցիչը նշանով հրաւիրումէ մինին պատասխանել։ Անհետին չոչէք է լոյլ առլ ոշակերտներին դադարունեցնել առանց նշանի, բոլորը միասին և իրանց ուղածեն պէս։ Դասից իւրաքանչյուր աշակերտ կարգով պէտք է կըրկնէ այն բոլոր առարկանները, որոնց վերայ խօսք է եղած, այսպէս։ այս — դասատուն է, այս — տախտակամած է, այս — պատերն են։ կամ ես տեսնումեմ զասատունը, սեղանը, նստարանները և այլն, կամ վերջադիմ պէտք է պատասխանէ ուսուցչին, որ կարող է այսպիսի հարցեր առա-

ջարկել: Յոյց տուէք ինձ վաւարանը, գոները, լուսամուռը  
լուսամուռները և այն:

Միանդամայն ուսուցիչների ուշադրութիւնը դարձ-  
նում էնք այս մեծ նշանակութեան վերայ, որ ունի սկզբ-  
նական ուսման մէջ չսահմանափակ և բարեկարգ ու որոշ  
արդարութեանը հաջուեցի և պատասխանեցի մէջ:

Վանկերի, բառերի և նախադասութիւնների հնչելուցն  
ու արտասաններու եղանակիցը իսկոյն կարելի է իմանալ, թէ  
խօսողը կամ կարդացողը խոր խօսածը կամ կարդացածը  
հասկանում է, թէ ոչ: Եթէ հին մեթօդով — էղոնսին սա-  
շբառը աշակերտները պարագանառամ էն անգիստ աշերած էր հա-  
գուստութիւնը համ սաշմաց իսկ յն ընթառամ է, որ իտ անշնոր-  
շեա կանչնուամ իրանց ասածը, իտ մ լի անշնորշեա աւշտարա-  
նեան չըն պարզնութ պարագաները բարձրադաշնեան վէրայ  
Ամէն ուսուցչի լաւ յայտնի է, թէ մինչեւ անդամ այն նո-  
խադասութիւնները, որոնք ինքն ըստ ինքեան դիւրանակա-  
նայի են, վաս կամ սիրալ հնչելուց անհասկանալի են դառ-  
նում, և ընդ հակառակն բաւականին դժուար, բարդ և խօս-  
նափնթոր նախադասութիւնները լաւ: Պարզ և բացայատ  
հնչելով ու արտասանուելով շտոր հեշտանում են: Յապոնի  
և նմանապէս ամէնքին, որ վաս արտասանութիւնը, երկար  
ու ձիգ խօսակցութեան ձեզ, հարց ու պատասխանների  
ժիակերտութիւնը և այն, լոտոների համար անտառնելի լու-  
սորս հակառակ, պարզ և բացայատ կերպով արտասանված  
բառերն, ասածները և նախադասութիւնները հոգի ու  
իրանք են տալիս խօսակցութեան և լսողների ուշադրու-  
թիւնը գրգռում են:

Այս պատճառով ամենուն ուսուցիչ, որ դժոն-  
կանուամ է զարթեցնել և պահպանել աշակերտների թմրած

ու քնած ուշադրութիւնը, այժմք է առանձին կերպով աշ-  
խատէ կենդանի ու որոշ խօսելու ընդունակութիւնը ձեռք  
բերել, որքան աւելի հարկաւոր է պահանջել նախակրթու-  
կան դասասան ուսուցչց, որ ամէն միջոց գործ զնէ այն  
բնութանակութիւնը ձեռք բերելու: Հարկաւոր է ձենց աշ-  
կերտների ուսումնարան մտած օրից, աւանդով նրանց լոր-  
հնչելու և ուղիղ արտասանելու սովորութիւնը:

Լաւ և վաս ընթերցանութեան, հարց ու պատասխանի  
մէջ անսահման արածութիւն կայ: Ամէ կամննանք այս  
կողմից մի՛ որ և իցէ ուսումնարանի վերայ համացողու-  
թիւն ունենալ, մեզ էլ հարկաւոր չէ մանել այն ուսումնա-  
րանը, բաւական է ամսանջ զնել դրան և ուսեից, թէ բնչութէս  
են կարդում աշակերտները և կարդացածները պատմում:  
Եհարկէ, կամ մարդիկ, որոնք կարդարավ վաս են կարդում  
ու խօսում, բայց ուղիղ մտածում են և գատում, այնու ու-  
մնանայիւ կարելի է հաստատ առել, որ եւել բոլը երեխոյցը  
ուսուցան մէջ վաս են էարդուամ ու խօսում, անկարելի է  
սորսնել, որ նոյց մտածողութեան ընդունակութիւնը  
ուսուցածակէս զարգանայ: Սորա համար էլ նախակրթա-  
րանի ուսուցիչը նախ և առաջ պարտաւոր է ամենամեծ ու-  
շագրութիւն դարձնել թէ իր և թէ աշակերտների հնչմանը:

Սորա համար նախ և առաջ հարկաւոր է ուշադրու-  
թիւն զարձնել, որ երեխանները սովորեն բացայացա շշտելով  
հնչել այն բառը, որ պատասխանական նախադասութեան  
պլխաւոր միտքը պարագանելու իր մէջ: Այս բանս հար-  
կաւոր է մանաւանդ այն պատճառով, որ երեխաններին պէտք  
է սովորեցնել պատասխանել ամբողջ հախուսութեամբ: և  
ոչ Ամէ մէ բառով, այնպէս որ իրանց պատասխանի մէջ  
կրկնեն սուածորկած հարցի նշանաւոր բառերը: Երեխաննե-

րից պէտք է պահանջել, որ հարցման ու պատասխանի դըլ-խաւոր է ական բառը առանձին կերպով շեշտելով հնչեն և փոքր ինչ բարձր ձայնով արտասանեն, որ կարեի լինի համրգվել, թէ երեխայքը բաւականապէս հասկացել և ըմբռւնել են առաջարկուած հարցի միտքը, Այս բանու պէտք է շարունակ և խստութեամբ պահանջել բոլոր աշակերտներից, մինչեւ անդամ ամենաըլլամիտ ու դանդաղ երեխաներից, Հարկաւոր է ստիպել նրանց, որ մի և նոյն պատասխանը տասն անդամ կրկնեն, մինչեւ որ վերջապէս կանոնաւոր արաւասանեն: Երբ որ ամէն մի երեխայ առանձին ուղիղ արտասանութեամբ կարասախանէ, այն ժամանակ կարեի է պահանջել որ բօլորը միասին պատասխանեն առաջարկած հարցերին:

Արաւ է, այսպիսի բացայաց շեշտագութիւնը գլխաւոր բառերի վերաց փոքր ինչ կոչտ է, բայց սրանում մեծ ժազս չկայ: Ամէն ուսումնարանական կրթութիւն մի առանձին արտեսատականութեան և անբնականութեան կնիք է կրում իր վերաց, բայց կրթութեան այդ կոսկիտ կնիքը էտեան պակասութիւն չէ և շուտով անհետանումէ: կնանքը շատ շուտ ջնջում, ոչնչացնումէ այն անհարթութիւնները, անձունութիւններն և անբնականութիւնները, որ ուսումնարանը տայիտ է աշակերտին:

Հասկանութիւն ինքն բառ ինքեան, որ այս էական պայմանը, որ վերաբրումէ ամէն տեսակ կրթութեան, անհրաժեշտ է բանաւանոր նրանակրթաբանի ուսուցչին, որ իրան նուիրել է նշանական ուսման, որ մի և նոյն ժամանակը պէս է շնչու մասնութեան և իսունցութեան իր թութեան: Այս համար վերացէլ, այն աշակերտը, որին կառաջարկուի ուղարկուի հարց, թէ ինչ է այս կոսմ այն առարկայի անունը

այէսք է պատասխանէ այսպէս: — այս ռատութիւնը անունն է դուռը, շատամուռը, գրեւ (և այն), իսկ եթէ հարցնեն, այս ինչ սենեակ է, նա պէտք է պատասխանէ այսպէս: — այս սենեակը դուռը է: Այսպէս է կոչ ողոք է դուռը անը անը նշանական ուսման մէջ: և առանուրուի պատասխանէ արտն ակտութեան մէջ է հարցում: Այսպէս է կոչ ողոք ոչ մէ սեղիշ եւ զարգացուի նշանական հարցումիւն հնարքառը չէ:

Պատուերգէցէ գլխաւոր հանունները դասութագութեան մէջ:

1 Առաւցէ բնուութեան ուսման ջմանդիւնը Համայսչ:

2 Աչքի առաջ ունեցէք մալ դկային զարգացման ըրնական աստիճանները, կամ շրջանները:

3 Սկսեցէք հիմնաւորապէս ուսուցանել այն կէտից, որի վերաց դանվումէ աշակերտը և առաջնորդեցէք նորան դէպի առաջ շարունակ և անբնադհատ, առանց մի բան թողնելու:

4 Ար ուսուցանէք ոչինչ, որ ուսանողների համար դեռ ոչինչ նշանակութիւն չունի այն ժամանակ, երբ նա սովորումէ կամ աստրագումն էլ ոչինչ նշանակութիւն չի ունենալ:

5 Առաւցէ նշանական քորվակը — գրքնակատողն: Մարզու կրթութեան և զարգացման համար նկասողութիւնը ևս անքան բնական և հարկաւոր ևմ համարում, որ մինչեւ անդամ պատրաստ ևմ անուանել նրան միակ հիմքը ամէն սկզբնական ուսման համար: Ողջ ո՞ւշնական ուսուածք պէս է նշանակութեան լինի: Ինչ որ երեխայքը ըմբռնել են առանց նկատողութեան, այն որանց համար

Եմայ անհանկանալի գտարկ և մոռած բան. Այս կըք-  
թութիւնը որ նկատղական չէ, նա երեխային կրթումէ  
միայն ուսումնարանի և ոչ կեանքի համար.

6 Սկսեցէք ուսուցանել մերձաւոր առարկայից և անցէք հեռաւորը, պարզից բարզը, հեշտից դժուարը, յայտնից դէպի անյացը:

7 Ա-սուցի՞ւ պարբռական և ոչ գիտնական չեմո՞վ:

8 Աշխատեցէք կրթութիւնսվ զարգացնել երեխայի մտաւոր ոյժը, տալ նրան ուսման նիւթ, նշանակեալ գի-  
տաւովիւն:

9 Այս առաջանքում այն բանը, որ աշակերտը չէ կա-  
լուղ հասկանալ:

10 Անձնագիր՝ ռազմական և հիմնական — առարկի ուղիղ և յանաց

11 Աշխատեցէք ձեր դաստիվութիւնը հետաքրքրական  
անել:

12 Միմնոյն ժամանակ մի ուսուցանէք շատ առարկաներ, այլ մի առարկան միւսի ետևից: Այս կանոնը մասնաւոնդ հարկաւոր է պահպաննել ուսման ակրութ, որ ուսանողին միջոց առյ. խր բոլոր սչափութիւնը կենդրուացնել մի, կամ քանի մի գլխաւոր առարկաների վերայ, այնպէս որ լինի մի կենդրոն, որի շուրջը պատուի գան միւս առարկաները:

13 Կրթեցէք ժամանակի դաստիվութեան պահանջ-  
մաւոնքներին համաձայն :

14 Աշխատեցիք որ աշակերտը իր ամէն ուսածը միտ-  
քո պահէ:

**ԱՐԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ**  
ԴԱՅԱՏ ՄԵԶ ԳՏՎՊՈՂ ԱՐԱՐԱՆՆԵՐԻ  
ՃԵՏ ԽԱՆԹՈՒԹԻՒՆ

**ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ**  
1. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՋԻՆ ԶՐՈՅԵՆԵՐԸ ՆՈՐԵԿ ԱՇԱ-  
ԿԵՐՏԵՐԻ ՀԵՏ

Աւուցի առաջին խօսքն ու զրոյցը նորեկ աւշակերտների հետ պէտք է լինի միմեանց հետ ծանօթանալու համար։ Այն աշակերտները, որ նոր են մտնում ուսումնարան, առհասարակ երկչոտ են լինում, նրանք ուսուցչից վախումեն։ Սրա համար էլ ուսուցի առաջին զրոյցները աշակերտների հետ պէտք է շատ հասարակ և բարեկամական ձևով լինին։ Աւսուցիչը դառնալով դէպի մինորեկ աշակերտ հարց նույնիւ թէ ին, և նրա անունը։

Աշուկը Պահորդ :

Ուսուց. Ազդանունդ :

Աշտիերս. Յովհաննիսեան :

Ուսուց. Ի՞նչ է քո հօր անունը: Ի՞նչով է պարապում նա: Ի՞նչ է քո մօր անունը: Ելեղբայրներ ունին: Ի՞նչ են նրանց անունները: Քոյրեր էլ ունին: Ի՞նչ է մեծ քըրոջդ անունը: Ի՞նչ է փոքրերի անունը:

Ուսուց. (գառնալով դէպի միւսը): Գո անունը ի՞նչ է և այլն:

Առաջին զըոյցներում ուսուցիչը պէտք է աշխատէ իմանալ, թէ ի՞նչ դիտեն աշշակերտները: Ի՞նչ աղօթքներ, երգեր են սովորել, կարող են համարել, դժագրել: Միենոյն ժամանակ ուսուցիչը կարող է ցոյց տալ նրանց նստելու տեղերը, և թէ երբ պէտք է դասի գան ու գնան: Ուսուցիչը կարող է ասել նրանց նմանապէս, որ պէտք է մաքուր և սանդրած գան ուսումնարան և թէ հետեւը միշտ պէտք է բերեն քաշետախասակ, քարեգրիչ և ինչ որ իրանց հարկաւոր է: Օգտաւէտ կը լինի, եթէ ուսուցիչը առաջին զըոյցներում հասկացնէ աշակերտներին դասատան ամենահարկաւոր կարգ ու կանոնները. թէ ի՞նչպէս հարկաւոր է նստել, դրիչը և քարեգրիչը բըռանել. թէ ի՞նչպէս հարկաւոր է քարետախա-

տակը առանց աղմուկի հանել. ի՞նչպէս այս այժմաց է նստել դրելու ժամանակ և այլն: Սորս համար ուսուցիչը մի քանի մարմարագլան ձևի է պորձ դնում. օրինակի համար այսպէս:

Ուսուց. Ուսելիս դդալը որ ձեռովն էք բռնում:

Աշտիերս. Այս ձեռովն:

Ուսուց. Այս ձեռին ասումեն այս ձեռ: Ի՞նչ պէս են ասում այս ձեռին: — Մեկնեցէք դէպի առաջ ձեր աջ ձեռը: Հիմա զբէք ձեր աջ ձեռը սեղանի վերայ: Այս ձեռովնը բռնումեն նմանապէս զրիչը, քարեգրիչը, երբ զրում են կամ հկարում: Ո՞ր ձեռումնեն բռնում քարեգրիչը: Հիմայ մեկնեցէք դէպի առաջ ձեր միւս ձեռը: Այս ձեռին ասումեն յափ ձեռ: Ի՞նչ են ասում այս ձեռին: — Այս կերպով պէտք է վարժեցնել աշակերտներին, մինչև որ կարողանան անսխալ աջ ձեռը ջռկել ձախ ձեռից: — Հիմայ քարեգրիչը բռնեցէք երեք մատներով (մեծ մատով, ցուցամատով և միջին մատով): Քարեգրիչը զրէք սեղանի վերայ: Հիմայ վեր առէք: (Այս վարժութիւնը մի քանի անգամ հարկաւոր է կը կնել): Վերկացէք, նստեցի՛ք (էլի մի քանի անգամ): Գա-

բետախանակը զբէ՛ք սեղանի տակը, սեղանի  
վերայ: (Այս վարժութիւնը հարկաւոր է  
այնքան կրկնել, մինչև որ աշակերտները  
առանց աղմուկի կարողանան քարետախս-  
տակը հանել և պահել): Յետոյ ուսու-  
ցիչը բոլոր աշակերտներին կանգնացնումէ  
կարգով և պատուիրում: տեղներդ, կար-  
գով, տեղներդ (մի քանի անգամ): Յե-  
տոյ պատուիրումէ նրանց ձեռները բարձ-  
րացնել, երկարացնել, ցածրացնել, կռաց-  
նել, մի ձեռը բարձրացնել, միւսը ցած-  
րացնել, դրեւու համար յարմար նստել,  
մեզմ քայլել, կանգնել ոտի վերայ, զը-  
լուխները այս կողմը, այն կողմը պատել  
և այլն: Առ հասարակ գասատան մէջ  
հարկաւոր է այս մարմնամարդական վար-  
ժութիւնները կրկնել, մինչև որ նորեկ ա-  
շակերտները կարողանան նոյն բաները մե-  
ծերի հետ հաւասար կատարել: Մենք  
կարծումենք, որ օգտաւէտ կը լինի եթէ  
նկատողական կրթութեան հետ միացնեն և  
այս վարժութիւնները, որովհետեւ այսպի-  
սով աշակերտները կը ծանօթանան այնպի-  
սի հասկացողութիւնների հետ, որ առաջ  
իրանց համար բոլորովին անյայտ էին:

ԴԱՍՏԱԱՆ ՄԵԶ ԳՏՆՎՈՂ ԱՊԱՐԿԱՆԵՐԻ Ա-  
ՆՈՒՆԵՐԻՑ ԵԿ ԵՐԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒ-  
ԹԻՒՆՑ

2. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Ո. Երեխայք, դուք հիմայ ո՞ր տեղէք գտ-  
նվում: Բաւակա՞ն էք որ այսակղէք:  
Նայեցէք, որքան առարկաներ կան այս-  
տեղ, որ մենք գործ ենք դնում: Զեղանից  
մվ կարողէ մի առարկայի անուն տալ:  
Այս ի՞նչ է:

ԱՀ. Գիրք է:

Բ. Այս տեղ ուրիշ առարկաներ ել կան, ո-  
րո՞նք են:

ԱՀ. Քարետախտակ, քարեգրիչ, կառիճ:

Բ. Բարի. թող ձեզոնից ամէն մինը մաքին  
պահէ տուած առարկայի անունը:

Բ. (գառնալով դէպի մի աշակերտ): Պետրոս,  
դուն ի՞նչ առարկայի անուն ես պահել  
մտիդ:

ՊԵ. Գիրք:

Բ. Դու:

Գ. Քարետախտակ:

Բ. Դու:

Ա. Քարեգրիչ:

Բ. Դու:

- Ա. Վաւիծ: Այս բարեգործությունը պահպանվում է  
Բ. Այս տռարկաները ես դնում եմ սեղանի  
վերայ: Դռք այս տեղ՝ սեղանի վերայ  
լինչեք տեսնում:
- Ա. Պիրք, քարետախտակ, քարեզրիչ և կա-  
փիճի վեհական գործությունը:
- Ա. Ուղիղ է, այս տռարկաները ձեր տռաջն են:  
Ես գիրքը վերևում առնում ձեռում, ու-  
ղիղութեամբ լսեցի՞ք թէ ի՞նչ եմ ա-  
ռում ձեզ Ուրիշը տռապիսյ է: Ո՞վ կարող  
է ասած կը ինիլ: — Այդպէս է, ուղիղ է:  
Գուն էլ կարող ես միենոյնը ասել: Փոր-  
ձեցէ՞ք բարդ միասին ասել այդ միենոյնը:  
Հիմայ ձեռում ի՞նչ կայ:
- Ա. Քարեզրիչ:
- Ա. Ես ի՞նչ կարող եմ ասել քարեզրիչի մաս-  
սին: Նա էլ առարկայ է: — Ուրիմն ասացէ՞ք  
ի՞նձ այդ:
- Ա. Քարեզրիչը առարկայ է:
- Ա. Իսկ քարետախտակը ի՞նչ է:
- Ա. Առարկայ է:
- Ա. Ո՞վ կարող է ասել թէ ի՞նչ է քարետախ-  
տակը:
- Ա. Քարեզրիչը առարկայ է:
- Ա. Շատ լաւ: Իսկ կարիճը ի՞նչ է:
- Ա. Կաւիծը առարկայ է:

- Ա. Կամենումեմ: Խմանալ թէ դուք յի-  
ւա տես: Չումէք մեր ասածները:
- Ես գիրքը պահպան առնում այս յա-  
մի: Պահպան առնում այս յամի:
- Ի՞նչ է գիրքը:
- Ի՞նչ է գարեփախտիչը:
- Ի՞նչ է արեգիչը:
- Ի՞նչ է կափճը:
- Ի՞նչ է: Այդ ամէնը առարկաներ են: Միայն  
այս տեղ՝ զասատան մէջ կան առարկաներ,  
թէ դուրսն էլ և առնեն էլ կան առարկա-  
ներ: — Այդպէս է, ամէն տեղ էլ առարկաներ  
կան: Ո՞վ կարող է տալ մի առարկայի ա-  
ռումնը, որ դասատանից գուրան է:
- Ա. Ծառ, փայտ, հոր:
- Ա. Ուղիղ է: Ասացէ՞ք ի՞նձ ի՞նչ է ծառը, փայտը  
հորը:
- Ա. Ծառ առարկայ է: Փայտը առարկայ է:  
Հորը առարկայ է:
- Ա. Ծառ լաւ: անուանեցէ՞ք ուրեմն այնպիսի  
առարկաներ, որոնք գննվում են տների  
մէջ կամ գուրաը:
- Ա. Այլը առարկայ է:
- Ա. Արօրը (գութանը) առարկայ է:  
Եղանը առարկայ է:
- Սեղանը առարկայ է:
- Աթոռը առարկայ է:
- Կուժը առարկայ է:

Ուս. Բաւականէ : Մենք շատ երկար ժամանակ  
կը կողցնէինք, եթէ կամենայինք անուա-  
նել այն ամէն առարկաները, որոնք զբու-  
նվումեն աների մէջ կամ դուրսը : Յե-  
այ մենք ելի կը խօսինք շատ առարկա-  
ների վերայ : Այս հաճելի՞է ձեզ :

Նշուածութեան : Ուսուցիչը պէտք է պահանջէ աշա-  
կերաներից, որ պարզ, բարձր և անսայթաք պատասխա-  
նեն, Զպէտքէ մոյլտալ աշակերաներին խօսիքը կուլ տալ :  
Օդաւաւէտ է երրեմն աշակերաներին միասին (խորով) պա-  
տասխանել : Սրանով կը սալրին ամանակալ (տակտով) խօսել, բառերը պարզ արտասանել և վանկերի բաժանել :

### 3. ԳԱՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Ուս. Զեղանից ովէ մտարերում, թէ երեկ ինչ  
առարկաներ : անուանեցինք : Զեղանից ովէ  
կարողէ նորից պատմել թէ ինչ ասինք նը-  
րանց վերայ : Մտարերում էք, թէ երեկ  
ինչ առարկաներ դրինք սեղանի վերայ :  
Բացի այն առարկաներից, դասաւան մէջը  
ուրիշ առարկաներ էլ կա՞ն : Մի բան ա-  
սէ՞ք այդ առարկաների վերայ :

Ա. Գրիչը առարկայ է :

Սպունգը առարկայ է :  
Գանոնը առարկայ է :

Գրչակոթը առարկայ է :

Ուշաղբութեամբ լոեցէք, որովհետեւ այդ  
առարկաները հարկաւոր են մեզ դասա-  
տանը, սորա համար էլ այդ առարկանե-  
րին ասումենք դաստիառ առարկաները : Գիրքը  
դասական առարկայ է :

Ինչո՞ւ գրքին դասական առարկայ ենք ասում :

— Այդպէս է, որովհետեւ գիրքը մեզ հար-  
կաւոր է դասաւանումը կամ ուսումնա-  
րանումը : — Քարետախտակը ի՞նչ է :

Աշ. Քարետախտակը դասական առարկայ է :

Ուս. Ո՞վ կարող է անուանել բոլոր դասական ա-  
ռարկաները :

Աշ. Քարեղիչը դասական առարկայ է :

Կաւիճը դասական առարկայ է :

Գրիչը դասական առարկայ է :

Սպունգը դասական առարկայ է :

Քանոնը դասական առարկայ է :

Մատիսը դասական առարկայ է :

Գրչակոթը դասական առարկայ է :

Ուս. Այս տեղ սեղանի վերայ ի՞նչ առարկաներ կան :

### Ա. Դ Ա Ս Ա Տ Ա Խ Ե :

Ուս. Երեխայք, ասէ՞ք ինձ, ո՞րտեղ էք այժմ :

Եթէն. Մենք այժմ ուսումնարանումն եմք :

- Ուսումնարանը մեծ է, ահա նախասենեակը  
իմսենեակը և այլն այս բոլորն էլ ուսումնա-  
րանին են պատկանում։ Դուք հիմայ դա-  
սառան մէջն էք, Կրկնեցէք։
- Երե՞ւ. Հիմայ մենք դասառան մէջն ենք։
- Ուսումնար այս անեակին դա-  
սառուն էք առում։
- Երե՞ւ. Որովհետեւ մենք այս տեղ սովորում ենք։
- Ուսումնար է։ Դուք այս տեղ առվորում էք։  
Եթէ մի ուրիշ մարդ մտնէ այս տեղ, երբ  
որ դուք այս տեղ չէք լինիլ, նա կարող  
է իմանալ թէ այս դասառուն է։
- Երե՞ւ. Կարող է, որովհետեւ այս տեղ կան երկար  
սեղաններ, նաև արսններ, մեծ տախտակ։
- Ուսումնար է։ Խօնչակն էք կարծում, բոլոր դա-  
սառներն էլ միանման են։ Ահա այս տեղ  
մենք ունինք մի ուրիշ բարձր դասառուն։  
Նա էլ հէնց խսկ մերինի պէս է։
- Եր. Ո՛չ, նա մէրինի պէս չէ, նա փոքր է մե-  
րիցը, այն տեղ միայն երկու ըլւսամուտ-  
ներ կան։
- Ուսումնար է։ Եկէք, ուրեմն, նկարագրենք մեր դասա-  
ռունը, որ իմանանք թէ ի՞նչ ալիսի է։  
Ի՞նչ մասերից է բազկանում մեր դասա-
- 1 Նէր. Ի հարկէ պատասխանը պէտք է տեղին յար-  
մար լինի։

- առունը։ (Եթէ երեխաները պատասխան չեն  
տալիս և չեն հասկանում թէ ի՞նչ է պա-  
հանջում նրանցից ուսուցիչը, նա պէտք  
է առաջարկէ այօպիսի հարց)։
- Ուսումնար, բարձրացրու ձեռդդ դէպի վերև։  
(Երեխայն բարձրացնումէ ձեռը)։ Այն տեղ  
ի՞նչն է։
- Եր. Այն տեղ օճոռքն է։
- Ուսումնար, ուրեմն օճոռքը դասառան մի մասն է։  
Կրկնեցէք ամէնքդ։
- Եր. (Ասորով) Օճոռքը մեր դասառան մի մասն է։
- Ուսումնար է։ Լին ինչից։ Կախ արեք ձեռներդ դէպի ցած։  
Գէորդ, ներքեն ի՞նչն է։
- Գէորդ. Աերքել յատակը (կամ տախտակամածն) է։
- Ուսումնար օճոռքը և յատակը մեր դասառան  
մասերն են։ — Երեխաները կրկնում են։
- Ուսումնար դասառունը էլի ի՞նչ մասերից է բաղ-  
կանում։ Մեկնեցէք ձեռներդ դէպի ա-  
ռաջ։ Պետրոս, այն տեղ ի՞նչն է։
- Ուսումնար տեղ պատն է։
- Ուսումնար է։ Վերկաց տեղիցդ և գնա այն տեղ. (Երե-  
խայն մօտենումէ պատին)։ Լաւ, գնա,  
նստիր տեղդ։ Մեր դասառան մէջ միայն  
մի պատ կայ։
- Եր. Ո՛չ, շատ պատեր կան։
- Ուսումնար միւս պատի մօա, Վարօ։ (Աղջեկը

գնումէ միւնոյն պատի մօտ): Ո՛չ, այդ  
պատի մօտ արդէն Պետքուն էր: Մօտեցիր  
միւս պատին: (Աղջիկը մօտենումէ միւս  
պատին): Լաւ, նստի՞ր: Երեխայք, քանի  
պատ գտանք դասատան մշ:

Երկու պատ:

Ու. Լաւ. Գէվօ, ուրիշ էլ պատ կայ, ցոյց  
տուր: (Երեխայն գնումէ երրորդ պատի  
մօտ): Քանի՞ պատ գտանք:

Եր. Երեք պատ:

Ու. Սէրդօ, էլի պատ կայ:

Մէր. Կայ: (Վեր է կենում և ցոյց է տալիս):

Ու. Լաւ, ուրեմն մեր դասատունը քանի պատ  
ունի:

Եր. Զորս պատ:

Ու. Պատասխանեցէ՞ք կատարեալ նախադասու-  
թիւնով (Հարցի մի քանի խօսքերը կրկ-  
նելով):

Եր. Մէր դասատունը շոր պատ ունի:

Ու. Լաւ, հիմայ կրկնեցէ՞ք ինչ որ ասինք դա-  
սատան վերայ:

Եր. Մէր դասատունը բաղկանումէ օձօռքից,  
յատակից, չորս պատերից, երկուոը եր-  
կար և երկուոը կարծ:

1 Նէտ. Փոքր երեխաները մեծ բաւականութիւնով  
դուրս են զալիս սեղանի ետևից, դասատվութեան ժամա-  
նակ շարժմունքները օդառաւէտ և բաւականացոցիչ են:

Ու. Շատ լաւ է: Կարող էք ասել, բոլոր պա-  
տերն էլ միաշամփ են:

Եր. Ո՛չ, միաշամփ չեն, երկուոը երկար են և  
երկուոը կարծ:

Ու. Ցոյց տուր երկարները գ.: (Երեխայն ցոյց  
է ասլիս երկու զուգահեռական երկար պա-  
տերը): Լաւ, հիմայ դու ցոյց տուր կարծ  
պատերը: (Միւս երեխայն վեր է կենում  
և ցոյց է տալիս միւս երկու զուգահեռա-  
կան կարծ պատերը): Լաւ, այս աւելաց-  
րէ՞ք նրա վերայ, ինչ որ ասել ենք դասա-  
տան մասին:

Եր. Մէր դասատունը բաղկանումէ օձօռքից,  
յատակից, չորս պատերից, երկուոը եր-  
կար և երկուոը կարծ:

Ու. Շատ լաւ: Հիմայ բոլորդ էլ ցոյց տուէ՞ք  
ինձ ձեր աջ ձեռը, մեկնեցէ՞ք: Երեխայք,  
լսեցէ՞ք այն պատը, որ աջ ձեռի կողմն է  
դանվում, կոչվումէ աջակողմեան պատ:  
Ցոյց տուէ՞ք աջակողմեան պատը:

Եր. Այս աջակողմեան պատն է:

Ու. Բարձրացրէ՞ք ձեր ձախ ձեռը, մեկնեցէ՞ք:  
Այս ձախակողմեան պատն է: Ցոյց տուէ՞ք  
և կրկնեցէ՞ք:

Եր. (Ցոյց են աելիս): Այս ձախակողմեան պատն է:

Ու. Իսկ այս (ցոյց է տալիս ետևինը), ո՞ր պատն է:

- Եթ. Այս ետևի պատճն է :
- Ուս. Իսկ այս . . . . (ցոյց է տալիս առաջի  
պատճ) :
- Եթ. Այս առաջի պատճն է :
- Ուս. Լաւ : Գնա՞ Գու, ցոյց տնկը և անուշանէ  
բոլը պատերը : . . . Հիմայ դու : . . .  
Հիմայ դու : . . . Հիմայ դու : Բաւաւ  
կան է, նատեցէք : Զախակողմեան պատի  
վերայ ի՞նչ կայ շինած զետրոս:
- Փետ. Զախակողմեան պատի վերայ լուսամուտներ  
են շինած:
- Ուս. Քանի՞ն են:
- Եթ. Երեք լուսամուտ :
- Ուս. Ասացէք կատարեալ նախադասութիւնով:
- Եթ. Զախակողմեան պատի վերայ երեք լուսա  
մուտներ կան :
- Ուս. Իսկ աջակողմեան պատի վերայ ի՞նչ կայ  
շինած :
- Եթ. Աջակողմեան պատի վերայ դուռ է շինած:
- Ուս. Լուսամուտները ի՞նչի համար են շինած :
- Եթ. Նորա համար որ լոյս մտնի :
- Ուս. Ելե ի՞նչի համար: (լուռթիւն) Շոգի ժաւ  
մանակը ի՞նչ են անում:
- Եթ. Լուսամուտները բաց են անում:
- Ուս. Ուրեմն ել ի՞նչու համար են լուսամուտ  
ները :

- Եթ. Նորա համար, որ հով լինի և առողջաւ  
րար օդը կարողանայ տուն մտնել:
- Ուս. Իսկ դուռը ի՞նչու համար է :
- Եթ. Որ կարողանան տուն ու դուրս անել:
- Ուս. Երեխայք, մեր դասատունը անկիւններ էլ  
ունի:
- Եթ. Ունի :
- Ուս. Ու գնա՞ ցոյց տնկը բոլը անկիւնները :  
(Երեխայն ցոյց է տալիս) Իսկ դու, Գու  
համարէ՛, քանի՞նն են: (Երեխայն համա-  
րումէ) Երեխաները համարումեն բոլը  
անկիւնները :
- Եթ. Մեր դասատունը չորս անկիւն ունի:
- Ուս. Ուրիշ էլ ի՞նչ կայ դասատանումը :
- Եթ. Վառարանը, վառարանը :
- Ուս. Էլե ի՞նչ:
- Եթ. Սեղանները, նստարանները և տախտակը:
- Ուս. Լաւ, վառարանը ի՞նչու համար է :
- Եթ. Սենեկակը տաջայնելու համար:
- Ուս. Իսկ սեղանները :
- Եթ. Նրանց վերայ դասական առարկաները դը-  
նելու համար:
- Ուս. Հապա տախտակը:
- Եթ. Որ նրա վերայ զրեն կաւիճով:
- Ուս. Օձոռքը ի՞նչով է ծածկած:
- Եթ. Ապիտակ դեղով:

- Ուս. Ու, գեղով չէ ծածկած, այլ կաձով  
սվաղած է : Յատակը ինչով է ծածկած :
- Եր. Տախտակամածով (աղեւով կամ քարով):
- Ուս. Տախտակամածը ինչով է ներկած :
- Եր. Չիթաղեղով:
- Ուս. Ի՞նչ դոյնի:
- Եր. Ընկուղենու:
- Ուս. Իսկ պատը ինչով է ծածկած .
- Եր. Ծպալերով (գունաւոր թղթով):
- Ուս. Ի՞նչ դոյնի:
- Եր. Կապուա:
- Ուս. Վառարանը ովէ շինել:
- Եր. Վալատողը:
- Ուս. Սեղանները, ատիտակը, ովէ շինել:
- Եր. Ատաղձագործը<sup>1</sup>:
- Ուս. Իսկ լուսամաւտները, դուռը և տախտակամածը ովէ շինել:
- Եր. Հիւսը:
- Ուս. Ովէ նրանց ներկ քսել:
- Եր. Նաղշքարը:
- Ուս. Պատերին ովէ շպալեր կպցը ել:
- Եր. Թուղթ կպցնող նաղշքարը:
- Ուս. Հիմայ դու Գէլօ, ասաւ սիզմից ինչ որ ասացինք մեր դասաւան վերայ (դառնում է դէպի ամենալաւ աշակերտը):

<sup>1</sup> Եւստ. Ատաղձ — փայտի մասալա, փայտի նիւթ:

Գէջ. Մեր գասատունը բաղկանումէ օճոռքից,  
յատակից, չորս սպատերից, երկուսը երկար և երկուսը կարծ: Զախակողմեան պատի վերայ երեք լուսամուտներ կան, իսկ աջակողմեան սղատի վերայ դուռը: Մեր դասատունը ունի 4 անկիւն, 1 վառարան, 5 նստարան, 5 սեղան և 1 մեծ փայտէ ատիտակ: Օճոռքը սպիտակ կաձով է ուղղած, տախտակամածը լոնկուղենու գոյն ձիթադեղով է ներկած, իսկ պատերի վերայ թռողթէ կպցը աղքած: Սեղանները, նըստարանները և տախտակը շինել է ատաղձագործը, իսկ դուռը, լուսամաւտները և տախտակամածը շինել է հիւսը: Պատերը և վառարանը կալատոն է շինել: տախտակամածին ներկ է քսել նաղշքարը և թռողթն էլ կպցը ել է պատին:

5. Դ Ո Ւ Ռ:

Զեւ և Բժուշեանը: Սենեակի դուռը ունի չորս կողմ և չորս անկիւն: Աչա այս նրա ներքի կողմն է, այն վերելի, այս — աջ և այն — ձախ կողմը: Գոռների կողմերը ուղիղ են: Աչա այս գիծը ուղիղ դիմէ: Դրան մակերեսիթը սահմանափակված է չորս

ուղիղ գծերով. Նա չորս կողմանի և չորս անկիւնանի է : Դրան ներքի կողմը վերինի հետ հաւասար երկայնութիւն ունի, աջ կողմն էլ այնքան—որքան և ձախը :

Դրան իւրաքանչիւր հակառակ կողմերը միաշափ երկայնութիւն ունին : Դռները մարդու հասակից բարձր են լինում :

**Մասերը :** Դուռը բաղկանումէ շրջանակից, խաչաձև միջանց գոտիներից և դրան տախտակից : Շրջանակը դրան արտաքին մասն է և կազմումէ նրա կողմերը : Խաչաձև գոտիները անցնումեն դրան միջով վերևից ներքեւ և աջ կողմից դեպի ձախը : Դրան տախտակը դանփումէ շրջանակի և խաչաձև գոտիների տարածութեան մէջ :

Շրջանակի վերայ կայ երկու օղակ, վերին և ներքին : Զանկալներով գուները կախ են տալիս այս օղակներից : Դրան ներքեկի անշարժ մասին ասում են շեմք :

**Թէ** Է՞նչ հիմքից և ո՞չ շնորհ դուռը : Դուռը շնորհմեն փայտից: Փայտը լինումէ սպիտակ և գեղնադոյն : Զուտ երկաթը նմանապէս սպիտակ գոյն է ունենում : Դուռը ներկումեն դեղնադոյն ներկով: Դրան փայտեղէն մասերը շինումէ հիւսը, իսկ երկաթեղէնը — երկաթագործը (չըլդարը) :

**Թէ** Է՞նչ համար է դուռը : Դուռը նրա համար է, որ դասառունը բաց ու խուզի անեն, որ մար-

գիկ կարողանան դուս և տուն անել: Դուռը խուզի են անսւեմ, որ քամին սենեակը չ'մտնէ և ձմեռը տունը տաք լինի: Եթէ ուզումեն այնպէս խուփ առնել գուռը, որ ոչ ոք չ'մտնէ, այն ժամանակ բաշնալիքով փակումեն:

ԱՅՍ ԵՒ ՀԵՏԵԿԵԱԼ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ :

Ուսուցիչը իւր հարցերը այն ձեռվէ առաջարկում, այնպէս է ուղղում որ աշակերտաները կարողանան վերոյիշեալ բառերով պատասխանել: Եթէ երեխայն ուղիղ չէ արտապայտում իրան միտքը, հարկաւոր է ուղղել—ուսուցիչը տալիս է ուղիղ պատասխան պատշաճաւոր շեշտադրութիւնով, իսկ երեխայն նրա ասածները կրկնումէ: Բոլոր դասառըլութիւնը պէտք է լինի կենդանի խօսակցութիւն: Խւրաքանիւր դասից յետոյ, ամէն մի աշակերտ կրկնումէ և այն դրութիւնները, ինչ որ ըմբռնել է դասառվութեան ընթացքում: Առաջադէմ աշակերտները կրկնումն մի քանի բան: Իսկ նրանցից ամենալաւը պատմումէ բոլորը, ինչ որ դասի ժամանակ ասել են:

### 6. Լ Ո Ւ Ս Ա Մ Ո Ւ Տ Տ :

Լուսամուտի մի քանի մասերը անշարժ են, միւները շարժական: Անշարժ են լուսամուտի շրթ-

ջանակները, իսկ շարժականներն են լուսամուտի բայց վող մասերը : Եթանակների վերայ ամրացած են երկասթէ օղակները, որոնցից կախ են ընկած լուսամուտի բացվող մասերը : Այս լուսամուտի վերայ կանչորս բացվող մասեր, երկուսը վերևն են, իսկ երկուսը ներքեւը : Այս ներքին աջակողմեան մասն է, այս ձախակողմեան : Այն վերին աջակողմեան մասն է, իսկ միւսը ձախակողմեան : Ամէն մի մասում մենք նշարում ենք շրջապատած փայտէ շրջանակներ և երկու օղակ : Այս փայտէ շրջանակները լուսամուտի կիսի արտաքին մասերն են կազմում և բաղկանում են չորս կողմերից և չորս անկիշններից : Այս փայտէ շրջանակների մէջ ծեփելիքով ամրացած են ապակիները : Լուսամուտի աջակողմեան կիսի վերայ գտնվում է փակելիք, որով լուսամուտը փակում են և բաց են անում : Լուսամուտը բաղկանում է փայտից, երկաթից, ծեփելիքից և ապակիից : Եթանակները շինած են փայտից, չանկալները և օղակները — երկաթից, ծեփելիքը ալւուրից և սոսինձից . իսկ լուսամուտի ապակին — ապակիից : Ապակին թափանցիկ է, նրա միջով լցոր թափանցում և սենեակները լուսաւորում է : Լուսամուտի միւս մասերը անթափանցիկ են :

Լուսամուտը նրա համար է, որ արեգակի լոյսը կարողանայ տուն մտնել, և միւնցին ժամանակ դրսի ցուրտ օդը չմտնէ : Նրբ որ կամենում են դրսի աւ-

ռողջարար ցուրտ օդը տուն թողնել, այն ժամանակ լուսամուտը բաց են անում :

Լուսամուտի շրջանակները շինելէ հիւսը, օղակները և չանկալները երկաթագործը (չընդարը) : Շուշաբցողը ապակին դրել և ծեփել է :

Երջանակը փայտից է շինած : Փայտը բերում են անտառից : Երկաթը գուրս են բերում հանքերից, որ գտնվում էն հողի մէջ : Նրան առաջ ձուլում են և յետոյ ծեծում : Ապակին շինում են աւազից և կալաքարից (անկաղ) : Հիւսը շրջանակը սղոցի և ուրիշ գործիքների օգնութեամբն է շինում : Վերջապէս ապակի դցողը ապակին կտրել է քարով, որին ագամանող (ալմաղ) են ասում :

7. Ա. Ա. Ռ Ա. Ն :

Վառարանը բաղկանում է նոյն իսկ վառարանից և ծինեցովից : Վառարանը ունի մի զրնակ, որ բաց ու խուփ է մինում : Վառարանը սենեակի յատակի վերայ է շինած : Վառարանը չորսանկիւնամի է, գուռն էլ նմանապէս չորսանկիւնամի է : Վառարանը ագուռով է շինած : Ագուռը շինում են կաւից : Դուռը երկաթից են շինում : Վառարան շինողին ասում են կալատող :

Վառարանը նորա համար է, որ ցուրտ ժա-

մանակները — տշունքն ու ձմեռն սենեակը տաքայ-  
նեն : Վառարանիր տաքայնումն են փայտով : Երբ որ  
վառարանի մէջ դարսումնեն լիսյար և վառում, այն  
ժամանակ վառարանը տաքայնումէ . և սա սենեակի  
մէջ գտնվող օդն է տաքայնում : Ծուխը որ գոյա-  
նումէ այրվող լրացտից ծխնելոյզով բարձրանումէ  
դէպի վերև — տանելոյը դուրս է գնում :

**Յ Ս Ե Ղ Ա Ն :**

Սեղանը բաղկանումէ երեք մասերից, վերևին,  
միջին և ներքին մասերից : Վերին մասը սեղանի  
տախտակն է, միջինը, — սեղանի արկղը, իսկ ներ-  
քինը սեղանի ոսներն են : Սեղանը ոսներով յատակի  
վերայ է կանգնած, ոսների վերայ գտնվումէ արկղը  
և սորա վերայ էլ սեղանի տախտակը : Ուրեմն ար-  
կղը գտնվումէ ոտների և տախտակի մէջ սեղը:  
Սեղանի տախտակը չորս ոտնանի և չորս անկիւնանի  
է : Ամէն երկու հակառակ կողմերը միաւտփ են : Այս  
չորս կողմերից երկու կողմերը միւս երկու կողմերից  
երկար են — ուրիշ խօսքով, սեղանի երկայնութիւնը  
լոյնութիւնից աւելի է : Սեղանը ներկած է ու ներ-  
կով : Սեղանի ոտները նմանապէս չորս կողմանի և  
չորս անկիւնանի են :

Սեղանը նրա համար է, որ նորա մօտ նստեն

և զբին, կամ նրա վերայ դարսեն գրքեր և ուրիշ  
առարկաներ : Արկղի մէջ գնումնեն այնպիսի առար-  
կաներ, որոնք ուզումեն պահել :

**Ա Ր Կ Ղ Բ և տախտակը եղենից են շինած, իսկ**  
**ոտները կաղնի փայտից :** Սեղանը ատաղձագործն է  
շինել :

**Գ. Ք Ա Ր Ե Տ Ա Խ Տ Ա Կ, Կ Ա Մ Ա Ս Պ Ի Ս Ի, Տ Ա Խ Տ Ա Կ :**

**Ք արետախտակը բաղկանումէ քարետախտակից**  
և շրջանակից : Քարետախտակը երկու կողմիցն էլ  
տախտակ է . նա թուխ գոյն ունի և չորս անկիւնանի  
է : Նրա բոլոր կողմերը միաչափ չեն, միայն երկու  
հակառակ կողմերը հաւասարաչափ են : Երկու ան-  
հակառակ կողմերիցը մինը երկար է, իսկ միւսը  
կարճ : Այն քարը, որից կտրումեն քարետախտակը  
ասկումէ շիֆերի քար կամ յասպիս, որ գտնվումէ  
լեռներում : Նրան այն տեղից ձեռք բերելու համար  
լեռներումը փոսեր և հորեր են փորում : Այս գոր-  
ծով պարագումնեն հաեքահանները : Շիֆերը պո-  
կումնեն սալ սալ և հարթումնեն : Ցետոյ այս  
քարետախտակի չորս բոլորով ատաղձագործը շրջանակ  
է շինում եղենի ծառից : Արանից յետոյ քարետախ-  
տակը ծախումնեն խանութիւներում : Ծնողները քա-  
րետախտակը գնումնեն իրանց որդոց համար : Երեւ-  
նաները քարետախտակները տանումնեն ուսումնաւ

մասն է , միջինը — բունը , իսկ ներքեմնը գրչի սուը  
ծայրը : Գրչի վերին մասը բաղկանումէ փետրակնե-  
րից կամ բմբուլներից , որոնք դասաւորված են բնի  
երկու կողմիցը . այս վետրակները մի կողմից աւելի  
երկար են քան միւս կողմից . փետրակները առհա-  
սարակ սպիտակ են լինում :

Բունը լինումէ պսպղուն , կիսաթափանցիկ և  
կլոր . նրա միջումը երեսումէ զրչի միջուկը :

Այս փետուրը սագի թեկիցն է պոկած , այս  
սուգի փետուր է և , ինչպէս երեսումէ , այս վետուրը  
սագի աջ թեկիցն է պոկած : Սագը ջրի թռչուն  
է : Թեկրը նրա համար են , որ թռչունները կարո-  
ղանան թռչել : Այս վետուրը թեկի փետուր է : Այս  
փետուրով կարելի է զրել և սորա համար էլ աս-  
վումէ փետուր — Գրիչ : Բայց սրանով զրելու հա-  
մար հարկաւոր է առաջ պատրաստել , որովհետեւ  
թեկից պոկած նոր փետուրը վափուկ է լինում և  
աւելացրդ թաղանթով ծածկուած : Փետուրը զոր-  
ծածելու համար առաջ փոքր ինչ տաքացնումէն  
կրակի վերայ , յետոյ մահուտով տրորումնն  
է : Այս կերպով սպատրաստած վետուրից գրիչ են  
շինում . սորա համար բարսկ և սուր դանակով  
(գըշահատով) կտրումնն նրա գլուխը , յետոյ ճը-  
զում և սրումնն նրա ծայրը : Եթէ այսպիսի գրիչը  
բռնես աջ ձեռի երեք մատներովդ , թաթախես թա-  
նաքում և յետոյ թղթի վերայ ման ածես , այն

բան , որ տեղ նրանց վերայ գրում և գծագրումնեն:  
Սորա համար գործ են դնում քարեգրիչը , որ նրա  
մանապէս ուրիշ տեսակ շիֆեր քարից են շինում:  
Երեխան քարեգրիչը բռնումէ աջ ձեռի երեք մատ-  
ներով ու քարետախտակի մակերեսոյթի վերայ գը-  
ծեր է քաշում : Այն ժամանակ քարեգրչից բա-  
ժանվումէ մանր , սպիտակագոյն թող , որ թողնում  
է քարետախտակի վերայ քսկող քարիգրչի հետքը:  
Եթէ քարետախտակը վերզցես , կը փշրի : Սորա  
համար էլ խելօք երեխաները քարետախտակի հետ  
զգոյշ են վարվում :

Ծանօթաբիշն : Համականալի է , ի հարկէ , որ ուսուցիչը չէ  
սպատամում երեխանցը ինչ որ վերել գրած է , այլ հարց  
ու սպատախտանների միջնորդութեամբ , այս բոլոր  
տեղեկութիւնները հաղորդումէ աշակերտներին : Միա-  
կերպութիւնը ձանձրացնումէ ամենաջանաւուէր աշա-  
կերտներին : Թոյլ և բթամիտ աշակերտներին պէտք է  
հարկագրել , որ մէկ մէկ ցոյց տան այն առարկա-  
ների մասերը , որոնց վերայ խօսումէ , առաջարկելով  
այսպիսի հարցեր : Ցոյց տուեք ինձ քարետախտակի  
այն կողմը , որ աւելի երկար է : Ո՞ւն է նրա աջ կողմը .  
ո՞ւն է ձախը և այն :

#### 10. Դ Բ Ի Զ (Փ Ե Տ Ո Ւ Ր ) :

Փետուրը երեք մասերից է բաղկանում . վերին ,  
միջին և ներքին . զրչի վերին մասը նրա վետրաւոր

Ժամանակ կը նշմարես բարակ և հաստ, մէծ և  
փոքր, ուղիղ և ծռող գծեր:

Հարյել խօսեցութեան համար: Խնչի՞ համար այս դրիչը  
անուանվումէ սազի դրիչ: Խնչու կոչվումէ դրիչ:  
Ո՞ր կենդանիները վետուքներ ունին: Անուանեցէք  
ձեր տեսած թռչուններից մի քանիսը:

11. Գ Ր Զ Ա Հ Ա Տ :

Այս փոքրիկ դանակը գործ է ածվում դրիչ  
կտրելու համար և այս պատճառով կոչվումէ գր-  
չուկար:

Գրչահատը բարկանումէ երկու դլխաւոր մա-  
սերից, կոթից և բերանից:

Գրչահատի բերանը երկու կողմ ունի. մինը  
— ետևինը հաստ է և բութ, միւսը — առաջինը  
բարակ է և սուր:

Երբ որ ուզումեն գրչահատով դրիչ կտրել,  
գրչահատի կոթը բռնումեն աջ ձեռով, իսկ դրիչը  
ձախ ձեռով, և այդպէսով ձեղքում և կտրումեն  
դրիչը:

Կոթը շինած է երկաթից և դրսից պատած  
եղան եղջերով կամ ձիու սմբակով: Գրչահատի  
բերանը շինած է երկաթից: Գրչահատը գործ ա-  
ծելուց առաջ հարկաւոր է նորան քարի վերայ սը-  
րել, որ կոչվումէ յեսան (սրոց):

Գրչահատը պէտք է զգուշութեամբ բանաց-  
նել, թէ ոչ կարող ես մատներդ կտրել:

12. Թ Ա Դ Ա Ք (ՄԵԼԱՆ):

Թանաքը գրելու համար է: Թանաքը հեղուկ  
է և հոսումէ, եթէ նրան թափես: Եթէ գրիչդ  
թաթախես թանաքի մէջ, դրչի վերայ կը մնայ թա-  
նաք: Եթէ գրիչը խոր թաթախես թանաքի մէջ, նո-  
րա մի մասը կը գնտահի կամ կաթիլի ձեռով կը  
թափի կը լից թղթի վերայ և լաքայ կը թողնէ:  
Շի կամ մի ուրիշ ամանի մէջ լրած թանաքը  
հաւասար կամ հորիզոնական մակերևոյթ է ու  
նենում:

Հասարակ թանաքը սե է լինում, բայց կայ և  
ուրիշ գոյնի թանաք: կարմիր, կանաչ, կապոյտ և  
այլն: Լաւ թանաքը պէտք է բոլորովին սե լինի, ինչ-  
պէս ածուխը, ագռաւի թեր: Վատ թանաքը շատ  
սե չէ և բաց դոյն է ունենում:

Ինութիւնը պատրաստ թանաք չէ տալի: Մար-  
դիկ թանաքը շինում կամ պատրաստումեն կիսու-  
րից, արջասպից (զաղ), քայցախից և ջրից: Ուրեմն  
թանաքը բնութեան արդիւնք չէ, այլ արհեստի:  
Թանաքը ածումեն վոքր ապակիէ ամաների  
մէջ, որոնց թանաքաման են ասում:

13. Թ Ա Ն Ա Ք Ա Մ Ա Ն :

Այս ամսին թանաքաման են ասում: Ահա սորա մասերը . վերին մասը կամ թանաքամանի բերանը , միջին մասը , որի մէջ թանգըն է լինում , և թանաքամանի յատակը : Թանաքը ածումն թանաքամանի մէջ նորա բերանով և յետոյ խցանով բերանը ծածկում են , որ թանաքի մէջ թող կամ ուրիշ բան չընկնի և չ'թափուի , եթէ յանկարծ թանաքամանը շուռ ընկնի :

Թանաքամանը յատակով գրած է սեղանի մաս կերեցիթի վերայ: Թանաքը յետ ածելու համար , թանաքամանը թեքումն կողքի վերայ կամ բոլորովին շուռ են տալիս :

Ահա այս թանաքամանը կըր է: Առ շինած է ապակից և մանր աւազի հետ խառնած կաւից: Կաւը մի տեսակ հողէ , որ զանգումէ երկրադնափ մակերևոյթի վերայ: Բրուտը , ջրով լուանալով , կաւը մաքրումէ , շաղախումէ մանր աւազի հետ , յետոյ մի առանձին գործիքն (գաղգահի) վերայ կըր ձեւ է տալիս նորան , բայց օդումը ցամքացնումէ և վերջապէս այրումէ մեծ և սաստիկ տաքացրած վըռան մէջ :

Թանաքամանը դիմացկուն չէ , շուռովէ կոտա լվում և սորա համար էլ թանաքամանը պէտք է

զգուշութեամբ բանացնել: — Ի՞նչպէս են կոչվում այն ամանները , որոնց մէջ պահումն ջուր , գինի , եղ , կաթը , պամիր և այլն :

14. Թ Ո Ւ Ղ Թ :

Այս թուղթը սպիտակ է: Թուղթը լինումէ նոյնպէս կապաւտ , մոխրագոյն , դեղին , կարմիր և այլն: Թուղթը բարակ է , հարթ , կիսաթափանցիկ , բայց դիմացկուն չէ , հեշտ է պատռվում: Թուղթը նորա համար է , որ նորա վերայ գրեն ու զծագրեն , նորա մէջ փաթաթեն զանաղան առարկաներ և այլն :

Թղթի վերայ կարելի է գրել գրով ու թանաքով , կամ մատիտով . գծագրել կարելի է նմանապէս գրչով , մատիտով կամ ու կաւիճով: Մատիտների և կաւիճների ծայրերը հարկաւոր է ուրեւ , որ կարելի լինի նրանցով գրել ու գծագրել:

Թուղթը շինումն հին ու անսկտք կտաւի կտորաանքներից: Կտաւի կտորտանքները ժողովում են և տանում թղթի գործարանները: Գործարաններում կտաւը քրբքումն և ծեծում , յետոյ եւ փումն և մաղից անց են կացնում , յետոյ այս թղթի խիւոը չորացնումն և նրանից շինումն թերթեր: Թուղթը ծալումն միասին առաս-ասսը

թերթ կամ օդմա—օդմա և յետոյ ծախումեն: Զանասնէթ աշակերտները թղթից սովորաբար տետրակներ են կարում իրանց համար և մաքուր պահում:

15. Գ Ի Ր Ք :

Ահա այս գիրը է: Գիրը երկու մասից է բարկանում՝ արտաքին և ներքին: Ներքին մասը բուն գիրըն է. իսկ արտաքինը գրեի կազմը: Գրեի արտաքին մասը կամ կազմը քարտոնից է շինած և գունաւոր թղթով պատճ: Ներքին մասը բաղկանումէ թղթից, որի վերայ սև տառեր են տպած: Գրեի ներքին մասը բաղկացած է երեսներից և թերթերից: Այս գիրը քառանկիւնի է: Նորա առաջի մասի վերայ մենք նկատում ենք չորս անկիւն և երկու կողք. — Ներքին և վերին մասերը չորս—չորս անկիւններ և երկու երկու կողքեր ունին: Յետևի մասի վերայ կապած է գրեի կազմը: Գիրը կարելի է դնել մի տեղ, պարկացնել և կանգնայնել, նորան կարելի է ձեռին բռնել, մի տեղից միւս տեղ տանել, բաց և խուփ անել, կարդալ ինչ որ նորա մէջը զրած է:

Գիրը շարադրում է հեղինակը, ապումեն տպարաններում և կազմարաններն էլ կազմում են:

Ներք. Մինք մինչև հիմա խօսեցինք 12 առարկաների վերայ, որոնք են դուռ, լուսամուտ, վառարան, սեղան, քարետախտակ, զրիչ զրչանատ, թանաք, թանաքաման, թուղթ և գիրք: Այսպէս հարկաւոր է մանրամասնաբար քննել դասատան մէջ զտնուած միւս առարկաներն էլ. զորօրինակ պատի քարտէղները և տախտակները, կափճը, սպանդը և այլն, իրան ուսուցչին է մուսմ ընտրել այնպիսի առարկաներ, որոնք տեղական յարմարութիւններով կամ ուսումնարանի և աշակերտաների համար առանձին նշանակութեամբ և ընտրութեամբ աւելի մօտ են: Յայտնի բան է, որ կրթութիւնը ինքը ցոյց կը տայ խղճմտանքով ու մտածող ուսուցչին և այնպիսի օդտաւէտ վարժութիւններ, որոնք յիշված չեն դասազրելու մէջ: Յիշենք այս տեղ այդ տեսակ կրթութիւններից մի քանիսը.

1. Շատ օդտաւէտ է հաղորդել աշակերտաներին տեղեկութիւնների մի ամբողջ շարք: Այսպիսի տեղեկութիւնները շատ հեշտ է մաքումը պահել, այնպէս որ մինչև անգամ ամենաթոյլ և բթամիտ աշակերտներին կարելի է այսպիսի տեղեկութիւններով ուսուցանել կազմով խօսել, զորօրինակ.

Յատակը սենեակի մասն է:

Օճոռքն էլ նմանապէս սենեակի մասն է:

Յատակը և օճոռքը սենեակի մասելն են:

Դուռը պատի մասն է:

Լուսամուտն էլ պատի մասն է:

**Դուռը և լուսամուտը պատի մասիրն են:**

**Յատակը սենեակի մասն է :**

**Սենեակը տան մասն է :**

**Լուսամուտի շրջանակները լուսամուտի  
մասերն են :**

**Լուսամուտը պատի մասն է :**

**Պատը տան մասն է :**

2. Օդտաէտ է նմանապէս հաղորդել երեխաններին այն  
պիսի տեղեկութիւնների շարք, որոնք ցոյց են ոռակու  
առարկանների սեռը, էութիւնը և փոխադարձ յարաքերու  
թիւնները. Զոր,

**Վառարանը պատկանումէ սենեակին:**

**Վառարանները պատկանումէն սենեակներին:**

**Դանակը դորջիք է :**

**Թանաքամանը ապակիէ անօթ է :**

**Կաղմարարը արհեստաւոր է :**

**Արհեստաւորը մարդ է . և այլն :**

**ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ**

ՆԱԽԸՆԹԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԵջ ՆԿԱՐԱԴՐԱՅ Ա-  
ՌԱՐԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ ԵԻ ԶԱՆՈԶԱՆՈՒ-  
ԹԻՒՆԸ :

ԵՇԱԿԱՐԱ-ԵՒՆ: Այս վարժութիւնները պէտք է լինին կա-  
տարեալ ձևով. ուսուցիչը տալիս է երկու կամ քա-  
նիմի առարկանների անուններ, որոնք պէտք է մէ-  
մանց հետ համապատասխան համեմատվում  
են միմեանց հետ իրանց սովորական արտաքին յատ-  
կութիւններով, այնպէս որ համեմատութիւնից խոկոյն  
երեսումէ նրանց մէջ եղած զանազանութիւնը. Երե-  
խաններից պահանջումն առարկանների այն յատկա-  
նինները, որոնք արդէն յայտնի են նրանց նախընթաց  
վարժութիւններից. Եթէ երեխանները խոկոյն չգտ-  
նեն այն յատկանինները, որոնք երկու համեմատելի  
առարկաններին յատուկ են, կամ նոցա էական զանա-  
զանութիւններն են ցոյց տալիս, այն ժամանակ ուսու-  
ցիչը աշխատումէ հարցերով նրանց ուշադրութիւնը  
դարցնել այնպիսի յատկանինների վերայ. Այն բա-  
ռերը, որոնք այս միանման, կամ տարբեր յատկա-  
նինները արտապայտումն, պէտք է շնչառեալ հնչվին,  
որովհետեւ նկատողն ուսումն է և պէտք է լինի ք և նոյն  
ժամանակ. Տպածողաւեւոն և խօսուցութեան ընթաւեւոն. Այս  
վարժութիւնների ժամանակը մանաւանդ պէտք է  
աշխատած պահպաններ աշակերտների ուշադրութիւնը  
կենդանի խօսակցութեամբ.

¶. ԴԱՍԱՏԱՆ ՏԱԽՏԱԿԱՄԱԾԸԸ ԵՒ ՍԵՆԵԱԿԻ ԴՈՒՐԸ<sup>1.</sup>

Դասատան տախտակամածը քառանկիւնի է, դուռն էլ քառանկիւնի է: Տախտակամածն էլ, դուռն էլ ունին չորս-չորս կողմեր և չորս-չորս անկիւններ: Տախտակամածը երկայնաձեւ է, դուռն էլ նմանապէս երկայնաձեւ է. տախտակամածի և դրան երկայնաթիւնը լայնութիւնից աւելի է: Դրան վերայ երկաթ կայ, նոյնպէս տախտակամածի վերայ (կողպէք, մեխեր և այլն): Դուռն էլ, տախտակամածն էլ երկաթով և անդայնում: Տախտակամածը դրնից լայն է և երկայն դրան մակերեսոյթը տախտակամածի մակերեսոյթից փոքր է: Դուռը սպիտակ գոյն ունի, տախտակամածը դեղին: Տախտակամածի վերայ կարելի է մանգալ, իսկ դռնով անցնել: Դուռը կարելի է բաց ու խուփ անել, շարժել, իսկ տախտակամածը ոչ: Դուռը կանգնած է ուղղահայեաց կերպով, տախտակամածը սպարկած է հօրիզոնական կերպով: Դուռը տախտակամածի վերայ է, իսկ տախտակամածը դրան տակն է: Այն ծառերը, որոնցից շինելն դուռ և տախտակամած, բուսելն անտառում, կտրուել են և աղոցվել դրան և տախտակամածի համար տախտակների ձեռվ: Երկաթը

1 Այն տեղ, որ անդ տախտակամած չկայ, կարելի է դուռը համեմատել օճռքի հնա, իսկ եթէ այդ էլ անյարմար կը վճի, ինքը ուսուցիչը կարող է վերցնել երկու առ իշտ առարկաներ:

տախտակամածի և դրան համար՝ երկաթագործն է ծեծում: Տախտակամածն էլ, դուռն էլ սենեակումն են գոնվում: Դուռը սենեակի մասն է, տախտակամածն էլ նրա մասն է: Երկուսն էլ սենեակի համար անհրաժեշտ են: Առանց դրան անկարելը կը լինէր սենեակը մտնել, առանց տախտակամածի անյարմար կը լինէր սենեակումը մանգալ, և նատելիս մարզուոնները շուտ կը մրսէին: Առանց դրան և տախտակամածի սենեակը բնակութեան համար անյարմար կը լինէր: Փոշին (թօղ) նստումէ և մնում դրան ու տախտակամածի վերայ:

¶. ՍԵՊԱՆ ԵՒ ՇԻՖԵՐԻ (ՔԱՐԵ) ՏԱԽՏԱԿԻ:

Ա. Համանման յատկանիշներ (Կմուտ-Ելեմ):

Սեղանը գոնվումէ ուսումնարանումը, շիֆերի տախտակն էլ նոյնպէս ուսումնարանումն է գոնվում: Սեղանն էլ, տախտակն էլ գոնվում են այս սենեակումը: Սեղանն էլ, տախտակն էլ մարզիկ են շինել, երկուսումն էլ վայտ կայ: Սեղանն ունի երկայնութիւն, լայնութիւն, բարձրութիւն և հաստութիւն: Քարետախտակն էլ ունի երկայնութիւն, լայնութիւն և հաստութիւն: Սեղանը բառանկիւնի է, տախտակն էլ քառանկիւնի է: Սեղանն էլ, տախ-

տախն էլ երկայնութիւնով աւելի են քան թէ լայ-  
նութիւնով։ Խնչպէս սեղանի, նոյնպէս և տախտակի  
երկու հակառակ կողմերը միմեանց հաւասար են։  
Թէ սեղանի վերայ և թէ տախտակի վերայ կարելի  
է զրել։ Թէ սեղանը և թէ տախտակը կարելի է  
կոտրել, կառո-կտոր անել։ Երկուսն էլ մշտական չեն.  
Նրանք ժամանակով շինած են, և մի ժամանակ էլ  
կ'անհետանսան։ Երկուսն էլ յաւիտենական չեն, և  
օրէց-օր հնանումեն։ Սեղանն էլ, տախտակն էլ  
կեղտուավումեն և երկուսն էլ կարելի է ջրով լուա-  
նալ։

Ա. Անհանու յարիտիշներ (լահապահութեան)։

**Սեղանը** բոլորը փայտից է շինած, իսկ քարե-  
տախտակի միայն մի մասն է փայտից շինած, նրա  
մեծ մասը քարից, շիֆերից է շինած։

**Շիֆերի** տախտակը աւելի հեշտութիւնով կա-  
րելի է ջարդել, կոտրել քան թէ սեղանը։ Սեղանը  
շիֆերի տախտակից ամուր է։ Ողջ սեղանը ատաղ-  
ձագործն է շինել, լայց շիֆերի տախտակը, բացի  
ատաղձագործից, շինելէ և քարտաշը։ Սեղանը ու-  
նի չորս ոտր և արկղ. տախտակը ոչ արկղ և ոչ  
տանիք ունի։ Սեղանը կանգնած է, շիֆերի տախտակը  
պարկած։ Երբեմն շիֆերի տախտակը մեխից կախ են  
տալիս, սեղանը երբէք կախ չեն տախտի։ Սեղանը շիֆերի

տախտակից աժան է։ Սեղանը երա համար է, որ  
նորա վերայ զանազան բաներ դնեն, իսկ շիֆերի  
տախտակը նրա համար է, որ նորա վերայ գրեն և  
գծագրեն։ Երբեմն շիֆերի տախտակը դնումեն սե-  
ղանի վերայ կամ արկղ մէջ։ Սեղանը երբէք շի-  
ֆերի տախտակի վերայ չեն դնում։ Սեղանը մեծ և  
ծանը է շիֆերի տախտակից։ Սեղանը կարելի է այ-  
րել, շիֆերի տախտակը բոլորը չէ կարելի այրել։

Ա. Անհանու յարիտիշներ։

**Թուղթը** սպիտակ է, թանաքը սև է։ Թանաքը  
հեղուկ է, թուղթը հեղուկ չէ, այլ կարծը մար-  
մին։ Թուղթը սեղանի վերայ է դրած կամ զրբի  
մէջ։ Թանաքը թանաքամանի կամ շշի մէջն է ա-  
ծած։ Թանաքով թղթի վերայ գրումեն։ Գրիչը  
թաթախումեն թանաքումը և այս դրչով դրումեն  
թղթի վերայ։

**Թանաքը** թաց է, թուղթը չոր։ Թուղթը շի-  
նումեն հին ու անպէտք կտաւներից, թանաքը ու-  
րիշ նիւթեղէններից։ Թուղթը շնուռմէ թղթի  
գործողը, թանաքը շինումեն ուրիշ մարդիկ դե-  
ղանոցում։

Բ. Համանման յարկուիշներ:

**Թուղթն էլ, թանաքն էլ իրեր, մարմիններ են:**  
 Նրանք մի յայտնե տեղ կամ տարածութիւն են բռնում: Նրանք գրելու համար են և գրութեան առարկաներ են, նրանց մարդիք են պատրաստում: Թուղթն էլ, թանաքն էլ կարելի է տեսնել և շօշափել:

**Այսպէս էլ կարելի է համամատել դուռն և լուսամուտը, գրիչը և գրչահատը, թանաքամանը և գիրքը և այլն, Աննման յատկանիշների զանազանութիւնը աւելի հեշտ է նկատվում, քան թէ համանմաններին, սորա համար էլ աւելի լաւ է պահանջել երիխաններից, որ նրանք առաջ դանեն առարկաների զանազանութիւնները, իսկ յետոյ նմանութիւնները, Բայց փոփոխութեան համար կարելի է պահանջել, որ նրանք փոփոխակի զանեն երենմու աննման և երենմու համանման յատկանիշները:**

**Վարժութիւններից յետոյ քննած առարկանների անունները պետք է համեմատել իրանց տեսակի համեմատ, այսպէս. գուռը, լուսամուտը, վառարանը սենեակի մասն նն, որ նմանապէս տան մասն է, Շիֆերի տախտակը, գրիչը, գրչահատը դասական նիւթեր կամ դասական առարկաներ են. Շիֆերի տախտակը, գրիչը, քարեգրիչը, գրչահատը, թուղթը գրութեան առարկաներ են. Սեղանները, աթունները, գրասնղանները սենեակի կահ-կարասիք են. Այս բոլոր առարկաները մարդու աշխատանքով են զլուս բերած, ուրեմն մարդու արհեստի կամ աշխատու-**

**թեան պատուղներն են. Նրանք ողջն էլ տարածութեան մէջ մի որոշեալ տեղ են բռնում, բոլորն էլ մարմիններ կամ իրեր են. Մհնք կարող ենք նրանց տեսնել և շօշափել:**

**Սրանից յետոյ կարելի է երիխաններին հակառակ հարցեր տալ. զոր, յիշած առարկաններից որո՞նք են սննեակի մի մասը կազմում: Որո՞նք են զրութեան առարկանները, Որո՞նք են շննած երկաթից, քարից, փայտից և այլն: Որո՞նք են առաջնազարդի շննածը, որո՞նք հիւսի, որո՞նք քարտաշի և որո՞նք երկաթադորի:**

**Այսպէս էլ կարելի ցոյց է տուած առաջն երկու վարժութիւնների մէջ, կարելի է քննել և որիշ առարկանները, որո՞նք դասատանում չկան, բայց ուստցիչը կարող է նետը դասատոն երել, ինչ պէս զանազան հողագործական և անտեսական մեքնաններ, անօթներ և այլն:**

द्वारा उत्तराधिकारी द्वारा नियमित रूप से अनुसन्धान किया जाता है।

## ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄ

## ԲԵՐԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԻՉԸ

### ԱՐԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

## ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ :

Այսիւընթաց վարժութիւնների բոլոր առարկաները  
միաձև և պարզ էին, սորա համար էլ դժուար չէր  
հասկանալ և ըմբռնել նրանց էութիւնը, որոշիչ  
յատկանիշները և բաղկացուցիչ մասերը : Այս վար-  
ժութիւնների միջոցով երեխանների դիտողական ըն-  
դունակութիւնը այն աստիճան կարող էր զարգանալ  
և ոյժ ստանալ, որ հիմայ արդէն կարելի է հարկա-  
զրել նրանց քննել և դիտել աւելի բաղադրեալ ա-  
ռարկաններ : Այսու ամենայնիւ խօսակցութիւնների  
համար հարկաւոր է ընտրել այնպիսի առարկաներ,

որոնք կարող են աւ ելի հետաքրքրական երևալ երեխաների համար : Այսպէս են այն առարկաները, որոնք երեխաների ապրած շրջանումն են գոնվում, հետեւաբար և ծանծթ են նրանց, այն աւարկաները, որնց երեխայքը կարող են ակենել և դիտել ոչ միայն ուսումնաբանում, այլև ուսումնաբանից դուրս : Առ հասարակ ուսուցիչը պէտք է ցոյց տայ երեխաներին այն առարկան, որի վերայ կամենում է խօսել : Անհրաժեշտ հարկաւոր է, որ երեխաները իրանց արտաքին զգացյարանքների միջնորդութեամբ ընդունեն և ըմբռնեն ամէն մի առարկայ, նրա ամէն մի յատկութիւնը և բաղկացուցիլ մասերը : Ում յայանի չէ սկզբնական պատմութիւնը և աննպատակ դատարկութիւնը, անօգտաւետութիւնը և աննպատակ դասատրութիւնը լոկ բառացի բացատրութիւնների միջնորդութեամբ, առանց շօշափելի կերպով ծանօթացնելու երեխաներին այն առարկաների հետ, որոնց մասին խօսվումէ :

Աւրեմն բնական պատմութեան ո՞ր առարկա  
ները ամէնից յարմարաւոր, հետեւաբար և օգտա-  
ւեա են վերոյիշեալ նպատակին հասնելու համար:—  
Յայտնի բան է՝ ըստանի կենդանիները : Նրանք արդէն  
փոքր ինչ ծանօթ են երեխաներին ամէնօրեայ կետ-  
քից . բայց երեխաների այս ծանօթութիւնը հարե-  
ւանցի է : Այս կենդանիների էական և որոշիչ յատա-  
կանիշները և յատկութիւնները գեռ երեխաներին

ըստ մեծի մասին յայտնի չեն, երեխաների դիակելու  
ընդունակութիւնը աղեղ քիչ է գարդացած և այս  
սկածառառվել նրանք իշանց ուշազրութիւնը չեն  
դարձել այժմանսպանութիւնների վերայ: Սորա հետ  
էլ կենդանիները երեխաների մասնագութեանն համար  
մին առանձին գրաւից գօրութիւն ունին: Դաստիա-  
րակը պէտք է օգուտ քաղէ երեխաների այս բնա-  
կան հակումից և հետաքրքրութիւնից դէպի կեն-  
դանիները և գործ դնէ իրան մանկավարժական նր-  
պատակների համար, Աւուուցիչը, վերցներով մի ն-  
պանի չէնդանի, իրեւ խօսակցութեան նիւթ երեխայի  
միաքը զարգացնելու համար, ել հարկաւորութիւն  
չեն ունենալ զրգուելու երեխաների ուշադրութիւնը  
և աշխատափութիւնը: Երեխաները առանց մի որ  
և իցէ արտաքին զրգման և ստեղծական միջոցների  
պատրաստ են մեծ յօժարութեամբ լսելու նրան, որ  
ամէն ուսման յառաջադիմութէան ամենազիաւոր  
պայմանն է:

Բայց խօսակցութեան ժամանակ ուսուցիչը  
ինչպէս պէտք է ցոյց այս երեխաներին ընտանի կեն-  
դանիները: Յայտնի բան է որ ամէն ժամանակ յար-  
մար չէ բերել դասառուն չէնդանի ընտանի անսառունը,  
թէ և երբեմն այդ էլ հարկաւոր է: Փոքրիկ շուն և  
թռչուն ամէն անդ հեշտութիւնը կարելի է ձեռք  
բերել և ցոյց առաջ երեխաներին դասառան մէջ:

Խրառութիւնիր ուսուցիչը կարող է օլուստ քաղել այն  
գանգերից և ուկորներից, որոնք ամեն անդ կա-  
րելի է դանել և որոնց ինքը բնութիւնը դեղեցիկ  
կերպով մաքրել է մէից և կաշուց: Ամանապէս հար-  
կաւոր է դասառան մէջ ունենալ դշներով ներկած  
կենդանիների պատկերներ: Մեծ դիրքով: Երեխաները  
սիրում են առ հաւարակ ոյս աեռակ նկարները զիշ-  
ակել և պննել: Այդպիսի պատկերներ հիմոյ բաւա-  
կան առքան կարելի է դնել: Աւելի լաւ կրյիներ, ե-  
թէ ինքը ուսուցիչը կարողանար դժագրել իրան  
դասառան համար այսպիսի պատկերներ այն գիրքով,  
որ աւելի յարմար է զանում իր նսկառակի և իրօ-  
սակցութեան առարկայի համար: Այս աշխատանքը  
ուսուցչի համար էլ շատ օդտաւէտ է, որ կծաղը-  
րելով կենդանու առուելազիրը, բոլորովին կարող է  
ուսումնակիրել նորա ձեւը: Վերջապէս հարկաւոր  
է յարդորել և սովորեցնել երեխաներին, որ նրանք  
մօտիկ նայեն իրանց տանը դանփող կենդանիների  
վերայ և յետոյ դասառանը պատմեն իրանց նկատու-  
զութիւնները: Այս միջոցները արդէն բոլորովին  
բաւական են, որ ընտանի կենդանիների վերայ եղած  
խօսակցութիւնները արդիւնաւոր լինին և այն մանա-  
կավարժական օգուտները առանց սպա-  
սում ենք: Տարակոյս չկայ որ այսպիսի ուսման օ-  
գուտը շատ աւելի մեծ է, քանի թէ այն որ պէտք  
է ստանայ երեխան երկարածիգ և մանրամասն պատ-

մութիւններից մի որ և իցէ Սիբէրիայի գետնափորուկի կամ ամերիկական թռչուն քննդօրի վերայ, որոնց երեխան երբէք չէ տեսել և չպէտք է էլ աեժնէ իր օրումը : Աենք յանձնում ենք, որ ուսուցիչները միանգամայն մոռաննան հին դաստիարակութեան եղանակը, և սկզբնական ուսումնա ժամանակը կամենային կանգունել զարգացնո՞ւ այն էկակ վերայ, որի վերայ գտնվո՞ւ են եւ բեկո՞ւնը : Այս պայմանով միայն կարող են նրանք հասկանալ այն բոլոր օդուանները, որ մենք սպասում ենք նկատողական և դիտողական դասատվութեան զարգացուցիչ եղանակից : Այն ժամանակ միայն ուսումնարանը կը լինի այն, ինչ որ պէտք է լինէր, երբ ոս բոլորն էն էտպատճի ողբրցակո՞ւ բոլոր բնագուցիչ փելեսքայութեաններից և նրանց բոլոր հին սովորութեաններից : Սիայն այն ժամանակ ուսումնարանը երեխանների համար ոհ ու ոռովի տեղ չի լինիլ, ինչպէս մինչև հիմայ եղել է : — Երկիւդի և ձանձրութեան փոխարէն, որոնք մինչև հիմայ տիրապետում էին ուսումնարաններում, երախանները կը գանեն այն տեղ ուրախութիւն և բաւականութիւն :

Եւ իրաւ, հարկաւոր է որ աշակերանները շատ պէին ուսումնարան իրանց բարի և խելօք ուսուցչի մօտ մի և նցն բաւականութիւնով և եռանդով, ինչպէս որ այժմ վազվզում են փողոցներում մանածող կապիկներին և արջերին աեսնելու համար : Այն ժամանակ ուսուցչի կոչումն էլ ծանր բեռ ու պատ

տիժ չի համարվիլ : Ընդհակառակն , այս պաշտօնը նրա համար բաւականացնեցիլ և հաճելի պարապամունք կը լինի :

Այս տեղ մենք ցոյց կը տանք մի քանի այնապիսի կենդանի խօսակցութիւնների օրինակներ ընտանի կենդանիների վերայ : Յայտնի բան է որ բոլոր ներքեւի զրածը միայն ուսուցչի համար է : Նա չըպէտք է երբէք սպակուլար հետևի մեր խօսակցութիւնների կարգին ու ձևին : — Բնական և կենդանի խօսակցութիւնը պէտք է բռնէ հնարովի և անբնական խօսակցութեան տեղ, որին հետեւումէ հին դասաավագութիւնը :

#### 1. Շ Ո Ւ Ն :

1. Ասիս և առաջ ուսուցիչը պէտք է պահնջէ աշակերտներից պառմել, ինչ որ գիտեն իշխանց ծանօթ կամ անծանօթ շան մասին : Ամէն մի երեխայ պէտք է պատմէ, ինչ որ իրան յայտնի է : Ուսուցիչը գարձնումէ երեխանց ուշաղը ութիւնը այն բանների վերայ, որ նրանք արդէն զիտեն շան մասին, բայց մնուացել են յիշել :

2. Արանից յետոյ ուսուցիչը ցոյց է տալիս եւ բեխաններին շան խրտուիլակը, իսկ եթէ այն չկայ, շան պատկերը մեծ ձեռվ : Ուսուցիչը ցոյց է տալիս

նմանապէս շան սկաւառակը, ոսկորները, կտմ նըրա  
խսկական կամ նկարած ողջ օսկրոտիբը (կմալսը) :

Յ. Ուսուցիչը պէտք է հարկագրէ երեխանցը  
մեծ ուշադրութիւնով զննել իրանց տեսածը :

Ա. Երբ երեխայքը վերջացնում էն հանդարա և  
ուշադրութիւնով խրտուվակի կամ պատկեր նայելը,  
ուսուցիչը պահանջում է նրանցից, որ իրանց ակա  
սածն ու նկատածը պատմեն : Աշակերտաները պէտք է  
առանձին առանձին պատմեն ինչ որ նկատել են,  
շախատառ առաջարկութիւնները և ուղղող արւայայտելով  
իրանց միարը, ոչ թէ կիսատ և մի քանի բառե-  
րով : Եթէ նախագառառութիւնը կիսատ և անպատճա-  
ճաւոր շեշտագրութիւնով է ասուած, այն ժամա-  
նակ ուսուցիչը ուղղում է պահանջում է երեխա-  
ներից մի և նոյն նախագառառութիւնը կրկնել, առաջ  
մէկ մէկ և յիտոյ բոլորը միտին (խորով) :

Յ. Եւ այսպէս երեխաները, զննելով պատկերի,  
խրտուվակի կամ օսկրոտիքի ամէն մի մասը առանձին,  
պէտք է իրանց նկատածը և տեսածը պատմեն  
ուսուցի առաջնորդութեամբ :

Ա. Կա՞ գլխաւոր հասելը :

Պալու, վլզ, բուն, պոչ և ոսներ :

Պալսի հասելը . սկաւառակ, գաղաթ, ճնկատ,  
ծործորակ, քունք, աչեր, քիթ, դունչ, բերան և ա-  
կանջներ :

Բայի հասելը . փոք, մշջք, կողեր, փորի ներքին

մասը, բնի առաջի և ետեի մասերը, մշջքի առաջին,  
միջին և յետին մասերը :

Ոգուերը և նրանց հասելը . առաջի ոսները և ետ-  
եի ոտները, աջ և ձախ առաջի ոտը, աջ և ձախ  
ետեի ոտը, ազգը, ոտի ներքին մասը կամ ներբան:  
Աւելանի հասելը . կրունկ, գարշապար, տաղան,  
մասներ և ուկորներ :

Պոչի հասելը . պոչի սկիզբը, միջին մասը և ծայրը:  
Աւելանի հասելը . յօնքերը, ներքին և վերին ար-  
աւանունք, բիբ :

Աւելանի հասելը . ականջակոնք և անկաջի ծակ:  
Քմեւ հասելը . քթի վերին մասը, քթի միջին  
մասը, քթի ծայրը և քթի ծակերը (ոռւնգները) :

Աւելանի հասելը . վերին և ստորին շրթունք, վե-  
րին և ստորին ծնօտ, բերանի առաստաղ, լեզու և  
ատամներ :

Յ. Այս հասելի տմէն մինչ աշխատէութիւնը :

Աւելքերով կենդանին տեսնում է, ականջներով  
լսում է, քթով հոտոտում է, լեզով և առաս-  
տաղով ճաշակում է, մարմնի ամէն մասերով շո-  
շափում է :

Աւելքերը, ականջները, քիթը, լեզուն և բերանը  
զգայանքի գործարաններն են : Այսպէս ուրեմն շունը  
ունի հինգ զգայարանք, տեսանելիք, լսելիք, հոտո-  
տելիք, ճաշակելիք և շօշափելիք :

Շունը ատամներով ծամում է կերակուրը, բե-

բանով հաշումէ, ուներավ ման է դալիս և վազում։  
Ոտները կոչվումն շարժման գործարաններ։

Պ. Ըստ իւթեարք։ Ըստ ուսումն միս, հաց, բանջարեղէն, մէկ  
խօսքով ամէն բան, որով կերակրվումէ մարդս։ Նրա  
սիրած կերակուրը հռոմ միսն է։ Շունը հառէր կեն-  
դանի է։ Նրա առաջին կարդի սուր առամները հեշ-  
տացնումն մաի ծամելը։

Պ. Ըստ յատկութեանը և Աէ ինչ օգոստ է պաշտ և առ  
տրդուն։

Ըստ շատ հաւատարիմ և հասկացող կեն-  
դանի է, նա սիրումէ մարդու ընկերութիւնը, ճա-  
նաչում և սիրումէ իր տիրոջը, հնագանդումէ նը-  
րան, լսումէ և պատրաստ է նորան պաշտպանել ա-  
մէն յարձակունքից։

Ընտանի շունը դիշեր և ցերեկ պահպանումէ  
իր տիրոջ առւնը։ Հիւսիսային երլիներում շներին  
շումն նիւաների տեղ։

Եատուս-Եիւն։ Այսու էլ հարկաւոր է զննել միւս ըն-  
անի չորտուանի կենդանիները, որոնք են կա-  
տու, ձի, կով, խող, ոչխար, այծ և այլն, ջննե-  
լով այս կենդանիների ամէն մինը առանձին, երե-  
խաների ոչազբութիւնը պէտք է զարձնել նորա այն  
յատկութիւնների վերայ, որոնցով մի կենդանին զա-  
նագանփում է միւս կենդանուց։ Հարկաւոր է ուշա-  
գրութիւն դարձնել նմանապէս նորա վերայ թէ ինչ  
օգուտ է տալիս մարդուն զննվող կենդանին, կամ

այն գործադրութիւնն միրոյ, որ մարդը անում է  
կենդանուց կամ նորա մասերից։ Մենք էլ հարկաւո-  
րութիւն չենք զգում այս տեղ լիովին նկարագրել կեն-  
դանիներին վերաբերեալ այս բոլոր խօսակցութիւն-  
ները։ Մենք բաւականանում ենք միայն համառօտ  
նրանց մի քանի աւելի էական յատկանիշները ցոյց  
տալով։

2. Կ Ա Տ Ո Ւ :

Կատուի դուխը և դունչը բոլորակ է, ականջ-  
ները սուր և ցցված են։ Գնչի վերայ գանվումն եր-  
կայն և կոշտ բեխի նման մաղեր։ Կատուի բունք  
զիւրածիդ է։ Վոչը երկայն և բրդոտ։ Ոտները կարճ,  
իւրաքանչիւր ոտների վերայ կան հինգ հինգ մատ-  
ներ։ Մատները վերջանումն մի մի շարժանան, սուր  
և հառ չանկերով (մազիներավ)։ Կատուն իրան չան-  
կերը կուչէ ածում և մանգալիս պահումէ իր փա-  
փուկ թաթերի մէջ, որ չը բժիշանան։ Կատուի ատամ-  
ները սրածայր են։ Կատուն նառէր և գեղագուշ կեն-  
դանի է։ Նա բոնում և ուտումէ միներին, ու-  
հանդումը թռչուններ է որսում։ Կատուն իր որսերին  
աննշմարելի կերպով մօտենումէ և զարմանալի ճար-  
տարութեամբ բռնումէ նրանց։ Առհասարակ կա-  
տուն յայտնի է իր խորամանկութեամբը, խարդա-  
խութեամբը և ճարպիկութեամբը։

Յ. Զ Ի :

Չիու հարժի հասելը . զլում , վիզ , բուն , չորս  
ոտներ և պոչ : Զիու զլուխը երկայն է և զեղեցիկ .  
զիսի վերայ կան երկու ցից ականջներ , որոնց մէջ  
գտնվումէ մի փունջ , երկու աչքեր . դռւչչ վերայ  
երկու ուռւդ : Զիու վիզը դիւրաթեք է . զիս վերայ  
կայ բաշ : Նրա բունը երկայն է . ոտներն էլ նմանաւ  
պէս երկայն են : Եղունգների տեղ ձիու ոտների վերայ  
գտնվումէ մի պճենդ (սմբակ) : Զին մի ոճշտնի կենդանի  
է : Զին ունի երկար և գեղեցիկ պոչ : Զիու պոչի  
մազերը սկսվում են նրա արմատից : Զիու առաջնին  
ատամները շատ սուր չեն , միւսները լցնին և տառ  
փակ : Զին զեղեցիկ կենդանի է , ուժով , արթուն ,  
յանդուզն , հսկարա և հաւատարիմ : Զին ուտումէ  
խոտ , յարդ (դարման) , դարի , խրիուկ : Զին միս  
ամենեին չէ ուտում , սորա համար էլ նրան խռովու  
ներ կենդանիների կարգումն են դասում : Զին շատ  
օդուտ է տալիս մարդուն : Մարդը նրա վերայ նաւ  
տումէ , նրանով բեռն է կրում և լծումէ սայ-  
լում : Զին բանացնում են հանդում և գործ են զը-  
նում պատերազմների մէջ : Զիու կաշին գործ են զը-  
նում ոտնամաններ կարելու համար . իսկ պճեղնե-  
րից շմառմէն զանդան մանր իրեղններ : Պոչի  
մազերը գործ են զնում աթոռների և դոշակների  
համար : Զիու միսը համովէ և շատ լուսաւորեալ

նրկներում ուառում են , ինչպէս կովի ու եղան միսը :  
Զին ծնումէ կենդանի բագեր . ձին իւնդառածնէ և ա-  
ռաջնին ժամանակ կաթունէ կերակրում իւր քումակ-  
ուաջնին ժամանակ կենդանի է : Զիու մարմինը  
ներին : Զին ընտանի կենդանի է : Զիու մարմինը  
ծածկուած է խիտ մազերով : Զիանը վինում են զա-  
հազան գոյնի . սպիտակոյն , կապուտ , շէկ  
և չալ :

Ա. Կ Ո Վ Ե Խ Ե Զ :

Կովը և եղը վերին ծնութի վերայ առաջնին ատամ-  
ներ չունին : Նրանց ատամները լայն են և տափակ , որ  
հեշտութեամբ կտրողանան խոտը ու գարմանը ծամել :  
Կովը ու եղը չորս ոտնանի կենդանիներ են . նրանք  
իւրաքանչիւր ոտի վերայ երիտ պճեղ ունին : Նը-  
րաքանչիւր վերայ դանդումնեն երկու կեռ կեռ և  
որածայր եղջիւրներ : Եղջիւրների մէջը դատարկ է :  
Եղջիւրներով կովը ու եղը լրանց պաշտպանում են :  
Եղջիւրներով կովը ու եղը լրանց պաշտպանում են :  
Կովը միանգամայն չէ ուտում խոտը , նա դեռ փոքր  
ինչ ծամում , կլորումէ բերանում և կուլէ տալիս ,  
յետոյ կրկին ծամումէ — որոճումէ : Սորա համար էլ  
այս կենդանիներին ասում են որոճոյ կենդանիներ :  
Որոճոյ կենդանիների ստամբը բաղկանումէ չորս  
մասերից : Այս աեսակ կենդանիների էդին ատում են  
մասերից :

Հով, իսկ որձին — ցուլ : Արանց ձագերին ասում  
են հորթեր : Իսկ մի տաքեկանին ասում են մազի,  
ջահէլ եղանը — աշառ, կովին — երինջ : Եղը լը-  
ծում են և զործեն ածում հողադործութեան հա-  
մար, նրան լծում են դութանում, չժում, ասյում,  
նրանով ծանր բեռներ են կրում : Կովը ծնումէ  
ձագեր (հորթեր), և նրանց կերակրումէ կաթնով :  
Կովի հորթերը ծնանկուն պէս կարողանում են ոտի  
վերայ կանգնել, ծծել իրանց մօր կաթը, տեսնել  
և շուտով մանդալ : Կովը տաղիս է մարդուն կաթը:  
Եղը, կովը և հորթերը մօրթում են և նրանց միար  
ուտում : Նրանց կաշուից կարում են ոտնամաններ  
ու ուրիշ բաներ : Կովը և եղը մեծ ու փոքր եղջերուր  
և երկու պճառնի կենդանիների կարգումն են գասպում,  
և մարդու համար շատ օդապետեն :

Յ, Գ, Ա, Մ, Ե, Յ :

Պատմշն էլ, լնչպէս և եղը, չորքոտանի, ըն-  
տանի, խոտակեր, որո՛ծող, եղջիւրաւոր և երկու  
պճառնի կենդանինի : Նա կովից մեծ կենդանինի : Նը-

1 Կոմէը նկարագրելիս կարել է կրկնել մի ենոյն  
նկարագրութիւնը, ինչ որ եղան և կովի մասին առել ենք,  
միայն ուշադրութիւն դարձնելով այս յատկութիւնների  
վերաբերյալ :

բա մարմինի մասերը հաստ են : Աղջիւ ըները մեծ, կա-  
շին հաստ եւ թուխ զայնի, նրա մարմինը ծածկուած  
է լինում նօսր և թուխ մազերով : Գոմէշը ցուբա-  
շէ սիրում : Նա բնակլումէ ասք երկրներում : Գո-  
մէշի սլոչը երկար է և ծայրի վերայ կայ մի  
սպիտակ մազէ փունջ : Գոմէշի կաթը և մածունը  
եղալի, թանձը և համովէ լինում կովից : Գոմշի  
կաթնից շինում են կարագ, իւղ, պանիր և մա-  
ծուն :

Համար անձինչ անուան ունի Ա մարտի  
ման և Խ մարտի անձինչ անուան ունի Ե մարտի ման  
մանը և Զ մարտի անձինչ անուան ունի Ը մարտի մանը  
և Տ մարտի անձինչ անուան ունի Ա մարտի մանը :

Եշը իր կազմուածքովը և պՃեղովը ձիու նը-  
ման է : Խշի զլուխը երկայնաձևն է, ականջները եր-  
կար և շարժական են : Խշի զիտ վերայ կայ մի կարճ  
բաշ : Նրա մարմինը ծածկուած է կարճ, կաշ և  
մոխրագոյն մազերով . մէջքի վերայ երկու շիրտ  
(զօլ) կայ : Խշի պոչը կարճ է և վերջանսւմէ մի  
մազէ փունջով : Խշի ոտները կարճեն, ոտները վեր-  
ջանսւմ են մի պՃեղներով : Եշը մասղառնի կեն-  
դանինի : Խշի ատամները սուլ չեն, այլ տափակ :

Եշը ուտումէ խոտ, զարման, զարի և այլն : Եշը  
կաթնովէ կերակրում իրան քուռակին : Եշը չոր-  
քուսանի, խոտակեր, ընտանի և կաթնատու կենդա-

նի է : Նրանով բեռներ են կրում և շատ անդեր  
նրան թամբում են ունրա վերոյ նստում : Նրաւ մոր-  
թին էլ դործ են դնում, իսկ կաթը խմացնում են  
թոքայաւով հիւանդներին : Եշի միսը կարելի է ու-  
տել :

7. Ո Ւ Ղ Տ :

Ուղան էլ մեր ընտանի կենդանիներից մինչ է :  
Ուղափ զլուխը փոքր է . գունչը ոչխարի զնչի նման,  
ատամները սուր չեն : Ուղափ վիզը երկար և կեռտիկ  
է : Ուղափ բունը նմանապէս երկար է . մէջքը ծուռ  
և լայն : Ուղափ մէջքի վերայ կայ մի (կամ երկու)  
ստպառող : Ուղափ սոչը կարճ է , ոտները երկար :  
Նրա առաջի ոտների ծնկան վերայ կայ աւելամիս:  
Նրա ներբաննը ծանր է : Ուղար չորքստանի , խոտա-  
կեր , կաթնատու , ընտանի կենդանի է : Ուղուը օգ-  
տաւէտ կենդանի է մարդու համար : Ուղտին բար-  
ձում են ծանր բեռներ և մեծ քարվաններով ապ-  
րանքը մի աեղից միւս աեղ են տանում : Նորա բր-  
դից շինում են մահուդ և ուրիշ բաներ : Ուղափ  
միսը և կաթը ուտում են , իսկ կաշին գործ են զբ-  
նում : ոտնամանների համար :

Պահանջան մէ նաև 8. Խ Ո Զ . Ա յ օ ւ (ապահ) Ա յ օ  
Ճրայ և սէսան ցունարութիւն ան մէ<sup>1</sup>  
այդ Խոզի ղլուխը մեծ է և երկար , ականջներն էլ  
նմանաղէտ մեծ են , աչքերը փոքր , քիթը կամ  
գունչը երկար , խոզի գունչը վերջանում է կոլը  
կնճիթով : Նա իրան զնչով գետինը փորումէ:  
Խոզի ոտները կարճ են , իսկ պոչը կրկալածէ (օգա-  
ձէ , կեռացած) : Խոզի մարմինը ծածկուած է կոշտ  
մազերով : Խոզը պաշտպանվումէ զնչով և ատամ-  
ներով : Վայրենի խոզի ատամները ընտանի խոզի  
ատամներից երկար են : Խոզը ուտումէ կարտոֆիլ  
(գետնախնձոր) , ձարխալ , լորի , դարի , արմաներ  
և զանազան խոտեղիներ : Խոզը ուտումէ նմանա-  
պէս զանազան անմաքուր բաներ + պէտք է աշխա-  
տած , որ խոզը չուտէ այդպիսի վասակար բաներ,  
որպէս կետեւ խոզի միսը մարզը ուտումէ : Խոզը խոնաւ-  
ակեր է սիրում , նա սիրումէ թուլ գալ ցեխի և  
ալիսի մէջ :

Ընտանի խոզի որձը կոչվումէ վարալ , իսկ էղը  
մէրուն . ձագերին ասում են կոճեր :

Ընտանի խոզերին պարարտացնում են և ձմեռ-  
ները մօրթում : Խոզի միսը համովէ և մարզը ու-  
տումէ , նմանապէս ստպուստ արած : Խոզի միսը  
նմանապէս ջարդում են մանր աղ , վլփլիւ և ուրիշ  
համեմանքներ են ցանում և յետոյ աղիքների մէջ  
ածում : Այս տեսակ պատրաստածին ասում են երա-

շիկ (կալբաս) : Խոզի ջագարից շինում են սրբէներ։  
Կնչպէս ուրիշ կենդանիների այնպէս և խոզի  
զլնում կայ ուղել : Վկումը կան հմանապէս երկու  
խողովակներ . մինը շնչափողը՝ շնչառութեան համար,  
իսկ միւսը կռկորդը՝ հերթեռը ներա պահելու համար ;  
Բնի մէջը գտնվում են թօքեր, սիրտ, ստամոքս  
լուրդ, փիծեղ, երիկամոնք, աղիքներ, և այլն :  
Բոլոր մարմնովը անցնում են երակներ, որոնք լըք-  
ցուած են կարմիր արիւնով : Այս երակները դուրս  
են դալիս սրաից և էլք յետ սիրտն են մանում : Խոզի  
մորթելնս, գանակը կոխում են նրա սրաի մէջ, այն  
ժամանակ սրտից բոլոր արիւնը թափումէ և խոզը  
շնչահան է լինում : Խոզի արիւնը էտքից պահ և  
հեղաւէ է, բայց երբ մարմնից գուրս է գալիս, այն  
ժամանակ արիւնը սառչումէ և թանձրանում :

Խոզը ատամներով ուտելիքը ծամումէ և կուլ  
է տալիս. այս կերակուրը խողովակով անցնում, զը-  
նումէ ստամոքսը, որտեղ նա կականումէ և մար-  
փում. այս տեղից կերակուրը զնումէ բարակ աղիք-  
ները, որտեղ կերակուրի մնալաբ մասերը արիւն  
են դառնում, իսկ անմննդարանները կենդանին մարմ-  
նից գուրս է զցում : Աբիւնը թափումէ սիրտը և  
սրտից զնումէ մարմնի բոլը մասերը :

Գ. Ո Զ Խ Ա Ր Ե Ւ Յ Ց :

Ոչխարը ծածկուած է ու կամ սպիտակ բը-  
գով : Ոչխարի բուրդը երբեմն լինում է հարթ,  
երբեմն դանդուր, իսկ եղջեւը զանգան տեսակ է  
լինում : Նրա ոտները բարակ և երկու պղղանի են:  
Ոչխարը անգօր, վախկատ, բարի և յիմար կենդանի  
է : Ոչխարը մննդում է խոսով և սիրում է աղ :  
Մարդը նրանից ստանում է բուրդ, միս, կաթը և  
մորթի : Կաթնից շինումէն եղ և պանիր : Մոր-  
թուց կարում են գդակներ և ուրիշ բաներ :

Այծի եղջեւըները ծուռն են և կեռ, մօրուըը  
երկայն, պոչը կարծ և գէսի վեր ցցուած : Այծը  
երկու պղղանի կենդանի է. նրա մարմինը ծածկուած  
է երկայն մազերով : Այծը առանց գժուարութեան  
ման է գալիս բարձր և անհարթ տեղերում և ան-  
վախ վեր է լինում ամենաբարձր և զառիվեր ապա-  
ռամների վերայ : Նա թռչուող, ուրախ կենդանի  
է : Մեծ ախորժակով արածումէ խոսը, շաղկամը,  
տերեւները և այլն : Մարդը այծից ստանումէ կալմ,  
կաշի, մաղ, միս և ոյլ :

ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ :

Ընտանի կենդանիները զննելուց յետոյ կարելի է արդէն անվախ զննել և միքանի վայրենի կենդանիներ։ Հասկանալի է ի հարկ է, որ այս դէպքումն էլ հարկաւոր չէ։ Նղենել նկատողական ռւսումբց և պէտք է զննել այնպիսի կենդանիներ, որոնք արգէն փոքր ի շատէ իրանց անունով և բնութեամբ յայնին փոքր երեխանիներին։ Մի քանի վայրենի կենդանիներ ի հարկ է մեծ դժուարութեամբ կարուի է ձեռք զցել և մասնաւանդ գասատուն տանել, սորահամար էլ նրանց խրտութեակները և պատկերները կարող են լինել նկարագրութեան և խօսակցութեան առարկա։

Այս տեղ մենք կը նկարագրենք մի քանի վայրենի կենդանիներ։

10. Գ. Ա. Յ. 1.:

Գայլը արտաքին տեսքով բոլորովին շան նրա ման է։ Նրա դունչը սուր է, աչքերը ադահ և չար, ականջները ցցուած դէպի վերև, վիզը դըժուարաթեք և ուժեղ, պոչը կոտցած։ Նրա վրայի մազը կոշտ է և թանձր։ Մազն և բուրդը կենդանիներին ցրտից պահպանումեն։ Զմեռները կենդանիներին լինում, քան թէ ամառները, որովհետեւ ձմեռը ցուրտ է լինում, իսկ ամառը սաք։ Գարնանալուն պէս կենդանիների թանձր և երկար

1 Նկարել հարկաւոր է կամ չունը կամ դայլը։

մազն ու բուրդը թափվումէ ու նրա տեղը դուրս է դալիս նոր նօսը և կարճ բուրդ։ կենդանիները լուսալիս, փոխումէն իրանց մազը։ Գայլը իշտան համար քաշուած, անմարդաբնակ տեղեր է մինուում։ Նա դգոյշ, երբեմն էլ վախկոս կենդանի է։ Գայլը կենումին անտառաներում, ձորերում, սաւրերի զլիին, և երբեմն էլ հանդերում և զաշտերում։ Գայլը կոյլէնի կենդանի է (ուրիշ ի՞նչ վայլերում) կենդանիների անուններ զիտէք, ի՞նչ էք լոել նրանց մասին, սատաթցէք)։ Գայլը իրանից անզօր կենդանիները բանում է, ինզգում և նրանց միուը ուտում։ Գայլը յափշտակում և ուտում է ոչխար, կով, խող, նսպաստակ, սոգ, մօւկը, և այլն։ Որք գայլը ուտումէ երբեմն իրան ձագերնէլ։ Ուտումէ նմանապէս հիւանդ գայլին։ Իսկ գայլը դէշը — զիտակը նրանց համով կերակութն է։ Գայլը Գիշտառ — Տոռէնի, վայլէնի էնսպանի է։ Գայլը զարնան ժամանակ ծնումէ կոյր ձագեր։ Նա իրան ձագերին սննդումէ առաջ կաթնով, յետոյ նրանց համար միս է ծամում և ուտացնում։ Իսկ մի քանի ժամանակից յետոյ բերումէ փոքր կենդանիներ, մինչեւ որ նրանք իրանք կարողանումեն իրանց համար ուտելիք վնասել։ Գայլը չորքսանի, վայրենի, զիշտառ, կենդանածին և կաթնատու կենդանի է։ Գայլը վնասակար կենդանի է, նա մարդուն շատ վըսաներ է տալիս։ Գայլը ընտանի խօսակեր կենդան

Նիսերին միշտ վիճակումէ և նրանց, դանելուն պէս,  
պատառումէ : Եթե նա մանումէ հօտի մէջ և  
այնքան չէ ուտում, որքան որ խեղդումէ և տեղը  
թռղնում: Թէե ընտանի շունը իր աեսքով բոլորու  
վին գայլի նման է, բայց նա գայլի անհաշլ թշնամին  
է: Շունը կատաղածի պէս համարձակ ընկնումէ  
գայլի ետևից և շատ անգամ նորա ձեռից ազատում  
է անզօր ընտանի կենդանիները, յետ գարձնելով  
նրանց իր տիրոջը և գայլին էլ տեղն ու տեղը անհոգի  
անելով: Շունը կարծես այս ամէնը մարդու հա-  
մար է անում, որին նա այնքան է սիրում, որքան  
ատումէ գայլը: Թէե գայլը վախումէ մարդից էլ,  
բայց շատ անգամ, մանաւանդ ձմեռները, երբ գայ-  
լըրը սոված խմբերով ման են գալիս և իրանց հա-  
մար կերակուր են վիճառում, մարդ պատահելիս չեն  
վախում նրանից և նրա հրացանից ու անվախ յար-  
ձակվումեն նորա վերայ: Գայլերը, ինչպէս և շները,  
հիւանդանումեն կատաղութեամբ, և այս ժամա-  
նակները մանաւանդ նրանք լինումեն շաա երկիւ-  
ղալի մարդու համար: Այս ժամանակները նրանց բե-  
րանից լորձունը (թուք) է թափլում, որ կատաղու-  
թեան նշան է: Նրանց կծած մարդն էլ թունաւոր  
վումէ և կատաղում: Շատ մարդաշատ և ըսւաւո-  
րեալ երկրներում այս վայրենի և վնասակար կեն-

գանին բնաջինջէ արած: Մեր երկրներում դեռ եւս  
նրանցից շատ կան, և զիւղացիները նրանցից շատ  
վնասներ են կրում:

Ա. Ա. Պ. Զ.:

**Արջը** նմանապէս վայրենի կենդանի է: Արջի  
զունչը դուրս ընկած—երկայնաձև է, աչքերը փոքր,  
ականջները ցցուած: Արջի պոչը կարծ է: Արջի  
թաթերի վերայ կան հինգ հինգ մատներ: ամէն  
մատի վերայ կան մի մի ամուր չանկեր: Արջը իրան  
թաթերի վերայ է ման գալիս, շունը և կատուն  
մատների վերայ: Արջը Ատթալջին կենդանի է, շունը  
և կատուն Տափուլջին:

**Արջի** ատամներից երեսումէ որ նա կարող է  
ուտել միս և բանջարեղիններ, նրա զլիսաւոր ու-  
տելիքը միան է, սորս համար էլ արջին զասումեն  
մակեր կենդանիների կարգում, բայց որովհետեւ նա  
ուտումէ մօի հետ զանազան բանջարեղիններ, սորս  
համար էլ արջը ամէն բան ուտող կենդանի էլ է կոչ-  
վում: Արջը ուտումէ արմաներ, խաղող և տես-  
րեներ: Արջի սիրած կերակուրը մեղքն է: Արջը  
շատ անգամէ մտնում գիւղացու Աղուտափունը և  
անխնայ վչացնումէ գիւղացու վեթակները: Նա  
մտնումէ նմանապէս գիւղացու այդին և իրան սիր-  
ած պտուղները ուտելու համար ջարդումէ խա-

դողի, դեղձան և ուրիշ մրգեղէնների ծառերը: Նա  
անխնայ ջարդումէ նմանապէս հացեղէն բոյսերը:  
Այս ժամանակ գործումէն արջի առաջին ոտները  
և սորա համար էլ նորա այս ոտները շատ շարժա-  
կան են: Արջը ուժեղ կենդանի է, նա իրան թա-  
թերի հարուածներով կարող է սպանել ձի և առա-  
ջել ոտներով կարող է տանել կովը:

Արջը ձմեռը մանումէ իրան բունը (չըլայ է  
մտնում). այս ժամանակ նա քնումէ և ոչինչ չէ  
ուտում (գիւղացիները կարծումեն թէ արջն էլ  
պաս է պահում), այլ մննդվումէ իրան իւղով:

Արջը կենդանածին և կաթնատու կենդանի է:  
Նորա ձագին ասումեն քոթիթ (քոթոս): Արջը  
բացի վնասից օգուտ էլ է տալիս. արջի մորթուց  
քուրք են կարում, որ շատ տաք է պահում: Արջե  
միսը ուտումեն, նա համեղ է լինում մանաւանդ  
ապուխտ արած. աւելի համեղ են նրա թաթերը:

## 12. Մ Ո Ւ Կ :

Մուկիկը փոքրիկ, գեղեցիկ և ուրախ կենդանի  
է: Նորա գլուխը երկայնաձև է, աչքերը փոքրիկ և  
սեւ, ականջները դեպի վերև ցցուած: Դունչի վե-  
րայ ցցուած են կոշտ, բեխի նման մազեր: Մկան  
ոտները փոքրիկ են: Մկան ոտների վերայ կան փոքր  
թաթեր: Մատները բարակ են և երկար: Մատների

վերայ կան չանկեր: Մկան պոչը երկար և բարակ է,  
կաշին բարակ և մոխրագոյն. նրա մարմինը ծած-  
կուած է նօսր և բարակ մազերով: Մուկը ուտելիքը  
չէ ուտում, այլ կրծումէ: Մուկը իրծող կենդանի  
է: Մուկը կրծումէ իր առաջնատամներովը: Նորա  
ամէն մի ծնօտի վերայ կան մի մի ջուխտ առաջնա-  
տամներ: Այս ատամները միշտ աճումեն և միշտ  
մաշվումեն, երբ մուկը կրծումէ: Եթէ չմաշվէին,  
ատամները բերանից գուրս կրգային: Մկները բնակ-  
վում են տներում և հանդերում: (1<sup>o</sup>նչ է ուտում  
պահուած մուկը): Հանդի մուկը վնասակար է մարդուս և  
շատ վնաս է տալիս գիւղացիներին: Նրանք փչաց-  
նում են զիւղացու արտերը: Հասկերը կտրում են  
ատամներով, կրծում են իրանց բները և ձմեռվան  
համար պաշար են պատրաստում: Մկները իրանց  
բները շինում են հողի մէջ: Մկան բունը բաղկա-  
նումէ մի քանի սենեակներից և մի քանի ծակե-  
րից: Մուկը իրան ձագերին կերակրումէ, ինչիս  
և ընտանի կենդանիները, կաթնով: Մի տարում  
մուկը վեց անգամ ձագեր է ծնում և ամէն անդամ  
վեց հատ: (Ուրեմն մի ջուխտ մուկը իրան կեան-  
քում, այս վնասակար կենդանիներից որբան կը ծը-  
նանի<sup>1</sup>):

1 Մուկը ապրումէ մինչեւ վեց տարի: Փոքր մուկիկը  
չորս ամսից յետոյ արդէն ձագեր է ծնում:

13. Խ Ա Ռ Ի Ր Գ :

Խլուրդի զլուխը երկար է, վերևից տափակացրած, գունչը սուր, քմբի ծայրին ունի մի պինդ զրդնձուկ՝ խողի նման։ Խլուրդի աչքերը շատ մանր են և ծածկուած են թանձր բրդով։ Որովհետեւ խըլուրդը միշտ ապրումէ գետնի տակը, սրա համար էլ նրան հարկաւոր չեն մեծ աչքեր։ Խլուրդը աշկանջի արտաքին մաս (խխունջ) չունի, բայց նրանց տեղ զրսից դէպի գլխի ներքին մասը դնումէ մի ծակ—աշանձան։ Ականջի արտաքին մասը լոկիքի գլխաւոր գործարանը չէ։ Առանց արտաքին ականջի էլ կարելի է լուել։ Լոկիքի ամենազլիսաւոր գործարանը գտնվումէ խողովակի մէջ։ Եթէ այս խողովակը խցիենք, գժուարութեամբ կը լսենք։ Զնայելով որ խըլուրդը չունի ականջի արտաքին մաս, այնու ամենայնիւ նա լւա է լոււմ։

Խլուրդի բունը կը լը և երկար է։ Ոտները շատ կարծ են. նորա ոտների վերին և միջնին մասերը երկեւում չեն։ Խլուրդի առաջին ոտների թաթերը շատ լայն, թիաձեւ և մերկ են։ Թաթերը թեքված են աջ և ձախ կողմերի վերայ։ Ամէն մի թաթի վերայ կան հինգ հինգ կարճ մատներ, երկայն և լայն չանկերով։ Խլուրդը այս թաթերով, ինչպէս բահով փորումէ գետինը, հողը այն և այն կաղմը դէն ածելով։ Խլուրդի ետեւի ոտ-

ներն էլ կարծ են։ Ետեւի ոտների վրայ էլ կան հինգ հինգ մատներ իրանց չանկերով։

Խլուրդի պոչը կարծ է։ Նրա բոլոր մարմինը ծածկուած է կակուղ և սե բրդով։

Խլուրդը միշտ ապրումէ գետնումը, որ տեղ նա իրան համար բոյն է շինում շատ ծակերով։ Խլուրդի ատամները նման են մասկեր կենդանիների ատամներին, ուրեմն նա խոտը չէ կարող ուտել։ Խլուրդը բնակվելով գետնի մէջ, այն տեղ վնասում է իրան համար միջատներ և ձիճուներ, որոնցով նա կերակրվումէ։ Խլուրդը ճիճուտիւր — միջառութիւր կենդանի է։ Նրա զգայարակներից աւելի զարգացածը հոտուելիքն է, որի միջնորդութեամբ դեանի մէջ դտնումէ իրան ուտելիքը — միջատները։

Խլուրդը շատ օգտակար կենդանի է, որովհետեւ նա ջնջումէ արմատներ փշացնող ճիճուներին։ Թէև նա երբեմն փշացնումէ շաւիղները, հողը նրա վրայ կիտելով, բայց այնու ամենայնիւ նա արմատները ոչ թէ չէ փշացնում, այլ նա մեծ օգուտ է տալիս։ Սորա համար էլ նրանց չպէտք է ջնջել։

Խլուրդը ագահ կենդանի է։ Զմեռները նա մտնումէ գետնի մէջ աւելի խոր և այն տեղ շարունակումէ ողջ ժամանակը ապրել։

Խլուրդը թռերովէ շունչ քաշում, նրա ասքինը կարմիր և տաք է։ Խլուրդի ձագերը ճնանում՝

Են մերկ և կոյր, որոնք մնաղ վումբն իրանց մօք  
կաթնով:

14. Մ Զ Կ Ա Թ Ե Ւ Ո Ւ Կ :

Մշկաթեռնի մարմինը բաղիանումէ դլիից,  
վլից, բնից, հշալենից, ոտներից և պոչից:

Մշկաթեռնի գլուխը շան զլիսի նման է, քի-  
թը բութ է և փափուկ երկու մեծ մեծ ձեղքուած  
ոնդներով: Նրա հոտոտելիքը զարդացած են: Մշ-  
կաթեռնի աչքերը շատ փոքր են, նա ցերեկով վատ է  
տեսնում: Բերանը մեծ և յայն է բացվում, ականջները  
շատ մեծ են: Նրա լոելիքը շատ զարդացած է: Մշկթե-  
ռնի առաջի և ետի ոտների վլրայ կան հինգ—  
հինգ մատներ: Առաջի ոտների մեծ մատը փոքր է,  
որի վերայ կայ մեծ սուր և կեռ շանդ: Միւս չորս  
մատները երկար և բարակ են, սրանք շանդեր չունին:  
Այս մատները բաղկանումն երեք խաղերից: Մշկա-  
թեռնի այս չորս երկար մատների, առաջի և ե-  
տի ոտների, բնի և պոչի մեջ ձգուած է մի բարակ  
և կիսալեռականցին հաշիտ փոս: Այս մաշկին ասում են  
լեռ: Իսկ կենդանուն հշալեն կամ չկան: Մշկա-  
թեռնի թեր հաւի թեր նման չէ: Հաւի թեր  
վետուրներից է բաղկացած:

Ետեի ոտները առաջվանից կարճ են: Այս ոտ-

ների վլրայ կան հինգ հինգ մատներ սուր սուր չան-  
կերով:

Պոչը երկար ու բարակ է: պոչն էլէ պատաժ  
թերի մաշկով:

Մշկաթեռնի մարմինը ծածկուած է բարակ,  
և փափուկ մե մազերով, իսկ վորի վերայ մոխրագոյն:

Մշկաթեռները շատ լաւ են թռչում: Գետնի  
վերայ շատ գժուարութեամբ են սոլում, իրանց թե-  
ռերը ծալելով, առաջի ոտի մեծ մատի և ետեի ոտ-  
ների սուր չանկերով մագլցելով: Քնելիս նրանք կպ-  
չումն ետի ոտներով մի բանից և գլուխները կախ  
են անում:

Մշկաթեռնը սննդվումէ ձիձուներով և մի-  
ջատներով: Մշկաթեռն էլ խլուրդի պէս ֆիլատուէր  
կենդանի է: Մշկաթեռնի և խլուրդի ատամները  
մակեր կենդանու ատամների նման սուր են, նրանք  
սղոցաձեւ և մեխաձեւ են: Մշկաթեռնը իրան որաը  
թաշելու է ձարում: Նա թռչելու ժամանակ բաց է  
անում իրան լայն բերանը, բռնումէ և կուլէ տալիս  
վեասակար միջատներին:

Մշկաթեռնի դժայտանուժները, բայց տեսանելի-  
քից, շատ լարդացած են: Մշկաթեռն էլէ շնչառում  
թռչերով, և նրա մարմնու մեջ շըջումէ տաք և  
կարմիր արիւն: Մշկաթեռները միայն մի կամ երա-  
կու անգամն ծնանում իրանց օրում: Նրանց ձա-  
գերը երկար ժամանակ են կպչում իրանց մօք ծը-

ծերից, մինչև անդամ թռչելիս, և անդվւմեն նըս  
բանց կունառ:

Մշկաթեռւկները ցերե կները փնտռում են մութ  
և քաշուած տեղեր, նրանք օրերը անց են կայնում  
աւերակներում, անբնակ շինութիւններում, այրե-  
րում, և այլն. և երբ զիշերը առնում է, դուրս են  
գալիս որսի: Նրանք անդադար զիշերները աշխա-  
տում են միջատներ ոչնչացնելով. միայն անձրեւն է  
խանգարում նրանց գործը:

Ողջ ձմեռները մշկաթեռւկները մի առանձ-  
նացած և մութ տեղ քաշվելով խոր ժնում են, և  
գարունը գալուն պէս, երբ օրերը սկսում են տաքա-  
նալ և միջատները երեալ, նրանք այս երկար և խոր  
քնից զարթնում են և սկսում են իրանց որսը: Մշ-  
կաթեռւկը չթեալ ժնու կենդանի է:

Մշկաթեռւկները օգուտ են տալիս մարդուն  
նրանով, որ ջնջում են վնասակար միջատներին:

### ԵՐԻՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ԱՅՍ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ ՄԻՄԵԱՆՑ  
ՀԵՏ:

Ի՞նչպէս են կոչվում առհասարակ մեր վերեր  
նկարագրած կենդանիները: Չօրբոտանի, ընտանի և  
վայրենի, կունառիւր և կենդանածին կենդանիներ:  
Ինչով են կերակրվում նրանք:

Մասամբ մոռվ, մասամբ խոտեղիններով: Նը-  
րանցից մի քանիսը մասկեր են, իսկ միւսները խո-  
տակեր: Ի՞նչպիսի ձայն են տալիս այս կենդանիները:  
Շունը հաշում է, կատուն մլաւում է, ձին խրին-  
ջում է, եղն ու կովը բառանչում են, խողը խրիսրաց-  
նում է, ոչխարը մայում է, և այլն: Քանի՞ զլուխ ունին  
նրանք, քանի՞ վիզ, բուն, աչքեր, ականջներ, լեզու,  
ոտներ և այլն: Այս կենդանիները ամթնն էլ ունին  
մի զլուխ, մի բուն, մի պոչ, քիթ, մի լեզու, երա-  
կու աչք, չորս ոան և այլն: Այս կենդանիները ի-  
րանց ձագերը կաթնով են մննդում: Սորա համար  
էլ սոքա բուշը չորդորուի և կունառիւր կենդանիներ են  
կոչվում:

Ա. Հան համեմատելիւնը իտքուի հետ:

Ա. Համարման յառիշնիշներ: Շունը և կատուն երակում էլ մի մի զլուխ ունին, մի վիզ, մի բուն, մի պոչ և չորս ոտը: Նրանք զլսի վերայ ունին երկուաչք, երկու ականջ, մի դունչ, մի բերան: Նրանց բերանի մէջ կան սուր սուր ատամներ. Նրանք հասկեր կենդանիներ են: Երկուսի զլուխն էլ առաջի կողմնէ, պոչը ետեի, ոտները՝ ներքեի, մէջքը վերեի: Նըրանց ոտների վերայ կան թաթեր, թաթերի վերայ մատներ, իսկ մատների վերայ չանկեր: Նրանց մարմինը ծածկուած է բուրգով: Շունն էլ, կատուն էլ ընտանի կենդանիներ են, նրանք երկուսն էլ գտնըլվումեն մարդուս ձեռի տակը, — երկուսն էլ մարդուն օգուտ են տալիս: Շունն էլ, կատուն էլ ծնանումեն կենդանի ձագերը: Նրանց ձագերը կոյր են ծնում և առաջի օրերումը իրանց մօր կաթնով են մննդգում: Շունն էլ, կատուն էլ չորտառնի, էնդուստաճին, հասկեր և հանդանիներ կենդանիներ են:

Բ. Անհամ յառիշնիշներ: Շունը կատուից մեծ է: Կատուի մարմինը շանից աւելի զիւրաձիգ է: Կատուի չանկերը շարժական և սուր են, իսկ շանը ոչ: Շունը կատուից օգտակար է մարդու համար:

Ծունը պահպանումէ տունը, ծառայումէ մարդուն որսի ժամանակ, չոփուին օգնումէ տառարը արածելու և պահպանելու. — կատուն մուկն

Է բանում. շունը հաշումէ, իսկ կատուն մլաւում: — շունը հաւատարիմ կենդանի է, իսկ կատուն չար:

2. Կ Ո Վ Ե Ւ Ո Զ Խ Ա Բ :

(Համեմատելիւն):

Ա. Ամառանուիւն. կովն էլ, ոչխարն էլ չորքոտանի, ընտանի, կաթնակեր, խոտակեր և կենդանածին անասուններ են: Կովն էլ ոչխարն էլ ծամող կենդանիներ են, երկուսն էլ բարդ ստամոքս ունին: Նրանց ամէն մի ոտի վերայ երկու կծղակ կայ: Կովի զլսի վերայ էլ, ոչխարն զլսի վերայ էլ կան եղջիւրներ: Նրանց մարմինը ծածկուած է բրգով: Կովի և ոչխարն ոտները կարճ են: Ոչխարն էլ, կովն էլ լինումեն զանազան գոյնի: Նրանք օգտաւէտ կենդանիներ են: Կովն էլ, ոչխարն էլ մարդուն օգուտ են տալիս. նրանք տալիս են կաթ, բուրդ, կաշի, ձարալ, միս և փեխն:

Բ. Օանապանութելիւն: Կովը ոչխարից մեծ է: Կովի եղջիւրները առհասարակ կարճ են և դէպի վերեւարձացած, իսկ ոչխարինը երկար և կրացած: Կովի զլուխը ոչխարի զլսից երկար է: Կովի բուրդը կարճ է և կոշա, իսկ ոչխարինը երկար և կակուղ: Կովը կանգնումէ իրան հաստ ոտների վերայ, իսկ

ոչխարը բարակ ոտների վերայ: Թէւ կովլ հեղ կենա-  
դանի է, բայց ոչխարը նրանից հեղէ: Կովլ բար-  
կացած ժամանակը հարուած է տալիս: Կովի կաթը  
ոչխարի կաթիցը համովէ: Կովի բրդից թաղիքներ  
են շինում, իսկ ոչխարի բրդից զանազան բրդեղէն  
նիւթեր: Կովի կաշին հաստէ, իսկ ոչխարինը բա-  
րակ: Կովի կաշին դործ չեն դնում այն բաների  
համար, ինչի համար դործ են դնում ոչխարինը:  
Ոչխարի մոլթից կարումեն զտակներ, քուրքեր և  
այլն, իսկ կովի մոլթից չեն կարում:

### Յ. ԽՈՒՐԴ ԵՒ ՄՇԿԱԹՍԻՈՒԿ:

(Համեմատութեան):

Ա. «Ամառ-թեան»: Խլուրդն էլ, մշկաթեռւին էլ  
աւնին զլուխ, բուն, պոչ, չորս ոտներ: Գլխի վե-  
րայ ունին աչքեր, ականջներ, գունչ, քիթ և բերան.  
Քերանի մշջ սուր ատամներ, լեզու: Նրանց ոտների  
վերայ կան մատներ, մատների վերայ չանկեր: Նրանց  
մարմինը ծածկուած է բրդով: Խլուրդն էլ մշկա-  
թեռւին էլ մշտառիւր կենդանին են: Նրանք երկուան  
էլ ջնջումեն վնասակար, բուսեղէն փչացնող մի-  
ջաներին: Նրանց երկուսի հոտոտեղիքն էլ զարգա-  
ցած է: Նրանք ձմեռը քնող կենդանիներ են:

Խլուրդն էլ, մշկաթեռւին էլ ծնումին կենդա-  
նի ձագեր, նրանք իրանց ձագերին կաթնով են մնա-  
դում: Նրանց արիւնը տաք և կարմիր է, նրանք  
երկուան էլ թոքերով են շնչառում:

Բ. «Օ անապատ-թեան»: Մշկաթեռւին առաջի ոտ-  
ների մատները երկար են խլուրդից: Մշկաթեռւինը  
ունի խլսունջ, խլուրդը չունի: Մշկաթեռւինը ունի  
մշկաթե, իսկ խլուրդը չունի: Մշկաթեռւինը կարող  
է թռչիլ, խլուրդը չէ կարող թռչիլ: Խլուրդը ի-  
րան համար շինումէ գետնի մեջը բուն և նրա մեջն  
է ապրում, մշկաթեռւինը բուն չէ շինում և ապ-  
րումէ օղի մ.ջ: Մշկաթեռւինը իրան ուտեղիքը, մի-  
ջաները օգումն է բռնում, իսկ խլուրդը դետնի  
մ.ջ:

Վ. «Խոառ-թեան»: Ոյապէս էլ հարկաւոր է համեմատել ձին  
եղան և իշխ հետ, այծը, սպանը, կովը խոզի հետ,  
մուկը կառուի և մշկաթեռւի հետ և այն: Աւսու-  
ցիները կարող են համեմատելու ժամանակ աւելաց-  
նել այն յատկանիշները, որոնք մնաք չենք յիշել: Մենք  
աշխատել ենք այս անկ ցոյց տալ համեմատութեան  
ձեր, և ոչ թէ ներկայացնել լիսլին մի ամբողջ նկա-  
րագրութիւնը: Աւելի լաւ կը լինի նմէ այս համեմա-  
տութիւնները լինեին գրաւոր և լուսուցիչը պէտք է  
զրէ հարցեր, իսկ աշակերաները այդ հարցերին պէտք  
է գրաւոր պատասխաններ գրեն, այնպէս, որ դուրս  
գայ մի ամբողջ, հետհարար և հասկանալի նկարա-  
գրութիւն,

Ա ՀԱՅԱՍՏԱՆՈՒՐԱԿՐԱՆՈՂՈՒԹԵԼԻՆ :

**Մեր բոլը գնած կենդանիների մարմինը բազ-**  
**կանումէ դլսից, վղեց, բնից, չորս ոտներից և պոչից,**  
**նրանք իրանց ձտգերը կաթով են աննդում:** Սորա  
**համար էլ նրանց ասում են չալուներ կենդանիներ:**  
**Բոլը կենդանիները կենդանիները ունին ոսէրուիդ-հմեռ**  
**տաք և կարմիր արիւն նրանք թռքերով են շնչառ**  
**ուում և նրանց մարմինը բրդովէ ծածկուած:** Նրանց  
**բերանումը հան ատամներ, որ բաղկանումեն ներ-**  
**քին մասից արմարից, և վերին-եւագիննից:** Կենդանու-  
**ատամներից երեսումէ թէ ինչովէ նա աննդ վում:**  
**Կողանէր կենդանիների սողնակի ատամները բուժ և**  
**տափակ են:** Կրծաղներէ ատամները դուրի նման են.  
**Գլշառուշ-յախտակող, կաթնատու կենդանիների ժա-**  
**նիքները մեծ և սուր են, սողնակները սղոյի ատամ-**  
**ների նման են:** Ճիճուառներների տափամներն էլ յափշ-  
**տակողների նման են, բայց սողնակները նրան-**  
**ցից աւելի սուր են:** Խոկ բոլը կաթնակեր կեն-  
**դանիների ոտները բաղկանում են երեք մաս-**  
**աերից ազդրից, ոլոգից և ներբանից, որի վե-  
**րայ գտնավում են գարշապար, տապան, մասներ**  
**չանդեր կամ պճեղներ:** Ոտները միանում են բնի հետ:  
**Կաթնատու կենդանիները ունին ռշտար:** Ողնաշարը  
**բաղկանումէ շատ մէջ ծակ ոսկորներից, որոնք մի-**  
**մեանց հետ միացած են և կազմում են մի խողովակ:****

Ողնաշարը ախում է սկաւասակից անյնում է մէջ-  
**քով և վերջանում է օլոչով:** Ողնաշարի և սկաւա-  
**սակի, մէջը ուղեղով է լքցված:** Ողնաշարին կզած են  
**կողքերը և ոտների ու ձեռների սոկորները:**

**Ալթնատու կենդանիների մարմինները տարա-**  
**դար փոխվում է, կաշին և մասը թափվում են.** Ակա-  
**նունքները և սոկորները միշտ փամում, մաշվում**  
**են:** Եթէ որ կենդանիների արկած ժամանակ չէ ուտում  
**լղարում է:** Եթէ մեր կաշին չմաշվէր և էլի նորից  
**չգուրս գար, այն ժամանակ նա հին շորի նման կը**  
**մաշվէր:** Կենդանիները ուտում են և խմել, որ ի-  
**րանց կորառութ վերաբերէ, նորոգուին:** Ու աելիքը  
**բերանից կոկորդով զնում է սոհամոքնը և որ աել-**  
**նա մարավում է, այս աեղից ուտելիքը զնում է բա-**  
**րա աշխատակող է, այս աեղից էլ հեղուկ—մարսական մա-**  
**սերը փոքր խողովակներով զնում են և արքանի հետ**  
**են խառնվում:** Եթէ որ կաթնակեր կենդանիների ա-  
**րիւնը էարներ և պատ է:** Արիւնը հոսում է շարժում է  
**խողովակներում, որոնց ասում են երակներ:** Նա հո-  
**սում է կենդանու մամնի բոլոր մասերում, աննդում**  
**է նրանց և անդէտք հնայած մասերը այն աեղից**  
**ժողովում է, տանում է թռքերի մէջ:** Խոքերը զտ-  
**նվում են կուրծքում և բաղկանում են երկու պար-**  
**կից, որ աեղ օղը մաքրում է անպէտք հաւ-էորմէր**  
**արիւնը և դարձնում է պիտանի սննդարար բաց-էորմէր**  
**արիւն:**

Պիտանիարիւնը թոքերից կրկին գնումէ զենու  
քանու մարմնի բոլոր մասերը անցվելու Արիւնը և  
բակների միջակ սփրանե կաղամա: Ալիսար բալ-  
կանումէ պարկած մշտունչից: Սիրուր դանիվումէ  
նմանապէս կուրծքում, թոքերի մշջ ՍԵՆՔ լսում ենք  
երբ որ սիրուր կուչէ գալիս (կծկվումէ), ուսչումէ  
(ընդարձակվումէ) և ասում ենք սիրուր տրիտրիում  
է, կամ բուժուածէ և կաթնակեր կենդանիների սիրուր  
և թօքերը միանման են: Ատամնքսները նմանապէս  
միանման են, որոնցողների առամբարծ բացկանումէ  
չըս մասերից: Խոնամիեր կաթնատու կենդանիների  
ստամբուր մեծ է և լուսաղիքները երկար մակեր և  
միջատակեր կենդանիներից: Ու պարզուն բժանու  
առ չենուք զայտու ու ընթառ ուր, չեն տիպուն ու  
ուն մախազուն — չարձ՝ չը պար ուր, շրջադառ չու  
ունչ հանդու և մենամեր խորհմանքուն զայտ ուրս  
առ պահեմարթն զքրտուելու զայտ: Կախառուն ուն  
չնախցու և նուռու զայտը: Չ ուս և զայտ զայտ  
ուն ուս: զայտու ու նուռու զայտ, Ա առաջնաբարուն  
նուռուն և ուղենու զայտ հանուն առնորութ: Ա ուս  
ուրս ուս զայտուն նորութ զայտուն և զայտուն  
ուրս զայտ և նուռութուն և նուռութուն ուն նուռու  
զայտուն զայտուն և նուռութուն զայտ ուն նուռու  
զայտուն զայտուն պայուրուն հանուն Ա ուսչուր և զայտուն

պատուի պայման : բայց միայնույն դժվարի խօսքում  
անհաջող աշխատ պատճենութեան մեջ կայլ բայց  
զգայ առաջին սկզբանակ թ մարդու կայլ : բայց

## ԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

**Թ-Ա-ՑՈՒՆ ԵԱՐ.**

**Ա.քլարի** զլուխը և պոչը բարձրացած են դէս  
պի վերև, պոչը փետուրները կրկալուն, կռանում են  
դէսի ներքեւ։ **Ա.քլարը** տեսքով գեղեցիկ է, նրա մար-  
մինը մազերով չէ ծածկուած, այլ ունետուրներով։  
**Ա.քլարը** բերնի, կամ դնչի տեղ կտուց ունի և երկու  
ոտ ունի, — նա լաշտա է։ **Ա.քլարի** զլսի տուաջի  
մասը կտուց է կոչվում, որ և բազկանումէ բերանից։  
կտուցը մթագրյն է, առաջի մասը սրածայր է, եաելի  
մասը արմատումը գեղնագոյն, որ և բազկանումէ  
երկու մասերից — վերին և ներքին։ **Ա.քլարը** առ-  
տամներ չունի, տատամների տեղ կտուցն է բա-  
նում։ **Ա.քլարը** չունի նմանապէս խսկական քիթ, թէ-  
և նա ունի քթի ծակեր։ Դիմի երկու կողքերումը  
կան ականջներ, որոնք ծածկուած են փետուներով։  
**Ա.քլարի** աչքերը խսկվում են միայն ներքին արտեա-

նունքով, վերինը բոլորովին չկայ: Աքլարի կատարի վերայ կայ մի կարմիր աւելամիս, որին տառւմ են քօջոր: Գլխի ներքեն էլ նմանապէս կան երկու կոլու աւ ելումներ:

**Աքլարի վեզը գեղեցիկ ձևով կեռացած է և փայլուն փետուրներով ծածկուած:** Աքլարի բնի երկու կողմումն էլ գանվումնն թեր, որոնց օդանութեամբ աբլարը կարողանումէ բարձրանալ ողը կամ լաւն: Թռչելիս աքլարը թե երը փոռումէ և նրանցով օդումը թեթևեն է տալիս: Իւրաքանչիւր թեր բաղկանումէ երեք մասներից, վերին, միջն և ստորին: Թեի սառիին մասը բաղկանումէ երկար փետուրներից, որոնց օդուութեամբ աբլարը կարողանումէ վերև թռչել: այսպիսի փետուրներից թեեւի վրայ տոհասարակ լինումնն 10 հատ: Փետուրները փոքր ինչ ինուացած են, նայելով թռչունի դնաաձնութեանը, այնպէս որ կեռացած վետուքին նայելով կարող ենք իսկոյն իմանալ, թէ այս ինչ փետուրը որ թեիցն է պոկած, աջ թէ ձախ: Թռչունի թեերը նրա առաջի սաների տեղն են բռնօւմ:

**Աքլարի բունը ամբացրած է ոտների վերայ, որոնք բաղկանումնն երեք մասներից: Վերին-առդրեց, միջին-ուժից և ներքին-ներբեռնից: Վերին մասը միշինից հասու է և երկուսն էլ փետուրներով են ծածուած:** Ներբաննը առհասարակ ծածկուած չէ լու

նում միետուրով, նա երբեմն տկլոր էլ և լինում, և երբեմն էլ ժեղեփով ծածկուած: Ներբանի վերայ դանվումնն չըրմ մասներ, որոնցից երեքը առաջի կողմն են, իսկ մէկը ետեւի: Մասների ծայրը չանկերն են: Մասների և չանկերի գնութեամբ աքլարը կարողանումէ կանգնել ճիշդերի վերայ: Պոչը բարդ կանումէ երկար և գեղեցիաձեւ կեռացած վետուրներից, որոնք շատ զարդարումնն աքլարին:

**Աքլարը ուտումէ ցորեն, գարի, խրիուկ, կուլէ տալիս ճիճուներ և աւազ:** Կուրծծում գառնումէ մի պարկ, որ կոչվումէ քուչ:

**Աքլարը հպարտ և կառւասէրէ:** Վառեկաները շատ անգամ կովումնն մինչ իմահ: Աքլարը զիշեր և ցերեկ ծուռլուղուէ տալիս և անվախ պահպանումէ իր ձաշերը ամէն վտանգներից:

**Այս թռչունը պատկանումէ արական սեպին և կոչվումէ առշար կամ առաղաջ, իգականը — հաւ, փոքրերը — ծուփէ:**

**Հաւը աքլարից տկար և վախիու է և նա պօչի վերայ ոչ դեղեցիկ միետուրներ, ոչ քօջոր ունին շաւը աքլարի նման չէ կարող երգել, նա միայն կոկացնումէ:** Հաւը ձևէ ածում, և երբ այս գործը աւարտումէ, երկար ժամանակ է կոկացնում և աքլարն էլ նրա հետ կրկնումէ: Գարնանալուն պէս հաւը սիսումէ ձու ածէլ: Հաւի ձումները լինումնն բոլորովին սպիտակ, կույլ և երկայնաձեւ,

մի ծայրը միւսից սուր ։ Զուի արտապին թաղանթը  
ասվումէ կծեալ և կաղմնածէ կրկէն մասից ։ Չուի  
ներքին մաօր բայլկանումէ սպիտակուցից և դեղնուց  
ցից ։ Դեղնուցը գնտածն է և սոդիսակուցից պիտի ։ Սպիտ  
առակուցը պատումէ գեղնուցին և հեղուկէ և և  
թափանցիկ կծեալի ներքին մաօր ծածկուածէ սպի-  
տակ փառառի ։ Եթու որ հաւը մի քանի ճռէ և ածում  
նա լուսն է նասում նրանց պիրայ 20 — 24 օր  
կամ մօս երեք շաբաթ ։ Հաւը իրան մարմնի տաքու-  
թիւնը հաղորդումէ ձուաներին և օրանով պատ-  
ճառ ։ Է դառնում ձուից ճռառ թհամ դալուն ։ Ճռառ  
շառ զարմանալի կերպով է բհամ դալիս ձուի սպի-  
տակուցից ։ Իսկ գեղնուցով քանի որ նա ձուի մէջն  
է սննդումէ և Երբ որ 22 օրին մօսենումէ թուիս  
նոսելուց յետոց ձուար սկսումէ ։ Ձուի մէջ շարժ-  
վիլ և ճայն տալ ։ այն ժամանակ հաւը կոտրումէ  
ձուն և ձուար լուսաշխարհէ դուրս դալիս ։ Հաւը  
զարմանալի քնքուշութիւնով ուս հապտումէ ։ Առ-  
ծացնումէ լրան ձուաները մինչեւ որ նրանք առանց  
մօր միջնորդութեան կարողանումէն իրանց համար  
ուտելիք գանել ։ Բայց երբ ձուաները անցումէն և  
զարգանում այն ժամանակ հաւը իրանից դէն է  
քշում ձուաներին և կրկին սկսումէ ձուածել ։  
Հաւը տալիս է մարդուն ձու ։ միս և իե-  
տուրներ ։ Մութը սկսելուն պէս արլարները և հա-  
ւերը հեռանումէն հաւանոցը նպառմէն թառերի

վերայ և զլւախները թէ և տակ պահելով քնում են  
մի սովի վերացն չառերի ամենաերկիւզակի թշնամին  
աղուէներն են ։ իսկ ձուաներինը ու բուքը ։ Ճերացն ։  
2. Ելիս առ Ն Ակադեմիա քայլու-  
թիւնանու և զայդա բանց առան ու զայլ  
Ծիծեանակը վերը թռչուն է ։ Նրա զլւախը  
կլոր ձև ունի ։ Աչքերը վերը և սէ ևն Կառ ցը ար-  
մատումը լցնէ և տղմունելով վերջանումէ ։ օոր  
վորը ինչ կեռացած ծայրով ։ Կացի արմատումը կամ  
մի քանի բեխանման մազեր ։ Ծիծեանակը թռչելու  
ժամանակ կացով միջաներ է բանում և կուլ տալիս  
(նրա կառ ցը շատ լայն բայց վորմէ) ։ Ծիծեանակի  
բունը երկայնաձև է ։ Ենի մերայ կամ երկու թեկեր  
և երկու սաներ ։ Թէ երը նեղ են և բնից շատ երկար  
Ծիծեանակի սաները շատ բարսկ և նուազեն  
Նրա սաները մինչև մասները վետուրով ծածկուած  
են ։ Ծիծեանակի ամէն մի սուի վերայ կան չորս չորս  
մասներ ։ Երեք մասներ տուածումն են ։ իսկ մինը կ-  
տեսումը ։ Ծիծեանակի բարսկ մասները վերջանում  
են երկար և սուր չաներով ։ Անրա համար էլ ծի-  
ծեանակները չեն կարողանում երկար կանգնել և  
նաև լցածը տեղեր ։ Ծիծեանակի պոշը երկար և եա-  
զանաձև է ։ այսինքն նրա երկու կողմի ծայրի վե-  
տուրները միւսներից երկար են ։ Այս բայց այս

**Ծիծեռնակը** ծածկուած է միետուրներով։ Նրա զլսել, միջքի և պրչի միետուրները մութ կատյու գցնի են։ իսկ փորի և շլնիքի միետուրները բուլըովին սպիտակ են։

**Ծիծեռնակները** բարձր և արագ են թռչում։ Նրանք սննդվաւմ են միջատներով։ թռչելու ժամանակը բաց են անում իրանց բերանը և բռնում են մանր միջատներ, ջուրը խմում են նմանապէս թռչելու ժամանակը։ Ծիծեռնակները հազիւ են վերդափի գետնի վիրաց։ Նրանք թռչում են բաց տեղերում, անտառներում չեն թռչում, որովհետեւ ծառերը արգելում են նրանց։

**Ծիծեռնակը** պէտափոխվող թռչուն է։ Զմեռը նա մեղ մօտ չէ մնում. որովհետեւ միջատներ չըկան։ Նրանք աշունըը թռչում, զնում են ուրիշ տաք (հարաւային) երկները, որ տեղ ձմեռ չէ լինում։ իսկ դարտնըը։ Երբ հենց օրերը սկսում են տաքանալ և ծառերը կանանչիլ, նրանք կրկնին մեղ մօտ են թռչում։ Ծիծեռնակների հայրենիքը մեր կողմերն է, որովհետեւ նրանք այս տեղ են ճուտ հանում։ Ծիծեռնակները իրանց բունը շինում են օսձուքների առկին, պատի մի անկիւնումը։ Նա կառցով վերցնում է հողը կամ կաւը, թայ է անում իր կպչուկ թքով և այս ցեխից ծեփաւմ է իրան բունը։

1 Ծիծեռնակներից շատերը բնակլում են իրանց անցեալ բնի մէջ, որը նրանք առաջուց պատրաստում են.

Յետք նաև կրում է աղուտմաղ, միետուրները ու մասմուռ և վափուկ տեղ է շինում իրան ձուանեւմուա և վափուկ տեղ է շինում իրան ձուանեւմուա և ապագայ ճագերի համար։ Ծիծեռնակի բունը բունը ճագերի ճեղ ունի և շորս կազմակ ծածկուած է, միայն բունը ճագերի ունի մի ծակ ։ Ծիծեռնակները ամառը երկու անգամ ժուտ են հանում։ Նրանք գեռ առաջ ձուած ձուած են ածում և երեք շարաթից յետոյ ձուած տեր են հանում։ Ծիծեռնակի ձուաերը լինում են տկոր և անզօր։ Նրանց մայրերը կրում են նրանց համար միջատներ և ուտացնում են նրանց։

**Մարդկիք** ծիծեռնակին շատ սիրում են, որովհետեւ նրանք ոչնչացնում են վասակար միջատներին և մարդուն վասա չեն տալիս։ Սորա համար էլ հաւասրակ ժողովուրդը կարծում է թէ ծիծեռնակի բանելը և ապանելը մեղ է։

3. Ա. Պ. Դ.

**Բաղի զլուխը** լշն է, կտուցը նմանապէս լայն և տափակ է։ Վիզը երկար և կեռ է։ Բունը հաստ, ծանր և բաւականին տափակ է։ Կուրճըը դուրս ընակած։ Պոչը լայն է, թեև երը կարճ։ Ոտները կարճ և կպած են ողոչից մօտիկ։ սորա համար էլ բաղը օրօրվելով է ման գալիս և շուտ փափչիլ չէ կարող, բայց ոտի վերաց կան չորս մատներ։ երերը առաջ

են ընկած, մէկը ետեր : Նրա առաջի երեք մասուները միմեւնց հետ միացած են լողանալով : Այս մաշ-էիցը երեսւմէ, որ բաղը լողացող, չըն թռչունէ : Բաղը լող տալու ժամանակ թիակի պէս իրան թա-թերով ջուրը ձղումէ և արագ առաջէ լողում : Բաղի բնի ետեկի կողմումը, պոչի մօտ կայ մի ա-ռանձին խռու, որ իւղով լլիքնէ, այս իւղից ծծում են բաղի վետուրները, որոնք այս պատճառով թայ չեն լինում :

Բադը աղահ և շատակիր թռչունէ, նա ու-տումէ առաւօտից մինչև երեկոյ. Կա ուտումէ ա-մէն բան — միջաներ, որդեր, ձուկ, հատիկ կա-նաչ խոտ և այլն : Նրանց սպահելը չեշտէ, քան թէ հաւերի պահելը :

Զարդարութեան հարցը : Ինչու բաղին ջրի թռչուն են ա-սում : Ել ինչ ջրի թռչունների հետ ծանօթէք, ին-չու համար են նրանց մատների միջի մաշկիները : Ի՞նչ է ուտում բաղը, ինչու նրան աղահ թռչուն են ա-սում :

Այսպէս էլ կարելի է նկարագրել սազը, կարագը և աղնը :

### Ա Ս Բ Ծ Ի Ւ :

Արծուի զլուխը բոլորակ ու լայն ձեւ ունի. Նա ծածկուած է փետուրներով : Արծուի կացի վերին ծնուրը իւռացած է չանդալի պէս և վերջանումէ

շատ սուր ծայրով : Կտուցը նրա համար է սրածայր, որ կարողանայ նրանով նացանքեւ այն թռչուններին և ուրիշ կենդանիներին, որոնցով նա սննդվումէ : Արծուի աչքերը նրա զլիսի երկու կողմերումն են դանվաւմ : Նրա աչքերը շատ սրածեն և հետաքէն են: Աչքերի վերեւը յօնքերի նման վետուրով ծած-կուած են և ուռնգները գտնվում են կտցի արմատումք: Ականջների արաւաքին մասեր (խլունջ) չունի, թէ և լու է լում: (Ել Բ'նչ կենդանիներ չունին խը-խունջ): Արծուը իրան զլուխը զիք և հպարտ է բանում : Նրա վիզը ուզիղ չէ: Գլխի և զզի վետուր-ները կրօճ են:

Արծուի թևերը բաւականին երկար և ծայ-րերն էլ սուր են. նստած ժամանակը, նրա թևերը խաչմերուկ են լինում: Արծուը իրան թևերի շար-ժելովը (մի վարերելված) կարողանումէ շատ բարձր թռչիլ և երկար ժամանակ այն տեղ մնալ: Ար-ծուի կուրծքը լայն է և գուրս ընկած. Թևերի տա-կից մինչև կուրծքը ձգվում են բազմաթիւ մկանունք, որոնք օդնում են նրան թռչելու ժամանակը :

Արծուի ոսկորների մէջը փուչէ, նրանք ուղե-ղով չեն լիքը, այլ օլով, որ նմանապէս շատ թեւ-թեւացնումէ արծուի ծանրութիւնը, և այս պատ-ճառով նա կարողանումէ աւելի հեշտ թռչիլ գէ-պի վերև :

Արծուի ոտները բաւականին մեծ են, նրա ուս-8

ները պոչից մօտ են կազած (սորա համար էլ արծիւը դիք է կանգնում): Նրա ոտների վերայ կան չորս մատներ, երեքը առաջն են, իսկ մէկը ետևը: Արծուի մատները շատ ուժով են. նրանք վերջանում են երկու և սուր չանկերով: Չանկերը մանգաղի պէս կեռացած են: Արծիւը իրան թաթերով մի բողէում ամփոփումէ իրան որսը և սուր չանկերովը պատրումէ: Նրա ոտների վերին և միջին մասերը վետուրներով ծածկուած են. ներքին մասը դեղին մաշկով է ծածկուած:

**Արծուի պոչը լայն է և թիսկի նման տախիակ:**

**Արծիւը յափշտակող-հառէր թռչում է:** Նա միայն կենդանի որս է բռնում: Նա դէշ (լաշ) չէ ուտում: Նա յափշտակումէ անզօր թռչուններին թռչելու ժամանակ, վերևից դէպի ներքեւ ընկնելով, և իր կտցի մի հարուածովը մահացնումէ իրան որսին: Նա ոչնչացնումէ նմանապէս միներին և փոքր նաև պատակներին: Արծիւը իր որսը ողջ է կուլ տալիս և յետոյ նրա պինդ մասերը յետ է թքում:

**Արծիւը միայն նրանով է օգտաւէտ, որ ոչնչացնումէ շատ կրծողներին:** Արծիւը իրան բռնը մինումէ բարձր ապառաժների և ծառերի վերայ: Նա իրան բռնը շինումէ տերևներից և ծառերի ճիւղերից:

**5. Կ Ռ.Ո Ի Ն Կ:**

Կռունկը բարձրահասակ թռչունն է. նրա զլուխը փոքր ու գեղեցիկ է, կտուցը բաւականին ամուր է, ուղիղ, կողքերից սղման, երկար և սուր: Վիզը բաւական երկար և բարակ է, բռնը ձուածեւ: Կը ոռունկի ոտները երկար, մերկ և զօրեղեն. ոտների վերաց կան չորս մատներ, մինը ետևի կողմումը, երեքը առաջի: Ետևի մատը բաւականին բարձր է և գետնին չէ հանում: առաջի մատները միաւորված են (սկզբում) հաստ մաշկով: Չանկերը կարճ և փոքր ինչ կեռացած են: Թևերը երկայն և լայն են: Կը ոռունկի կտուցը, ոտները, թևերի և պոչի փետուրների ծայրը սեազոյն են, մնացած փետուրները մոխրագոյն, ծօծրակը մերկ և մոխրագոյն է: Կռունկները մշտական հայրենիք չունին. նրանք աշնան և գարնան ժամանակները աեղափոխվում են, այսինքն աշշունքները թռչում դնում են տաք հարաւային երկիրները, իսկ գարնանալուն պէս շուտով թռչում, գալիս են հիւսիսային հովլ կողմերը: (Ել Բ՞նչ տեղափոխվող թռչուններ գիտէք:) Կռունկների հայրենիքը հիւսիսային երկիրներն են, որովհետեւ նրանք այն տեղեն ձագեր հանում: Կռունկները թռչելու օրից մի քանի օր առաջ ժողովում են մի տեղ և խմբով թռչում են: Ամէնից ուժեղն ու մեծը առաջ է ընկնում, իսկ միւսները կարգով մի մի նրա ետեւ

ւից գնումեն, այնպէս որ կազմումեն Եսահիւնեն :  
Կոռունկները օր ու գիշեր անդադար անցնելով ծով  
ու ջամաք շտապումեն տեղ համնելու, նրանք,  
ձայն տալով, թուչումեն բաւականին բաճր :

Կոռունկները կարողեն նմանապէս բաւական  
լաւ մանդալ և լող տալ : (ի՞նչն է օդնում նրանց  
լող տալուն :)

Կոռունկները ապրումեն մեծ ձահիճներում  
ցանքերի մօտ : Կոռունկները սննդվումեն խոտեղին-  
ներով և կենդանիներով : Նրանք ուտումեն շա-  
տիկներ, ողջ ողջ կուլեն տալիս ձահիճային փոքր  
կենդանիներին. միջատներ ձիճուներ, դորակեր, ձուկ-  
ներ և այլն : Կոռունկները գալով հիւսիսային եր-  
կիրները սկսումեն բուներ շինել իրանց ապագայ  
ծուտերի համար և ձու ածել :

### 6. ԱԲ ՈՒ : ՏԱՐԱԾՈՅ

Բուի դլուխը մեծ ու լայն է և ծածկուած  
կակուղ վետուրներով, կտուցը արծուի կտցի նը-  
ման, վերին ծնօառ կեռ և սուր է : Կտցի հիմքը  
ծածկուած է խիտ վետուրով: Բուի կտցից երեսում  
է, որ նա էլ արծուի պէս գիշատող թուչուն է:

Բուի աչքերը ձակատի վերայ են, աչքերը մեծ  
և դեղնագոյն են: Ականջները նշնպէս մեծ են:

Բուի ոսները զօրեղ են. նրա չորս մատներից  
մինը ետեռումն է, իսկ երեքը առաջ են ընկած. նրա  
չանկերը (մագիլները) սուր և կեռ են: Օտները մին-  
չեւ չանկերը վետուրով են ծածկուած: Պուը կարճ է:

Բուի բրւոր մարմինը ծածկուած է խիտ և կա-  
կուղ վետուրներով. Մէջքը խարտեաշ վետուրնե-  
րով է ծածկուած խառն պուտերով, իսկ փոքր բաց  
մոխրագոյն և գծերով:

Բուի լեկիքը զարգացած է. ցերեկով բուն վատ  
է տեսնում, լըսը ծակումէ նրա բաց աչքերը, բայց  
գիշերով նա լաւ կարող է տեսնել այն փոքր կենդանին-  
ներին, որոնցով նա սննդվումէ: Բուն միայն գիշեր-  
ներով է դուրս գալիս իրան բնակութեան տեղից և  
որսումէ: Բուն ուտումէ փոքր թուչուններ, միներ,  
նապաստակներ և այլն: Բուն գիշերայն գիշապառ թու-  
չուն է:

Բուն օգտաւէտ կենդանի է, նա ոչնչայնումէ  
մեծ քանակութեամբ հանդի միները: Բուն իր բյունը  
շինումէ ծառերի խոռոչներում, հին և անընակ  
աւերակներում կամ ապառաժների վերայ: Բուն  
միանգամից գնումէ մինչև չորս ձու: Նրա ծուտերը  
մերկ և կոյր են դուրս գալիս ձուից:

Բուից վախենումեն, օրովհետև նա գիշերնե-  
րով է թռչում, անախորժ ձայն (բռա) է հանում  
և գէմքով այլակերպ է: Բուերից հարկաւոր չէ վա-

խել և նրանց ոչնչացնել։ նրանք մարդուն բացի օս  
գութից ոչինչ վնաս չեն տալիս։ ու այս մաս զի՞ն  
ամեն պահանջ ուն ամբ և պատ (շաղկերն) պահանջ  
ու նայած պար ծառփճած մն խոյ առաջ պահանջ մն  
7. ԱՆԴՀԱՆՈՒԹՅԱԿՆՈՂՈԹԻՒԽՆ ԹՈՉՈՒԽՆՆԵՐԻ

անց առաջ տակառակ ՎԵՐՈՅ : Խաղաղ առաջ քայլ  
առաջ պարի ժամ, խոյ առաջ մաս ծառփճած է խոյ

Բոլոր թռչունների մարմինը բաղկանումէ վր-  
շեց, բնից, երկու ոտներից և երկու թռերից ու պո-  
չից։ (ի՞նչ ժառելից է բաղկանում իտ լնահեր է էնտահենչէլ  
ժառմինը։) Գլխի վերայ կայ կտուցէ թռչունները իրանց  
բերանում ատամներ չունին, արտաքին ականջ (իր-  
խունջ) նմանապէս չունին։ (իսկ կաթնակեր կնե-  
ղանիները բնչ ունին իրանց գլխի վերայ)։ Թռչուն-  
ների ոտները և թռերը բաղկանումն երեք մասե-  
րից, վերին, միջին և ներքին (ազգը, ոլոգ և ներքան)։  
Ուների վերայ գանվումն չորս մատներ։ մէկը ետև,  
իսկ երեքը առաջ, մատները վերջանումն չանկե-  
րով (մազիներով)։ Թռչունների թռերը առաջին  
ոտների տեղ են բանում։ բոլոր թռչունները իրանց  
թռերի միջնորդութեամբ կարող են օդում թռչել։

Թռչունների մարմինը վետու բով և աղուա-  
մազովէ ծած կուած, թռերի և պոչի փետուրները  
երկար են և թռչելիս մեծ դեր են խաղում։ (ի՞նչ  
մասերից է բաղկանում վետու ըլը։) Թռչունները կա-  
րող են մահ էլ գալ, իսկ նրանցից մի քանիսները

լող էլ են տալիս (որ թռչուններն են լող տալիս և  
բնչն է նրանց օգնում լող տալու ժամանակ)։

Իսլոր թռչունները բուն են շինում, չու էն ա-  
ծում, լուսնոն են գալիս և ճուղեր են հանում չուեց, նը-  
րանք իրանց ձագերին կաթնակերների պէս կաթնով  
չեն մնալում, այլ զանազան հատիկներով և փոքր  
կինդանիներով, — թռչունները իրանց ձուտերին  
մեծացնում են։

Թռչուններից մի քանիսները ուղարկում են,  
իսկ միւսները միշտ մի շրջանումն ապրում։ (Որո՞նք  
են տեղափոխվող թռչունները և որո՞նք են մի և նոյն  
շրջանում ապրում։)

Նիշունութեան, Արրանից յետոյ հարկաւոր է աշակերտանե-  
րին համեմատել տալ թռչունները միւսնանց հետ զոր-  
օրինակ աքլարը բուի հետ, բուն, արծուի հետ, բուն  
և աքլարը ծիծեռնակի հետ, ծիծեռնակը կառնելի  
հետ, Ռատոցիչը կարող է չքաւականանալ վերև զն-  
նած թռչուններով, նա կարող է վերցնել ուրիշ թռ-  
չուններ, նայելով հանդամանքներին։ Մենք նկարա-  
գիել ենք միայն առանձին յատկանիշ ունեցող թռ-  
չունները։ Յետոյ պէս է համեմատել տալ մի քանի  
թռչուններ, կաթնակեր կինդանիների հետ, և սրանից  
յետոյ բոլոր կաթնատու կինդանիները թռչունների  
հետ, որից յետոյ յուսով ենք, որ փոքրիկ աշակերտ-  
ները կունենան մի որոշ և որոշ դադավար թէ կաթ-  
նակերների և թէ թռչունների վերայ։

Ա օդյառ ոչ մն մցեմաշան զի սկզբան մն այս ոչ  
։ Ըստման ոճը ոչ նարի պահան չ մաք ի  
առ մն առ ։ Առաջ մն մուգամաշան ուղարք ։

## ՉՈՐՏՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Ս Ա Պ Ո Ւ Ն Ն Ե Տ Ե Ւ Զ Կ Ն Ե Ր

## Ա. ՍՈՂՈՒՆՆԵՐ

1. Գ Ո Ր Տ Տ :

Գորտը ունի զլուխ, բուն և չորս ոտներ. եր-  
կուսը առաջի և երկուսը ետեի:

Գորտի զլուխը տափակ, առաջի կողմից բոլո-  
րակաձև և բալրովին անշարժ է: Գլխի վերայ նշմա-  
րումներ աշքեր, ոռւնդներ, բերան և ականջածա-  
կեր: Աշքերը զլիսի վերի մասումն են՝ դուրս ընկած,  
զեղնագոյն և շատ պսպղան. ներքին կոպը վերելինից  
մեծ է: Աշքերի ետելը դասաւորված են ականջի փո-  
սերը. գորտը խիսունջ չունի: Փոսանման ոռւնդները  
աշքի առաջն են: Գորտի բերանը լայն է: Վերին ծը-  
նօտի և առաստաղի վերայ գտնվումն շատ փոքր  
ատամներ. այս ատամներով գորտը կալնումէ իրան

1 Ուսուցիչը կարող է պատասխ մէջ կինդանի գորտ  
ցոյց տալ իր աշակերտներին:

որսը: Գորտի լեզուն կպած է առաջի ծայրով բե-  
րանի մաշկից, ետեի ծայրը կպած չէ. նրա լեզուն  
լայն և կակուղ է:

Գորտի բունը հաստ և ձուաձեւ է, փորը մեծ  
և փրուած, այնպէս որ նստելիս գորտի փորը գետ-  
նին է քափում. սորտ համար էլ գորտին ասումնեն  
ապաւն: Մեծ գորտը պոչ չէ ունենում:

Գորտի ոտները, ինչպէս և կաթնակերներինը  
ու թռչուններինը, բաղկանումնեն երեք մասերից.  
աղղրից, ոլոզից և ներբանից: Ներբանի վերայ կան  
չորս միաչափ մասուներ, որոնք միմեանց հետ միաւ որ-  
ված են լողամաշկով: Գորտը մասոների վերայ չան-  
կեր չունի: Ոտները գորտին թռչուալու և լողալու  
համար են և ոչ թէ մանգալու: Գորտի մարմինը  
ծածկուած է մերկ լորձունքու մաշկով. նրա վերայ  
ոչ մազ և ոչ թեփ կայ:

Եթէ վերյնենը գորտը և նրա մարմինը կըտ-  
րատենք, մենք կտեսնենք որ գորտի մարմինը բաղ-  
կանումէ պինդ մասերից — նոից ու անունից և հե-  
ղուկ մասից — առեւնից: Գորտի ոսկրութիքը բաղ-  
կանումէ գագաթից, ողնաշարից (կողքեր չունի)՝  
և ոտների ոսկուներից: Գորտի արլիւնը թէկե կաթ-  
նակերների պէս կարմիր է, բայց նրանցից ստան է. սո-  
րտ համար էլ, երբ մենք գորտը բանումներ ձեռ-  
ներում, զգում ենք ստանութիւն (նրա արիւնը մերիւ-

նից սառն է) : Գորտը ունի թոքեր, սիրտ, ստամոքս, բարակ և հաստ աղիք, երիկամունք և այն<sup>1</sup> :

Գորտը սննդվումէ միջատներով, վոքրիկ ձկներով : Մեռած կենդանիներին նա ամենեին մօտ չէ գալիս: Երբ նա նշմարումէ իր որսը, բաց է անում իր լայն բերանը, լվզոն յետ է ձգում և կալնումէ միջատներին: Ցուրտ ժամանակները գորտը սառչումէ, նա էլ չէ թռչկոտում ուրախ-ուրախ, նստումէ մի տեղ, քիչ ուտում և ուշ ուշ շնչառումէ : Աշնան ժամանակները գորտը մանումէ խոնաւտեղ կամ ձահիճի կամ լճի ալեխի մէջ և այն տեղ մեռածի պէս ոչ ուտումէ և ոչ շնչառում, այլ սառչում, փայտ է կարում: Գարնանալուն պէս, երբ արեգակը իր տաքութիւնով հալցնումէ լճերի սառուցը և ջուրը փոքր ինչ տաքանումէ, գորտը դուրս է գալիս իրան ապաստանարանից և սկսումէ կուլու շնացնել ու ջրի մէջ ձու ածիլ:

Գորտի չառները բաղկանումէն շատ մանր և աւ թանձր լորձունքով պատուծ գունտիկներից: Չուաները գարնան ժամանակները լճի և աւուների մակերեսյթի վերայ լրզումէն: Գորտը չէ նստում նրանց վրայ և յանձնումէ բնութեանը • նրա այս

<sup>1</sup> Այս ամէնը ուսուցիչը կարող է ցոյց տալ իր փոքրիկ աշակերտներին շօշափելի կերպով. նա ամէն տեղ կատող է գորտ ձեռք գցել և երեխաների առաջ կտրատել, նրանց ցոյց տալով մարմնի մասերը:

պաշտօնը արեգակն է կատարում: Մի քանի օրից յեայ այս ձուաներից դժւրս են գալիս փոքրիկ կենդաններ, որոնք բոլորովին գորտին նման չեն: Այս փոքրիկ գորտի ճուտերին շեքէփակնեն ասսւմ: Շերեփակակոթը մի զարմանալի տեսք ունի. նրա մարմինը բաղկանումէ միայն մի բոլորակ հաստ բնից, գլենից և պափակ ու լայն պոչնից, պոչը նրա լող տապու գործիքն է: Շերեփակակոթը ոփներ ամենեին չունի: Գլխի առաջի կողմում գտնվումէ բերանը և աչքերը: Գլխի կողմերումը առաջի օրերում նա ունենումէ քիմուտիկներ (շնչառութեան գործի, թռպերի տեղ), որոնցով շերեփակոթը շնչառումէ: Եթէ շերեփակոթը ջրից հանենք նրա քիմուտները կը չորանան և կենդանին կմեռնի: Այս փոքրիկ գորտը սննդվում է ջրի փոքրիկ կենդանիներով — որդերով և միջատներով: Մի քանի ժամանակից յետոյ երեւումնեն շերեփակոթի ետեի ոտները, յետոյ առաջները, որանից յետոյ նրա մէջքի հին մաշկը պատով վումէ և գուրս է գալիս փոքրիկ գորտ, փոքրիկ պոչով: Յետոյ ոչնչանումնեն նրա քիմուտները և երմումնեն լուսեր: Գորտը ջրումն էլ չէ կարող շունչ առնուլ. նա ջրից գուրս է գալիս և սկսումէ ցամաքի վերայ թռչկոտալ: Փոքր ինչ ժամանակից յետոյ մնացած փոքրիկ պոչն էլ մարմնի մէջը կուլէ գնում — եւ ըլուումէ կոկոն գորտը. գորտի ձուից գուրս եկած ուտերը իր մօր նման չեն. նրանք գեռ լինումէն

շնրեւլակովեր և յետոյ գորտի են փոխվում։ Գորտը  
Հերտուանութիւնը կենդանի է։

Ի՞նչպէս են բազմանում կաթնակերները և  
թռչունները (հոմանապատճեն և զանազանաթիւն)։

Գորտը զանազանվումէ կաթնակերներից նրա-  
նով որիրան ձագերին կաթնով չէ սննդում և մար-  
մինը բրդով չէ ծածկուած։ իսկ թռչուններից —  
նրանով, որ նրա առաջի ուսները թևերի նման չեն  
և մարմինը վետուրներով չէ ծածկուած։ (Համեմա-  
տեցէք գորտը մի կաթնակեր կենդանու և մի թռ-  
չունի հետ)։

Նիստուալին, Հարկաւոր է նկարագրել տալ նմանապէս  
օձը, խլեղը, կրեան և այլն։ Օձը, խլեղն և կրեան,  
բնապէս և գորտը սովորակը են, նրանք իրանց փորի  
վերայ քրիստուն են անում։

## Բ. ԶԿՆԵՐ

### 2. Զ Ո Ւ Կ Բ :

Չուկը իւր արտաքին տեսքով շատ քիչ նմա-  
նութիւն ունի կաթնակերների, թռչունների և սո-

1 Դնելով այս տեղ մի ձկան նկարագրութիւն, կար-  
ծում ենք որ ուսուցիչներին դժուարութիւն չի լինի ձեռք  
բերել աշակերտների բնակած շրջանից մի ձուկը և նկա-  
րագրել այն ձուկը աշակերտների առաջ։

Չունների հետ։ Զկան մարմինը բոլորակ, երկայնաձև  
ու կողմերից սղմված է։ Նրա մարմնի տեսքը նաև  
շակի նման է։ Զկան մարմնի վերայ մենք տեսնում  
ենք զլուխ, բուն ու պոչ։ բայց ուսները չենք նշանա-  
րում, նրանց տեղը կան լրացներ։ Գլուխը եռան-  
կիւնի է. զլսի վերայ կայ երկու աչք առանց կոպի  
և երկու քթի ծակեր։ Չուկը արտաքին ականջներ  
(խխունջ) չունի, թէև շատ լաւ է լսում. զլսի  
կողմերումը գանգումեն երկու պինդ լսիեր, և նը-  
րանց տակը կարմիր +իմուխուեր (շնչառութեան գոր-  
ծիք)։ Զկան բերանը մեծ է և խխու լայն է բաց լի-  
նում։ բերանի մէջ կայ լեզու և շատ փոքրիկ ա-  
տամներ։

Զկան բնի վերին մասին ասումեն մէջք, ներ-  
քինին որովայնիկ։ Չուկը վիզ չէ ունենում։ Պոչը  
ձկան ետեւե նեղ մասն է, արցը վերջանում է լողա-  
վերգ. ձկան պոչը գէպի աջ ու ձախ կողմերը շատ  
շարժական է և այսպիսով ձուկը առաջ է լողում։  
Այս ձուկը ունի ութ լողաթեւեր, չորսը չունի  
(զոյդ) և չորսը իւնո (հատ-հատ) են։ Մի զոյդը գտ-  
նվումէ զլսի ետեւումը, այս իւնութիւնը թևերն են. միւս  
զոյդն էլ փորի վերայ և սրանց ասումեն սրահայն  
թևեր։ Կուրծքի թևերը միւս կենդանիների առաջի  
ոսկեւէ տեղն են բռնում, իսկ որովայնիկնը — եկեւ-  
ոսկերի տեղը։ Մէջքի վերայ կան երկու հատ հատ  
թևեր։ Մէջքի առաջնի եւ մէջքի եփելի թէ։ Մի հատ թէ  
9

Էլ կայ պոչի վերայ . պոչի թեմի մի ծայրում կայ փոս . մի հատ թե էլ կայ պոչի տակին — որևէ պահի թե : թեւերը ձկան լող տալու համար են : ձուկը նրանց միջնորդութեամբ կարողէ առաջ եւ ետ, աջ ու ձախ լող տալով գնալ եւ թեքվիլ . նա կարողէ նմանապէս ջրի տակը մտնել եւ երեսին դուրս գալ . ձկան թեւերը կատարումեն մի արտար զեկի պաշտօն : Զկան մարմինը ծածկուած է բոլորակ պապղուն եւ պինդ թեփերով : Զկան մարմինը շատ սոթիլիկ է, որովհետեւ նա ծածկուած է լորձունքով, որ դուրս է գալիս կաշուից, թեփերի միջեց : Աթէ այս լորձունքը չլինէր այն ժամանակ ձկան կաշին եւ թեփերը թաց կլինէին ջրից :

Զկան մարմինը, ինչպէս եւ մեր բողոք վերեւը զննած կենդանիներինը, կազմուած է անդրադիմէց, մասնաւուներից եւ արիւնից <sup>1</sup> : Գլխի միջի գոգալի մեծ ու կորների հետ միացած է ողնաշարը, որ ձգուած է ձը կան բոլոր երկայնութեամբ : Ողնաշարի երկու կողմից դուրս են գալիս սուր իրավունք : Զկան մկանունքները-միսը սպիտակ է կաթնակերներից եւ թռչուններից, որովհետեւ նա քիչ արիւն ունի : Զկան առ

1 Այս մասերը աշակերտները պէտք է չօշափելի կերպով եւենանեն : Առհասարակ ուսուցիչը չպէտք է խնայէ աշակերտներին մի ձուկը մատաղ անել, նրանց առաջը կտրատելով և նկարագրած մասերը ցոյց տալով . միայն այս դեպքում նկարագրութիւնը կլինի վովին և կատարեալ .

ըիւնը կարմիր եւ սառն է . (ո՞ր կենդանիների արիւնն է տաք եւ որո՞նց սառը) : Եթէ վերցնենք ձեռներում ձուկը, կզգանք որ նրա արիւնը մերինից սառն է :

Չուկը ապրումէ միշտ ջրի մէջ եւ իր շնչառութեան համար օդը այն տեղէ գտնում, քիւմուխտներով, — միայն ձուկը ջրի մէջ կարողէ շունչ առնուլ : Աթէ ձուկը ջրեցը հանենք, նրա քիմուխտները կցամաքին եւ ել չէ կարող օդ ծծել . այս պատճառով էլ ձուկը հանգստանում (մեռնում) է :

Քիմուխտներից կարելի է խմանալ թէ ձուկը վաղէ հանգստացել, թէ ոչ . եթէ քիմուխտները արիւնով լիքն են եւ կարմիր, կնշանակէ որ շատ վաղ չէ որ ձուկը կենդանի է եղած . իսկ եթէ քիմուխտների մէջ քիչ արիւն կայ և սպիտակ է, կը նշանակէ որ ձուկը արգէն վաղէ հանգստացել : Քիւմուխտները թաքերի պաշտօն են կատարում : Զկան մարմինի մէջ, բացի սուամիքսից, աղիքներից եւ այլն կայ եւ մի բշտիկ (փուչկ), որ բաղկանումէ օդով մերը բարակ մաշկից : Բշտիկը թեթեւայնումէ ձը կան ծանրութիւնը ջրի մէջ եւ նա աւելի հեշտութեամբ կարողանումէ իրան ջրի երեսին պահել :

Զկանը ձվիկներով են բաղմանում : Զվիկները թռունումեն ջրերի ափերում, բարակ տեղեր և իրանց ձագերի վրայ ամենեւին հոգացողութիւն չունին : Զվիկներից դուրս են գալիս շատ փոքր չունին :

Ձկներ (փիշեռւլներ), որոնք իրանց մօրից միայն հասակով են զանազանվում: Ձկները ապրում են զետերի, լճերի եւ ծովերի մէջ: Նրանք սննդվում են միոքրիկ ձկներով, միջատներով եւ այլն: Չուկը բաւականին օգուտ է տալիս: Ձկան միսը համով է. ձկնից պատրաստում են զանազան տեսակ ուտելիքներ: Ձկան իւղը բժշկականութեան մէջ լրարութեան գէմեն գործ դնում:

Համեմատեցէք ձուկը գորտի, բաղի և շան հետ (ամենալեռ և պահպանութեան),

ՄԵՐ ԲՈԼՈՐ ՎԵՐԵՒԾ ԶՆՆԱԾ ԿՆԵԴԱՆԻՆԵՐԻ ՎՐԱՅ  
ՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ ԵՒ ԿՐԿՆՈՂՈՒԹԻՒՆ:

Ալթնակեր կենդանիները, թռչունները, սողունները եւ ձկները նման են միմեանց իրանց սոսկորներով: Այս բոլոր կենդանիները ունին սոէերաքիչ. թէե մի քանիսները սրանցից կողքեր և ոտներ (օձը) չունին, բայց բոլորն էլ ունին աղաջար և գագալ. սորա համար էլ կաթնակերներին, թռչուններին, սողուններին և ձկներին միասին ասում են ողնաշարտոր չէնդանիներ: Ողնաշարաւոր կենդանիները առհասարակ չորս ունեն ունին — չորսից աւելի չկան: Ողնաշարաւորների գլխի վերայ կայ բերտն երկու ծնօտներով, լեզուով և ատամներով. երես աչ և երես

առանձնէր: Մի քանիսը ունին երես աչան: Ողնաշարաւորների արիւնը կարմիր է. — կաթնակերներինը և թռչուններինը պատկանունք է, իսկ սողուններինը և ձկներինը պատկանունք է: Ողնաշարաւորների արիւնը շարշժվում է երանիների մէջ: Կաթնակերների և թռչունների և մի քանի սողունների արիւնը հագրված է թռչերում, գորտինը գեռա քիմուխտների մէջ, իսկ յետոյ թռչերում, ձկներինը բոլոր ժամանակ քիմուխտներում: Կաթնակերների մարմինը ծածկուած է մազերով, թռչուններինը փետուրներով, ձկներինը թեփերով, գորտինը և առհասարակ սողուններինը մերկ է<sup>1</sup>:

<sup>1</sup> Ուսուցիչը պէտք է աշխատէ հարց ու պատասխանների միջնորդութեամբ այս տեղեկութիւնները հաղորդել աշակերտներին.

նումէ նրանց մօռովլ։ Բեխերը թրթուրի շօշակոռ  
զութեան գործիքն է։ Թրթուրի խողովականման բե-  
րանը կազմուած է ծնօաներից. նրա բերանը կարելի է  
փոքրիկ է՞ճիլ անուանել։ Թրթուրը իր կնճիթով չէ  
կարող ոչ ծամել, ոչ ուտելիքը կալուլ, նա միայն  
իր երկար կնճիթով կարող է հեղանիւլը ծծել. այս  
ժամանակիները թրթուրը իր կնճիթը կոխումէ ծա-  
ղիկների բաժակների մէջ և այն տեղից ծծումէ նրա-  
նց քաղցր հիւթը։ Թրթուրի կնճիթի կողմերում  
գտնվում են նմանապէս երկու յօդատոր բաւականին  
մէծ անդամներ, որոնց կարելի է շրթուածների շօշակում-  
նէր անուանել։

Թրթուրի կուրծքը բաղկանումէ երես յօդերից —  
խաղերից։ Կուրծքի ներքին երեսի հետ միաւորվում  
են ուները, իսկ վերեւի երեսից թևերը։

Թրթուրի երես զյուգ ողները միաւորվում են  
կուրծքի երեր յօդերի հետ։ Առաջի զյուգը շատ  
փոքր է և կեռացած։ Նրանք զյուի մօտի մազերի  
տակն են պահուած և դժուարութեամբ կարելի է  
նկատել։ Այս ուները վերջանում են մի մաղէ փուն-  
ջով, որով Թրթուրը սրբումէ իր զյուխը։ Միւս  
երկու զյուգ ուներն ել փոքր և անզօր են։ Ուները  
բաղկանում են չըս յօդերից, վերին յօդը մազերի մէջն  
է պահած և չէ երեւում, իսկ միւս երեքը (ազդը,  
ոլոգ և թաթը) յայտնի երեւում են։ Թաթ երը բաղ-  
կանում են հինգ յօդերից, որոնք վերջանում են շան-

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

### ՄԻՋԱՏԵՐԵՐԻ

Ա. ԲԱԶՄԵՌԱՆԳ ԹՐԹՈՒՐԻ

Բաղմեռանդ թրթուրի մարմնի վերայ կարելի  
է պարզ տեսնել երեք զիսաւոր մաս՝ դլուխ, բուն  
և անդամներ (ոտներ և թևեր)։

Թրթուրի գլուխը փոքր և բրդոտ է։ Գլխի վե-  
րայ մենք տեսնում ենք երկու աչքեր, երկու բեխեր  
և մի բերան։ Աչքերը նիստականին են, գանվում են  
գլխի կողմերումը և շրջապատած են երկար մազերով։  
Բեխերը կամ շշափուիները կազմուած են շատ մա-  
սունքներից-յօդերից։ Թրթուրը բեխերով անդադար  
շարժումէ և շօշափումէ առարկաները, երբ անց-

<sup>1</sup> Միջամաները ուսումնասիրելով ուսուցիչը անսպա-  
ռելի նիւթ ունի իր ձեռի տակ։ Միջամաները շատ ձեռն-  
տու են նկատողական ուսման համար. նրանց զարնան և  
ամսու ժամանակներ ամէն տեղ կարելի է գտնել, ձեռք  
զցել, դասատուն էլ բերել, ամէն կողմից ուսումնասիրն և  
նրանցից պատրաստել ամբողջ կոլեկցիա։

կերով : Թրթուրը արագ եւ երկար ժամանակ մանազ գալ չէ կարող . նա աւելի շուտ շուտ թռչում է քան թէ ման է գալիս , սորա համար էլ նրա ոտները անզօր են : Ոտները նորա համար են , որ թրթուրը կարողանայ բունիկների վերայ կանգնել , երբ նա ուղում է հանդստանալ կամ վատ եղանակից փախչիլ : Թրթուրը երիա զայտ մեծ եւ լայն լեռնի ունի : Թեերը եռանկիւնի ձեւ ունին : Նրանք կրծքից կոչում են նեղ ափովը : Թրթուրի թեերը ծածկը ված են գունաւոր փռչիլ : Այս ձեռով սրբենք այս փոշին թեկից , այն ժամանակ մենք կըտեսնենք , որ թրթուրի թեերը լատացիէ դառան և կազմուած են թափանցիկ լատացնել կամ փառով , որոնց միջով անցնում են մի քանի երակներ : Թրթուրի թեերի վրայի կաշին պսպղան և գեղեցիկ է : Բազմեռանգ թրթուրի թեերի վերին կողմը շեկ գոյնի է և սեքորով (շրջանակով) շրջապատած է , որի վերայ երեւում են կապուտ գծեր : Առաջին թեերի երեսի վերայ գանվում են երեք սեւ երեք դեղին բծեր , իսկ մեջ սեղը չորս սեւ բծեր : Ատեհի թեերի վերայ կայ մի սեւ բիծ : Թեերը բնի մօտ ծածկուած են երկար եւ թռւս մազերով : Թեերի ներքին երեսը սեւ զայնի է մոխրագոյն եւ զեղին բծերով ծածկուած :

Թարթուրի փռը բաւականին բարակ է եւ բաղկանում է վեց յօդերեց : Փորի և կուրծքի մեջ ոչինչ

փոս չկայ : Թրթուրի փորը ծածկուած է կարծ մազերով : Փորի վրայի մազերի մեջ գտնվում են շահառութեան ծակոտիչները , որոնցով թրթուրը շունչ է առնում . ուրեմն թրթուրը բերանով չէ շունչ առնում և թոքեր էլ չունի . (ո՞ր կենդանիներն են թռթերով շնչառում):

Եթէ վերցնենք մի թրթուր և զիլենք , մենք կտեսնենք որ նրանից թափվում է սպիտակ ալիքն և ոչ կարմիր , (ո՞ր կենդանիները կարմիր արիւն ունին) : Կտեսնենք նմանապէս որ նրա մարմնի մեջ ոսկորներ չկան , ուրեմն չկայ և ողնաշար . ուստի թրթուրը անողնաշար էնդուռնի է , (ո՞ր կենդանիները ողնաշար ունին) : Թրթուրին ասում են նմանապէս մշտու , որովհետեւ նրա մարմնը և մարմնի մասունքները բաղկանում են մասերեց , յօդերեց և իտպէրեց :

Բազմեռանգ թրթուրը թռչում է միայն ցերեկը , լաւ եղանակներին , երբ արեգակը պայծառ լրյա է տալիս և սաստիկ տաքացնում : Այս տեսակ թրթուրներին կարելի է տեսնել դաշտերում , այդիներում տանձի և բաղի ծառի մօտ : Թրթուրը երկար ժամանակ չէ թռչում , այլ լաւչուռում է մի ծաղկից դէպի միւս ծաղիկը , նրանց քաղցր հեղանիւթը ծծելով : Թրթուրները միայն մի քանի օր են ապրում . նրանք իրանց ձուանը ածելուց յետոյ մեռնում են :

Բազմեռանգ թրթուրը իր ձուիկները դնում է

տանձի և բալի ծառի վերայ։ Բազմեռանդի ձուասնից գուրս են գալիս Արթուրներ, որոնք որդիների նման են։ Թրթուրը ունի պինդ ու ամուր ծնօաներով զլուս։ Նրա մարմինը մաս մաս — յօդ յօդ է բաժանված և ծածկուած է կակուղ մորթով ու բրդով։

Թրթուրի մարմինը մուք մոխրագոյն է մի քառնի գեղին զօլերով։ Թրթուրը ունի ուժ զոյդ կարծ ուներ։ Առաջի երեք զյուտ ուները չանկերով են վերջանում։ Բազմեռանդ թրթուրը սննդվումէ այն ծառերի տերևներով, որոնց վերայ գուրս է գալիս ձուից։ Նրանք շատահեր են, նրանք անկուշոի պէս անդադար ուտումեն ծառերի տերևները։ Եթէ մի ծառի վերայ լինին շատ թրթուրներ, այն ժամանակ նրանք բոլորովին նրա տերևները կուտեն և ծառն էլ կը փշանայ։ Բազմեռանդ թրթուրները առաջի օրերում մի ողջ ընտանիքով են ապրում, այսինքն բոլոր թրթուրները, որոնք գուրս են գալիս մի մօր ձուից, լնակվում են միասին։ Թրթուրը շատ վնասակար կենդանի է, սորա համար էլ աշխատում են նրանց ջնջել։ Թրթուրը իր կեանքում մի քանի անդամ փրկում է իր հին մաշկը, այս ժամանակները նա ոչինչ չէ ուտում, նրա մաշկը չորանումէ և մէջքումը պատումէ։ Այս ճեղքից թրթուրը շուտով գուրս է պրծնում իր հին հագուստով, նոր մաշկ հաղած։ Թրթուրը մի քանի անդամ փոխումէ իր մաշկը։ Աշունքները թրթուրները հարու

նէտի կամ բռժոժ են կերպարանափոխում, հարսնեակը ետևի ուներով կախ է ընկնում ծառի ճիւղից և ողջ ձմեռը մնումէ այս գրութեան մէջ։ Գարնանալուն պէս հարութակը թրթուր է դառնում։ Հարսնեակի վերայի մաշկը պատռվումէ և նրանից թրթուր (պակնակ) է գուրս գալիս։ Թրթուրը դեռառաջ կակուղ մաշկովէ լինում ծածկուած։ Նրա թեւերը ձմեռորած են լինում, բայց մի քանի ժամից յիտոյ նա ցամաքումէ և արդէն կարողէ թուչիլ։

Թրթուրը տնողաշար կենդանի է։ Թրթուրը յօդաւոր կենդանի — ֆլոր է։ Թրթուրը էւրպարտութեակը կենդանի է, այսինքն նա զեռ առաջ ձուից թրթուր է լինում, յետոյ հարսնեակ կամ բօժօժ, և ապա պակնակ կամ թրթուր է զառնում։ Այսպիսի կերպարանափոխութեանը ասում են կտառեալ էւրպարտութեակներ։ Թրթուրը էւրպարեալ էւրպարտութեալ մէջութիւն։

## 2. ՄԵՂՈՒ (ՄԵՂԱԾԵՆՃ)<sup>1</sup> :

Մենք պարզ աեսնում ենք, որ մեղուի փոքրիկ մարմինը, ինչպէս և թրթուրինը երեք մասերից է կազմուած։ զլսից, բնից և անդամներից (ուներ և թեւեր)։ Գլուխ բաւականին մեծ և լայն է։ Գլուխ

1. Այս զասի համար բացի մեղուից հարկաւոր է ցայց տալ աշակերտներին, մոմ, չեչ և մեղք, կամ աւելի լաւ մեղբահաց։

վերայ տեսնում ենք աչքեր, բեխեր և բերան։ Աչքերը դասաւորված են զլիսի կողմերում։ Բեխերները դանգում են զլիսի առաջի երեսի մէջ տեղը։ Մեղուի շշափութերը սև թելի նման են և բաղկանում են շատ յօդերից։ Մեղուն թէև արտաքին ականջներ չունի, բայց կարելի է հաստատել, որ նա լսումէ, որովհետեւ մեղուն աղմուկից փախչումէ։ Մեղուի վերին ծնօաները քաղաքաթինի ճեւ ունին, վերին շրթուունքը փքրիկ է։ Ներքին ծնօան ու շրթուուքը կազմում են մի համեմատ, կամ ծծելու դործի։

Մեղուի բուռլ բաղկանումէ երկու զլիսաւոր մասերից, առաջին և եսելին, կուրծքից և փորից։ Մեղուի իրածութ գնապէն է և վերևից դուրս ընկած։ Կուրծքը բաղկանումէ երեք յօդերից կամ մասունքներից։ Այս յօդերից միանում են երեք զոյդ ուներ։ իսկ կրծքի վերևի մասից — երկու զոյդ թևեր։ Փորը միանումէ կուրծքի հետ բարակ թերով, այնպէս որ նա կալողէ ազատ շարժել։ Փորը ձուաձեւ է. վերևի կողմից դուրս ընկած է, իսկ ներքեւի — տափակ։ Փորը բաղկանումէ վեց յօդերից — մասունքներից. առաջի յօդը ամենից լայն է. վերջենումը լինումէ խայթոցը, որով մեղուն կծումէ և թունաւորում։ Մեղուի կծածը ուռչումէ և շատ ցաւում։ Մեղուի փորի ներքի երեսի վերայ մենք նշմարում ենք ծանրակիներ։ Այս ծակոտիքները մեղուի շնչառութեան համար են, (եւ ինչ կենդանի

ծակոտիքներ ունի)։ Եթէ այս ծակերը ծածկենք մեղուն կհանդչի։

Մեղուն ունի երեք զոյդ ուներ, որոնք միաւորված են կուրծքի յօդերից։ Առաջի զոյդը ամենակարծն է, իսկ ետևինը ամենաերկար։ Ոտները բաղկանում են չորս մասերից, ինչպէս թրթուրինք վերի մասը փորի մազերի մէջն է սպահած, իսկ միւս երեք մասերը (որո՞նք էն) յայտնի երեւում են։ Թաթը բաղկանումէ հինգ յօդերից, վերի յօդի վերայ կայմի մազը սրբիչ, իսկ վերջնի վերայ երկու փոքրիկ չանկեր։ Մեղուների ոսները աւելի ուժով չեն, ուրովհետեւ նրանք աւելի թռչում են, քան թէ ուսուների վերայ մանգալի։

Մեղուն թռչումէ իր թևերի օգնութեամբ։ Մեղուն երկու զոյդ թեւ ունի։ Թևերը միանում են կուրծքի վերի մասից. երկու զոյդ թևերն եւ միմեանց նման են և բաղկանում են Առփանցին թաղանթից — փառից, որոնց միջով անցնում են երակներ։ Մեղուն թռչումէ իր թևերը։ Մեղուները շատ լաւ և բաւական չենու են թռչում։ Մեղուի բգացը թևերի շուտ շուտ շարժելուցն է ծագվում։ Մեղուի մարմինը ծածկուած է սև մաշկով և մազերով։

Մեղուները հաստակէտն կեանք են վարում, նրանք առանձին չեն ապրում, այլ ամէն մի մեղուն պատկանումէ մի օր և իցէ իմբէ (Հապրակութեան)։ Եթէ մի քանի մեղուներ պատահմանը ջոկվին իւ

բանց խմբից, նրանք ապրել չեն կարող և ողէտք է մեռնին: Աեղուները խմբով բնակվում են կամ անտառներում, կամ ծառերի խոռոշների մէջ և կամ փէլահներում, որ մարդը շինում է նրանց համար: Աեղուների խումբը մեծ մասով բաղկանում է քրի հեղաներից, որնոց ասում են բանառ, աշխատառ կամ ճշի մեղուներ, մի քանի պարապ արու մեղուներից և մի ձանձնելուց — լագուհեաց:

**Ա**յեղուները անսղվում են ծաղիկների քաղցր հեղանիւթով. նրանք թռչոսում են մի ծաղիկց դէպի միւս ծաղիկը. իրանց կնճիթը կոխում են ծաղիկի բաժակի մէջ ու նրա միջի քաղցր հեղանիւթը ծծում են: Այեղուի փորի մասունքների մէջ դաստիարակում է մոմ: Մոմը մեղուի մաշկի տակից դուրս է դալիս, ինչպէս մերինի տակից դրբինչը: Այեղուները իրանց թաթերի սրբիչով ժողովում են այս մոմը բերանում, ծամում են և յետոյ չեւ են պատրաստում իրանց վեթակի համար: Փեթակի մէջ առ մէն բան աշխատաւոր մեղուներն են շինում: Նրանք դեռ վեթակի միջի ծակ ու ծուկը կախում են կպչուկ նիւթով, որ օղը շխաղայ. միայն մի կողմից մի ծակ են թողնում, որ իրանք կարողանան բանել — դուրս ու ներս անել: Յետոյ մոմից մեղուները շինում են չեւ: Չեւը բաղկանում է շատ միաւորված վեց անկիւնանի վոսերից: Այս չեւը փոսերը մեղուները մեղով լցնում են: Այդը պատրաստում են

իրանց սասմնքսում այն քաղցր հեղանիւթից, որ մեղուները ժողովում են ծաղիկներից: Աեղուները ցուրտ և խոնաւ ժամանակներին օննդվում են այս մեղովից:

**Ա**յեղուները բանւորներից շատ քիչ են: Նրանց զլու խը աւելի մեծ է, փորը նմանապէս մեծ և հաստ է: Արուները փեթակում ոչ մի գործ չեն շինում, բայց շինողներից — աշխատաւոր մեղուներից աւելի են բզբացնում և ողջ ժամանակները սրարապ են ման զալիս: Կրբեմն նրանք ճանճամօր — թագուհու և առելից դուրս են թռչում, շրջապատում են նրան յարձակունքներից պաշտպանելու համար: Աշխատաւորները ամառ ժամանակը, երբ ուտելիքը լի է, չեն արգելում արուներին իրանց աշխատանքովը ապրել, բայց աշնան ժամանակները, երբ ուտելիքը պակսում է, ել չեն թռչում նրանց որ իրանց աշխատանքն ուտելիքի պահաս ժամանակը վհացնեն. և դուրս են անում նրանց վեթակից սաստիկ պատերազմ բաց անելով նրանց դէմ: պատերազմը շարունակում է մինչեւ որ աշխատանքները, որնոք թփով աւելի շատ են, բոլոր արուներին յաղթում են, վեթակից դուրս անում, ջարդում և սպանում:

**Ճ**անճամերը — լագուհին աշխատանքներից շատ մեծ է և նրա փորը մերկ է: Ամեն վեթակում միայն մի մայր է լինում, որին միւս մեղուները պահպա

նումեն: Երկու մայր մի վեթակում խաղաղ ապրել չեն կարող, մինը միւսին պէտք է յաղթէ և սպանէ: Մայրը հարկաւոր է վեթակի համար միայն նրանով, որ չու է ածում (աշխատողներ և արուները ձու չեն դնում): Աթէ մայրը հանգչի բոլոր մեղուներն էլ կհանգչին, որովհետեւ ուրիշ ձու ածող չկայ: Մայրը իրան ձուաները դնումէ չեցի գատարկ փոսերի մէջ, միւսները մեղովին լիքը լինում: Մէ քանի օրից յետոյ ձուաներից դուրս են գալիս ու զլանի, առանց ոսների փոքրեկ սպիտակ լրտերէ (որդեր): Երբ որ մօտենումէ հարժաեակ դառնալու ժամանակը, աշխատողները ծեփումեն վերեկց փոսերը, իսկ թրթուրները ներքեկց զցումեն նուրբ փառ և հարսնեակ են փոխվում: Հարսնեակները իրանց բանտի մէջ ոչ ուտումեն, ոչ խմում: տասն օրից յետոյ հարսնեակները թշուներէ են իւրպարտափոխվում: Աշխատողները իսկոյն մաքրումեն չեցի փոսերը, և մօրացու մեղուի համար աւելի ընդարձակն են շենում: մայրը սկսումէ կրկին ձու գնել, որոնք էլի թրթուր, հարսնեակ և մեղուներ են դառնում: Աթէ մի վեթակի մէջ ժողովին շատ մեղուներ, այն ժամանակը մեծ մեղուները մեծ մօր հետ թողնում են վեթակը և դուրս են թռչում — չափ են առլիս, իրանց համար նոր բնակարան գտնելու համար: Ըստանեցրած մեղուների ձափերը ժողովումնեն մի ծառի ճիւղի վերայ, իսկ դիւղացի մեղուազահը շապում

է կալնուլ նրանց և մի նոր վեթակի մէջ դնել: Այս պատահումէ ամառ ժամանակները: Այս մեղուները իսկոյն սկսումէն իրանց վեթակը բնակութեան համար յարմար պատրաստէլ:

Մեղուները լինումեն ընտանի և կայտէնի: Վայրենի մեղուները բնակվումեն ծառերի խոռոչների մէջ, ապառաժների վերայ, իսկ ընտանիները վեթակի մէջ, մեղուատանը, որ մարդը շինումէ նրանց համար: Մեղուն օգտաւէտ միջատ է, նա մարդուն տալիս է մոմ և մեղք, սրա համար էլ մարդը նրան ընտանեցրելէ: Մեղուատաները շինում են այգիներում կամ մի այնպիսի տեղ, որ տեղ գտնվաւմեն բաւականին ծառեր և ծաղիկներ: Զմեռները մեղուները ները կայտ են կտրում և ոչինչ չեն ուտում: Մարդիկ վեթակների ծակերը ամուր ծեփումեն և պահում աւելի տաք տեղ, որ չհանգչին:

Մնացուն դըտ է, նրա արիւնը սպիտակ է: Նա ոսկերոտիք չոնի, մեղուն անհաջողաբեր կենդանի է: Մեղուն չունի նմանաբէս թոքեր, նա ծակութիքներովէ չնշառում: մնացուն ունի սոսամոքս և աղիքներ:

Մեղուների նման հասարակական կեանք վարում են նմանապէս մրջիւնները: Նկարագրեցէք մը ջիւնը: — Համեմատեցէք մեղուն մրջիւնի հետ: — Համեմատեցէք միջաւար մը ջաւար անողնաշար աւոր կիսադանին, ողնաշար աւոր ի հետ: (Նմանութիւն և պահապահութիւն):

Յ. Ա.ԲԻԵՇՈՒՄԻ (ՇԵՐԱՄԻ) ԹԲԹՈՒՐ :

Արքշումի թրթուրը իր մարմնի մեծութիւնով, ձեռով և կերպարանափախութիւնով նման է բազմեռանդ թրթուրին։ Արքշումի թրթուրի մարմնի մասերը բաղկանում են միան նցն մասերից, ինչից և բազմեռանդ թրթուրը։ (Ի՞նչ մասերից է բաղկանում բազմեռանդ թրթուրի մարմնը, նկարագրեցէ՞ր)։ Եերամին, ինչպէս և մեզբաձանձնն, մարդը պահումէ, մեծացնումէ և նրա մասին հոգս է քաջում։ Նրա համար մարդը պարտէ զներ է շինում և այն պարտէ զների մէջ թթենիներ է տնկում նկան մնելու համար։ Ծնննմէ նմանապէս նրա համար տներ։ Վայրենի արքշումի թրթուր չկայ, մարդը նրան շնորհուեցրել է արքշումի թելի համար։ Այս թրթուրները ձու են ածում, մանդալիս և թռչում են միայն երեկոյեանները, երբ մութը առնումէ։ սորա համար էլ նրանց գէշերնան լրեւուր են առում։

Գարունները արեգակը իր ճառագայթներովը տաքայնումէ շերամի վոքրիկ ձուիկը, որի մէջ և բհամէ գալիս փոքրիկ որդ։ Այս փոքրիկ որդը իր երկու սուր ատամներով կատրումէ ձուիկի կձեալը և լոյս աշխարհ է դուրս գալիս։ Այս որդը առաջ լնումէ շատ փոքր, ու և փշերով ծածկուած, յետոյ մեծանումէ, դեղնանում և մաշկը հարթանում։ Կերամի որդի մարմնը բաղկանումէ տասն և երեք

անդամներից։ Գիսի վերայ իւրաքանչիւր կողմերում երեսումն երկու աչքեր, որոնցով թրթուրը տեսնումէ առարկաները և ծամերու համար պինդ ու ամուր ծնօտներ։ Փողի վերայ կան տասն և վեց առներ, վեցը առաջում, իսկ առաջը ետեսում, որոնցով որդը կարողանումէ շարժվել։ Եերամի թրթուրի կողմերում դանիվուցեն չնշառութեան ծուրակներ։ Եերամի որդը մինչև հարանեակ դասնալը իր հին մաշկը չորս անգամ փափումէ և դուրս է գալիս նոր աւելի լնգարձակ մաշկով։ Արքշումի որդը շատ ագահ է, նա անգամար զիշեր և ցերեկ ուտումէ և տնինայ սպառում թթենու նորաբօյ հիմնալից տերեւները։ (Թթենիները բաւանում են ապա երկրներում, աւ սապահիկ ցրակը չեն լնում)։

Իր բհամ գալու օրից մի ամիս յետայ արքշումի որդը Լարմնեակ կամ բոծոծ է գառնում։ Այս թքշումի որդի ստամբուխի մէջ կայ մի առանձին տեղ, որ լցվումէ կողչուկ հեղանիւթով։ Այս հեղանիւթը որդի ներքին շրթունքի տակի խողովակով գուրս է հոսում և օգումը չորանում, թելի դառնում։ Այս թելին աբրէշում են ասում։ Որդը այս թել կացնումէ մի բարակ ձիւղից և նրանից սոս է մասնում, այսինքն շինումէ մի այնպիսի տուն, որի մէջ նա հարսնեակ կամ բոժոժ է գառնում։ Ոսար մանելու համար, որդը իր շուրջը պատռումէ արքշումի թելով և պտոյտ է գալիս մինչև այն ժաման

նակ, մինչեւ որ աբրէշումը շինումէ մի վուչ սոր  
կամ էծէ: Այս ոստը լինումէ ձուաձեւ կամ ըն-  
կուզաձեւ: Այսպիսի ոստերից մարդիկ շինումեն աբ-  
րէշումի թել, որ և գործ են դնում կարելու կամ  
զանազան մետաքսեղէնների համար: Հարսնեակը  
ոստի մէջ մնումէ մի քանի օր առանց ուժե-  
լու և խմելու ու մի քանի օրից յետոյ նա թը-  
թուր է դաւնում: Թրթուրը իր բանտից ազատվե-  
լու համար ան լինը թաց է անում ոստը, ծակում  
— բաց անում ու դուրս թռչում: Սրանով ար-  
բրէշումը փշանումէ: Եթէ ուզումեն յաւ աբրէշում  
ստանալ, առաջուց ոստերը ածումեն տաք ջրի մէջ,  
որ հարսնեակներին սպանեն, ու նրանցից կծիկ շի-  
նում: Աբրէշումի ոստը մի վերստաշափ բարակ թելից  
է կազմուած:

Թրթուրը ոստից դուրս գալու օրից յետոյ  
սկսումէ ձու ածել և շուտով հանգիլ: Աբրէշումի  
ձուաները մարդիկ պահումեն հով տեղ, միւս տար-  
վայ համար:

Եթէ պատճենանդ թրթուրի, մնյրաճանձի և  
շերամի պէս էլ հարկաւոր է նկարագրել և մի քանի  
ուրիշ հիջարաւոր յօդաւոր հանդանէնք. բայց որուի, սէնէ անձնան  
և այլն, Կրկնումենք դարձեալ, որ հիջարաւոր ուսումնական  
համար միջատները ամնահարուստ, անսպառելի  
նիւթ են տալիս, Գարնան և ամառուսն ժամանակ-  
ները նրանց կարելի է տեսնել և բռնել ամէն տեղ,  
և ուսումնամիրել նրանց ամէն կողմից:

## ՎԵՑԵՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

### 4. ՄԱՐԴԻ

Երեսի մանկավարժ Պետալօցին կարծումէր, որ  
մարդու մարմնի ուսումնամասիրութիւնը երեխաների համար  
պէտք է լինի սկզբնական ուսման զիմանը առարկան նը-  
կատողութեան, դատողութեան և խօսակցութեան մէջ:  
Միւս ծայրահեղ մանկավարժները մարդու մարմնի ուսումնա-  
մասիրութիւնը ամննեին արտաքսումէին սկզբնական ու-  
սումնից, որպէսն նրանք արհամարհումէին այն միջոցը,  
որով կարելի է զարթեցնել երեխանց զիմանական ընդու-  
նակութիւնը և այն առատ աղբիւրը, որպէտ կարելի է հարս-  
տացնել երեխանցը ամննահարկաւոր սկզբնական տեղեկու-  
թիւններով:

Պետալօցին իր կարծիքը հիմումէր այս երեկի  
տեսութեան վերայ „, ամէն՝ ուսումնական կա-  
տողական լինի“: Ուսուցիչը բոլոր իր սկզբնական կր-  
թութիւնը պէտք է հիմնէ էական առարկաների վկայ, ո-  
րոնց կարելի է ենթարկել անմիջապէս արտաքին զգայա-  
րանքներին, տեսանելիքի, շօշափելիքի և լսելիքի: Ինչ որ  
ապաւում է այս կրթութեան ժամանակ, բոլոր պէտք է  
լինի ձեռի տակ, ուսումնամարհում, երեխաների աչքի ա-

ուաջ։ Յայտնի բան է որ այս զէպքում ամենայարմար առարկան մարդու մարդու մինն է։ Ամէն աշակերտ, ամէն ուսուցիչ ինքն իր անձը դասատուն է բերում, բայց միենոյն ժամանակ մարդը զննելու, նկատելու և ուսումնասիրելու համար որքան առատ և անսպառնի ասպարեզ է բաց անում զննողի առաջ, որքան օգտակա տեղեկութիւններ կարելի է հաղորդել աշակերտներին նրա ամէն մի մասունքների վերայ։ Մարդը մի ամբողջ բնութիւն է ներկայացնում։ Մինչև անգամ կարելի է շվարիլ այն առատ տեղեկութիւններից, որ կարելի է հաղորդել աշակերտներին պատմելով նրանց բնութեան ազս անվերջ երեսյթների վերայ։

Սորա համար էլ մենք վերցնում ենք մարդը իրրե մի առարկայ այս վարժութեան համար, և սորա համար մենք զրինք մարդը վերջը, որ նրա վերայ կարելի մինի երկար խօսել այդ վարժութիւններից յետոյ, որոնցով արդէն փոքրիկ աշակերտների դիտութիւնը բաւականին հարստացած կլինի կենդանիներին վերաբերեալ տեղեկութիւններով։

#### 1. ՄԱՐԴՈՒՄ ՄԱՐՄՆԻ ԳԼԽԱԿՈԲ ՄԱՌ

Մարդու մարմինը մի ամբողջ մարմնն է, որ բաղկանումէ շատ միմեանց հետ անմիջապէս կապած կամ միացած մասունքներից։ Մարդուս մարմնի զւսաւոր մասունքները երեք են. զլուխ, բուն եւ անշղամներ։ Գլուխը կազմումէ մարմնի վերին մասը, բունը միջին, անդամները, այսինքն ոսները եւ ձեռ-

ները, ներքին եւ մարմնի արտաքին մասունքներն են. զլուխ եւ բնի մեջ տեղաւորված է վիզը։ Բունը հաստատուած է ոտների վերայ, բնի զլուխն վեզն է, իսկ վիզ վերայ հանգստանումէ զլուխը, կամ ուրիշ խօսքով, զլուխ առաջին գանվումէ վիզը, նրա առաջին բունը, իսկ բնի տակին ոտները։ Բնի վերին մասից, նրա երկու կողմովը ցած են իջնում ձեռները։ Մէնք կարող ենք տեսնել միայն մարդու մարմնի արտաքին մակերեւոյթը. նրա ներքին մասերը մեզ համար անտեսանելի են։ Մարմնի արտաքին մակերեւոյթը ունի չորս կողմ։ առաջի, ետեւի, աջ եւ ձեռը, Աջ կողմումը գանվումեն աջ ոտը եւ աջ ձեռը, իսկ ձախ կողմումը — ձախ ոտը եւ ձախ ձեռը։

#### 2. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԳԼԽԱԿՈԲ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԵՐԸ :

Մարդու գլխիը ունի այս մասերը. վերին մասը, այսինքն գագաթ կամ կատար, առաջի մասը, կամ երեսը, ետեւի մասը կամ ծոծրաները եւ վերջապէս ներքին մասը, որ միանումէ վիզ հետ։

Բացի սրանցից զլուխը ունի աջ եւ ձախ կողմեր։ Վզի մասերը. առաջի եւ ետեւի, աջ եւ ձախ կողմերը։ Բնի մասերը. առաջի եւ ետեւի, աջ եւ ձախ։

Բնի տառաջն մասը բաղկանումէ կուրծքից եւ փորից։

Բայ ետևի մասը կազմումէ մէջքը: Բնի աջ  
եւ ձախ կողմերումը գտնվում են կողերը: Նմանա-  
պէս բունը բաժանվումէ երկու մաս: վերին եւ ներ-  
քին վերին մասը կազմումէ կուրծքը, կողերը եւ  
միջքի վերին մասը, իսկ ներքինը — փորը ու միջքի  
ներքին մասը:

**Ա.** Եթին անդամներն կամ չեւել մտերը: ու-  
սերը, ձեռի վերին կամ ուսի մասը, ներքին մասը  
կամ արմանկ եւ զաստակ: Կերտին անդամների կամ  
ուսների մասունքները: վերին մասը կամ ազդը, միջին  
կամ արունդ, ներքին կամ ներբան:

Եւ այսպէս հասկացնելուց յևսոյ հարկաւորէ  
աշակերտներին տալ հարցմունքներ, թէ ինչ է զը-  
լուխը, երեսը, կուրծքը և այլն: Այս հարցմունքնե-  
րին աշակերտները պէտք է պատասխաննեն այսպէս:  
Գլուխը մարդու մարմի զլսաւոր և վերին մասն է:  
Երեսը զլսի զլսաւոր և առաջի մասն է:  
Կուրծքը բնի վերի և առաջի մասն է:  
Սրունդը ոսի միջի մասն է և այն:

### Յ. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻ ԳԼՈՒԽԻ ՄԱՍՆԵՐԻ ԵՐԿՐՈՐ- ԴԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՄ ՄԱՍՆԵՐԸ:

**Ա.** Եթին բազկանումէ ձակատից, աչքերից  
(աջ և ձախ), այտերից (աջ և ձախ), քթից, բե-  
րանից եւ կզակից: Աչքի մէջ նկատումնը այս մա-

սերը, աչքի կակալները, բիթերը, կոպերը, արտեւա-  
նունքները եւ յօնքերը: Աչքի կակալը գտնվումէ  
աչքի փոսի մէջ, և ծածկուած է մկանունքներով և  
թաղանթով:

**Հ**իմայ ասացէ՛ք մարդու մարմնի այն մասերի  
անունները, որոնք ես մատնանիշ կանեմ: Այս —  
աջ աչքն է, այս — ձախը, այս աջ աչքի յօնքն  
է, այս — ձախ աչքի կողն է, և այլն:

**Ա.** Հանունքն մտաւը սպիտակուց, ծխածան և բիթ:  
Քիլը բաղկանումէ հետեւեալ մասունքնե-  
րից: քթի ոսկրից, քթի վերին մասից, քթի առա-  
զատից կամ միջապատից, ուսնգներից եւ քթի  
ծայրից:

**Բ**երանի որդառչն մտաւնունքն է: — վերին եւ ներ-  
քին շրթունքները, բերանի աջ եւ ձախ անկիւնները,  
վերին ծնօտը վերին ատամներով, ներքին ծնօտը  
ներքին ատամներով, լեզու, բերանի առաստաղ,  
կատիկ:

**Լ**եզունքն մտաւնունքն է: լեզուի հիմքը կամ արմատը,  
լեզուի կողմերը և լեզուի ծայրը:

**Բ**երանի առաստաղի առաջին, միջին և յետին  
մասերը:

**Ա**րտաներն մտաւնունքն արմատ և թագիկ:

**Զ**անազան պեսուն արտանունքն է: — վերին և ներքին  
առաջի ատամները, վերին և ներքին աջ և ձախ կող-

մի անկիւնի կամ աչքի, և յեակի կամ այտերի առամներ:

Պլիսի կողմերումը գտնվումեն քունքը և աշկանջները. աջ և ձախ քունքը, աջ և ձախ ականջները: Ականջի մասունքները. ականջականքներ (խլխունջ), ականջափոս և բլթակներ:

2. Աչք մասունքները արդէն վերև յիշեցիսք: Ադամեան խնձորը-կոկորդը գտնվումէ վզի առաջի կողմումը, ծոծրակը — ետևի:

3. Մհջի միջի մասը անուանվումէ ռղնաշար:

4. Թափէլ կաղմումէ ուսի մասը: Ուսի տակին, ընի և ձեռի ուսի մասի մէջ գտնվումէ կռնատակը: Ալմունկը գտնվումէ ձեռի արմունկի մասում: Որտեղ ձեռի երկու մասերը միմեանց հետ միանում են, այն տեղ գտնվումեն յօդեր-խաղեր: Ամէն ձեռի վերայ գտնվումեն երեք այսպիսի յօդեր կամ խաղեր, մինը ուսի մօտ, միւսը արմունկի, իսկ երրորդը դաստակի մօտ:

Դաստակէլ բաղկանումէ բռից և մատներից: Գաստակի այն մասը, որի վերայ ամրանումեն մատները, ասվումէ ափ: Ձեռների վերայ կան հինգ մատներ: Ամէն մի մատը, բացի մեծ մատից (բութ), բաղկանումէ երեք մասից, երեք սսկորից և երեք յօդից: Մեծ մատը միայն երկու մասն ունի և երկու խաղ: Մատները վերջանումեն ըղունգներով:

5. Որո՞ի վերին ճառը կամ աղդրը բաղկանումէ մի սոկրից, միջին կամ սրունդը երկուսից, իսկ ներքինը կամ ներբանը շատ սոկորներից: Ներբանի մասունքները կրունկ, տապան և մատներ:

4. ՄԱՐՄՆԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՄԵԱՆՅ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՌԱԲԵՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Կատարը դլիսի վերին մասն է կաղմում և սահմանակակած է առաջի կողմից Ճակատով, ետևի կողմից ծոծրանքով, աջ և ձախ կողմերով, և զլիսի կողքերի մասունքներով:

Ճակատը երեսի վերին մասն է կաղմում և գըտանվում է կատարից ցած, բայց աչքերի և քթի վերևը:

Աչքերը գտնվումեն Ճակատի ներքեւ, այտերի վերև, քթի վերի մասի կողմերում:

Քիթը գտնվումէ Ճակատի մէջ տեղից ցած, բերանից վերև, աչքերի և այտերի միջում:

Նշագուշութեան: Նոյնպէս հարկաւոր է ցոյց տալ և նկարագրել մարմնի բոլոր մասունքների յարաբերական դրութիւնները.

5. ՄԱՐՄՆԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ԹԻՒԾ :

Անուանեցիք մարմնի թատրով մասունքները : — Դլուխ, զիզ, բուն, երես և այլն : Ամէն մարդ ունի մի գլշուխ, մի ճակատ, մի մէջք եւ այլն :

Անուանեցիք այն մասունքները, որոնցից մարդու ռանի երկու երկու : Աչքեր, ականջներ, ուսեր, ձեռներ եւ և այլն :

Առարտը է՞նչ մարմնի մասունքներ ռանի երես-երես, չորս չորս և աւելի : Ամէն մատը, բացի մեծ (բուլթ) մատից, ունի երեք մասը — երեք խաղ և երեք ոսկոր : Ամէն մարդ ունի չորս չորս մարմնի արտաքին մասունքներ : Ամէն ոտի և ձեռի վերայ կան հինգ մատը և այլն : Ամէն մարդ ունի 10-ական մատ, ոտների և ձեռների վերայ, ձեռի մատները ունին 14-ական մասունքներ, այդքան էլ ոսկորներ և խաղեր, 20-ական ըղունդներ ոտների և ձեռների վերայ, 32-ական ատամներ, բաղմաթիւ մկանունքներ երակներ. ջղեր և անթիւ մաղեր :

6. ՄԱՐՄՆԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՅՆԸ :

1. Առարտի մուելեռոյթը : Գլխաւոր գոյները, որ մեր կողմերումը թագաւորում են մարդու մարմնի մակրեսյթի վերայ, այդ սպիտակ ու կարմրագոյն գոյներն են :

Երեսի և ձեռների գոյները առհասարակ լինում են վոքր ինչ մթնագոյն, քան մարմնի մակերնոյթի միւս մասներինը : Մի քանիսների երեսի գոյնը լինումէ մուք կարմիր, նմանապէս գեղնագոյն :

2. Առարտու մաղերը : Մաղերի գոյնը լինումէ սպիտակ, սև, գեղնագոյն և այլն : Մօրուքը առհասարակ ունենումէ միենոյն գոյնը, ինչ որ գլխի մաղերը : Բայց երբեմն բաց գոյնի է լինում : Մի քանի մարդիկների գլխի մաղերը լինում են սև, իսկ մօրուքինը դեղնագոյն : Երեխայութեան ժամանակը մաղերը լինում են բաց, և յետոյ մքանում են : Ծերերի մաղերը սպիտականում են :

3. Աչքերը զանազան գոյնի են լինում : Բիբը միշտ սև է լինում : Ծիածանը լինումէ զանազան գոյնի — սև, կապուտ, մոխրագոյն և այլն : Սորահամար էլ ասում են սև աշեր, կապուտ աշեր և այլն : Աչքերի մնացած մասերը, այսինքն սպիտակուցը միշտ սպիտակ է լինում :

4. Այսերը — թշերը լինում են վարդագոյն, սպիտակ, գեղնագոյն :

Առաղջ մարդու շրթունքները լինում են կարմիր կամ բաց-կարմիր : Հիւանդ ժամանակը և մեռնելուց յետոյ նրանք կապտանում են :

Լեռան կարմիր է. բերանի առաստաղը, լնտերը կարմրագոյն, իսկ ատամները սպիտակ են լինում :

Ըստագոյնը սպիտակ և կարմրագոյն են լինում :

Արիւնը կարմիր և մօրուքը կարմիր է լինում: Ուշ զեղը դեղնագոյն, իսկ ոսկորները սպիտակ են:

**5.** Միւնոյն կրթութիւնը ուրիշ կարգով:

Մարդու մարմնի մասերից շատերը զլիսաւորապէս լինում են սպիտակ: ատամները, կաշին, ոսկորները, նմանապէս մազերը ծերութեան ժամանակը:

Կարմիր լինում են շրթունքները, թշերը, լեզուն, արիւնը և միուր:

Աւ լինում են շատ մարդկանց մազերը, թերութերունքները, նմանապէս նեղուների կաշին:

Դարչնի (կինամոնի) գոյնի — շատ մարդկանց մասզերը, աչերը և ձեռները:

Խարդեաշ — շատ մարդկանց աչքերը:

Դեղնի կամ դեղնագոյն լինում են շատերի մասզերը և երեսը:

**7.** ՄԱՐՄՆԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ԶԵՒԾ — ՏԵՍՔԸ:

Գլուխը բոլորակ, գնտաձև և երկայնաձև է: Աչքերը բոլորակ, երկայնաձև, կամ ձուաձև է: Բիւրերը բոլորովին կը են: Նրանց պատող թաղանթը նմանապէս կլոր է: Յօնքերը կեռ ընկած են: Քիթը երկայնաձև է, երբեմն ուղղաձիր և երբեմն կեռ: Ատամների արմատները սրածայր են. սողնակները տափակ թագիկներ ունին, իսկ առաջնատամները —

կամ կտրիչները ընդհակառակն սուր են: Ծամելիք ները կռացած են, լեզուն երկայնաձիր է և ծայրը կլոր ու սուր է: Կզակը կամ բոլորակ և կամ սրածայր է լինում: Վիզը հռաջնե է լինում:

Բունը նմանապէս կոնաձև է ու առաջի և ետակի կողմից տափակացրած: Կուրծքը լինում է կամ տափակ կամ բոլորակաձև: Գորը բոլորակաձև մակերեսոյթ ունի: Ձեռները, մատները և ոտներն էլ կոնաձև են: Ներբանի ներքին մակերեսոյթը կամ գարշապարը տափակ է:

Մազերը նմանապէս կոնաձև են. և որովհետեւ նրանց մէջ փուչ է, ուրիշն նրանք խողովակաձև են: Արակներն էլ խողովակաձև են: Ոսկորները զլիսաւորապէս փուչ եւ կոնաձև են:

Միւնոյն վարժութիւնը, բայց ուրիշ կարգով: Մարմնի որ մասունքները գնտաձև են, բոլորակ, կոնաձև, սուր, տափակ և այլն:

**8.** ՄԱՐՄՆԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԻ:

**1.** Ջեռաներն մարդը կարող է բան անել, խըմիել, սեղմել, բռնել ամէն առարկաց, գրել, կարել և այլն:

**2.** Ոտներով մարդը կարող է մանդալ: Վազել, թռչնել և այլն:

3. Աւելիով մենք տեսնում ենք — աչքերը տեսանելիքի գործարաններն են: Ով ոչինչ չէ տեսնում, նրան կոյր են ասում: Լոյս ժամանակը մենք կարող ենք տեսնել ամէն առարկայ: Վորօրինակ մարդը, կենդանին, ծառերը, թռչները, արեգակը, լուսինը. մենք աչքերով նկատում ենք առարկաների գոյնը, նրանց տեսքը, ձեզ, քանակութիւնը և շարժողութիւնը:

4. Ահանջներով մենք լսում ենք. — ականջները լսելիքի գործարաններն են: Ով ոչինչ չէ լսում, նա խուլ է: Մենք առարկաները չենք լսում, այլ նրանց տուած ձայնը: Եւ այսպէս մենք լսում ենք ձայնը, խօսակցութիւնը, աղմուկը, մարդու երգեցութիւնը, կենդանիների հանած ձայները, երաժշտական գործիքները, մեքենաները, քամու վլչելը, ջրի խոխոջալը և այլն:

5. Քիւռվ մենք հոտոտում ենք — հոտ ենք առնում: Քիւռվ հոտոտելիքի գործարան է: Մենք առարկաները չենք հոտ առնում, այլ այն գոլորշիացած մասերը, որ նրանցից բաժանվելով օղի մէջ խառնվում — օդ են գառնում: Բայց որովհետեւ ամէն առարկայ գոլորշիք չէ արձակում, նորա համար էլ ամէն առարկայ հոտ չունի: Շատ առարկաներ բոլորովին հոտ չունին, միւսներն էլ ունին. կամ ախորժելի և կամ անախորժ հոտ:

6. Լեռան քիմքի գործարանն է: Ամէն առարկայ ունի իրան առանձին յատկանիշ համը: Մի քանիսները, զրորինակ քարերը անհամեն: Մի քանիսները, համով ախորժելի են, իսկ միւսները անախորժ: Լեզուի միջնորդութիւնով մենք առարկաների համը զգում ենք, քաղցր է թէ դառը, թւական թու թէ աղի է:

7. Աներ հարժնի բոլոր հասանակներով մենք շօշաւիում ենք: Մարդու ամէն մի մասը շօշափելու ընթառութիւն ունի: Շօշափելով մենք կարող ենք գունակութիւն ունի: Շօշափելով մենք կարող ենք այս ինչ առարկան հարթ է թէ անզգալ թէ այս ինչ առարկան հարթ է թէ անզգալ, բոլորակ թէ անկիւնաւոր, սուրէ թէ հարթ, բոլորակ թէ անկիւնաւոր, սուրէ թէ բութ, պինդ թէ վափուկ, տաք թէ սառը և այլն:

Ուրեմն մարդը հինգ զանազան միջոցներով պետականելիքներ, լսելիքներ, հառափելիքներ, ճաշունելիքներ և շօշափելիքներ կարող է ամէն առարկայ հետազօտել: Նա ունի հինգ արքանեն ուժայաբանէ և այս զգայարանքների համար հինգ գործարան կամ օլդանո ուշնէր, անհաներ, շեշտ, չիւ և հարժնի բոլոր հակերայլը:

Անուանեցէք այնպիսի առարկաներ, որոնց մենք կարող ենք տեսնել, լսել, հոտոտել, ճաշակել և շօշափել. անուանեցէք այնպիսի առարկաներ, որոնց մենք շափել. կարող ենք տեսնել և լսել, — տեսնել և հոտոտել, կարող ենք ախորժել և այլն: Մենք ինչ կարող ենք ինչ կամ աղիք զինք գլայարաներով այս խնճորի մասնաւ մեր հինգ զգայարանքներով այս խնճորի մաս-

սին: Մենք աեւնումենք, որ խնձօրը կոլու է, դեղին  
կամ կարմիր է, մեծ կամ փոքր է. մենք կարող ենք  
իմանալ, եթէ նա գետնի վերայ ընկնի, կամ եթէ  
նրան կարեն կամ պոկեն. մենք նրա հոտը զգում  
ենք հոտուելիքով. լեզուով մենք կարող ենք նրա  
համը իմանալ, թէ նա թթու է թէ քաղցր, հաւ  
մով է թէ ոչ. շօշափելով մենք եզրափակում ենք թէ  
նա պինդ է թէ փափուկ, սառն է թէ տաք: Ար-  
տաքին հինգ զգայարանքներով մենք ի՞նչ կարող  
ենք իմանալ աղի կտօրի, շաքարի, ծաղկի և կամ  
ուրիշ բաների մասին: Գլխաւորապէս կենդանիներն  
եւ ունին արտաքին զգայարանք, բայց ոչ բոլորը ու-  
նին բոլոր հինգ զգայարանքները միասին: Մեր վերե-  
պնած կենդանիները, ինչտես և մարդը, ունին հինգ  
զգայարանք. մի քանի կենդանիների զգայարանքները  
մարդու զգայարանքներից աւելի զարգացած և աւելի  
կատարեալ են. զորօրինակ, շունը մարդուց աւելի է  
հոտուում, և առիւծը լաւ է տեսնում և այլն:  
ջնայելով սորան մարդը բոլոր կենդանիներից կատա-  
րեալն է. մարդը ընդունակ է խօսելու, բայց ոչ մի  
ուրիշ կենդանի այս ընդունակութիւնը չունի: Մար-  
դը կարող է մոածել, քննել, ցանկալ, կրթվել, սի-  
րել և այլն:

## ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄ

ԾԱԿՈՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՏՈՒՆ

«Եկատոռութեան: Ամէն մարդ ընակվումէ մի որոշեալ  
կենսական շրջանում: Մի քանի մների համար այս շրջանը  
ընդարձակ է, միւսների համար աւելի նեղ: Սյսպիսի վշան-  
ներ են տունը, պետութիւնը, եկեղեցին: Մայրենի  
տունը մարդու առաջին շրջանն է: Փոքր առ փոքր զար-  
գանալով մարդու սկզբնական շրջանը լայնանում, ընդար-  
ձակվում է և այս շրջանից դուրս գալով, մարդը դուրս է  
գալիս զործունէութեան ասպարէզը, իրրե պիտութեան ան-  
դամ: Սորա հետ էլ մարդս գառնումէ եկեղեցու անդամ, որի  
նշանակութիւնն է ներգործել մարդու հոգու զարգացման  
վերայ և նրա ընտանիկան ու հասարակական կեանքում:  
Այս է եկեղեցու նպատակը, այս երկու ասարքական դրու-

թիւնները ներգործումն մարդու զարդացման վերայ, որ կատարում է կեանքի ընթացքում. ընտանելան և պիտական շրջաններում: Ուսումնարանը օգնում է երեխայի զարդացմանը, եկեղեցին — հասակաւոր մարդու զարդացմանը: Եւ այսպէս մարդու իր ծն եռու օրից մինչ և մահը կեանք է վարում և ներդոր ծում է երկու շրջանում, տանը և հասարակութեան մէջ: Ուրիմն շատ օգտաւէտ է, եթէ երեխան իրան առաջին տարիներում տուլորի քննել տունը և ընտան եկան կեանքը: Տունը շատ հարուստ նիւթ կտայ ուսուցչն խօսակցութեան համար, որով կարելի է ներգործել երեխայի զարդացման վերայ խսկական հոգնոր և բարյական ուղղութիւն տալով: Տունը երեխայի համար մի ամբողջ աշխարհ է: Հենց սորա պատճառով է, որ մեր ժամանակակից մտածող մանկավարժներից մինը — Գրտղերը վերցնում է տունը իրեն ողջ սկզբնական կրթութեան առարկայ: Նըրանք, որոնք կցանկանան ծանօթանալ նրա մտքերի հետ առաջարկում ենք նրա հեղինակութիւնը, «Elementarschule fürs Leben 3 հատոր 1839 — 41»: Մենք էլ նմանապէս վերցնում ենք տունը և ինչ որ գտնվում է նրա մէջ մեր այս վարժութիւնների համար: Այս վարժութիւնների համար շատ օգտաւէտ կլինի աշակերտաների համար, եթէ կարելի կլինէր ձեռք բերել լաւ շինած մի տան օրինակ (մօղել), որ կարելի կլինէր բաժանել մաս մաս և յետոյ ժողովի միասին: Սորա հետ ուսուցիչը պէտք է գծադրէ տունը և նրա մասունքները տախտակի վերայ: Երեխաները մեծ բաւականութիւնով և հատաքրութիւնով կնայեն այսպիսի գծադրների վերայ: Եթէ երեխաները փոքր իշատէ վարժվել են գծադրութեան մէջ, այն ժամանակը հարկաւոր է նրանցից պահանջել, որ իրանք գծադրեն տան մասները:

1. Տան մասնելը: Հիմքը և սարդափը, առաջին յարկ, երկրորդ յարկ, յատակ, երթիկ: արտաքին պատերը, ներքին պատերը, սրահը, սենհակները, խուհանոցը, սանդուղքը և նախասենեակ:

2. Ներեւելուներ: Պատերը և սարդափը քարով են շինած: Քարը պոկումեն սարերից և յետոյ տաշում, կոփումեն. քարերը միմեանց հետ կտած են դաճուկրով, որ շինումեն կրից, աւաղեց և ջրից: Պատը ագուռով կամ քարով են դնում: Տախտակամածը տախտակներով է շինած. տախտակները դնում են գերանաների վերայ: Գոները, սանդուղքը և կրկնաերթիկները փայտից են շինում:

Տան պատերի երեսները սրտծ են կամ ծածկած դոնաւոր թղթով (շպաներով):

Տան մէջը շատ տեղերում կան երկաթեայ մեխեր:

3. Տուն շինուագութիւնը: Ճարտարապետ, քարտաշ, հիւմն, դարբին, նաղշքար և այլն:

4. Տան մասնելի — սարդափների, սենեակների, խոհանոցների, յատակի, սանդուղքի հշանակութեանը:

5. Այլն տառիկանելը, որոնք դժոնվումեն սարդափիում, սենեակում, խոհանոցում և այլն, նրանց տեսքը, և նիւթերը, որոնցից շինուած են այս առարկաները:

6. Տան արքային մասնելի տրատին առաջը: Արտաքին չորս պատերը ձեւացնումեն երկայնաձև քառանկիւնի,

երթիկը բաղկանումէ մի քանի քառանկիւնիներից  
և եռանկիւնիներից. լուսամուտները քառանկիւնին  
և այն: (Այս բօլորը աշակերտները պէտք է զծա-  
գըն):

7. **Տան բնակչութը:** Հայր, մայր, երեխաներ, ծառ-  
ուաներ, աղախիններ, գերդաստան, գերդաստանի հայ-  
րը, ծնողները, քոյրերը, եղբայրները, որդիքը, թռո-  
ները, բարեկամները, պատ, տառ (մամի), հօրեղբայր,  
մօրաքոյր, հօրեղբօր կամ մօրեղբօր որդի, աներ,  
թռու, տղայ, աղջեկ, օրիորդ, այր, կին, ծեր, պա-  
ռաւ և այն:

8. **Այլ մարդու և կին մարդու հագուստինե-  
պահերը.** որոնցից պատրաստումնեն հագուստը, ովէ  
պատրաստում հագուստը ի՞նչից և ո՞ր տեղ:

9. **Տան բնակիչների դէպի միմեանց ունեցած  
յարաբերութիւնները.** ո. Ծնողների և որդոց փոխադարձ  
յարաբերութիւնները (ծնողների խնամատարութիւնը  
իրանց երեխաների վերայ, դէպի երեխաները ունե-  
ցած սէրը, երեխանց կրթութիւնը): է. Որդոց յա-  
րաբերութիւնը դէպի ծնողները (պատիւ, չնորհակա-  
լութիւն և սէր): գ. Պարոններինը դէպի ծառաները.  
դ. ծառաներինը դէպի պարոնները. ե. բարեկամների  
միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները:

**Այս առարկաների վերաբերեալ խօսակցու-  
թիւնների պարունակութիւնը և կարգը կախուած  
են ուսուցիչներից:**

առաջ է գրծի բարձրացնելուանունը և ուժ կապու-  
ածուած ամէ առաջ է հարաբեկ այս համար է առաջ  
ան մի մասնաւուն ուր աղքատական թագուր է պար-  
ուած սպասական թագավորութիւնը և առաջ մասն մի  
պահանջութիւնը առաջ առաջ ու առաջ առաջ պահանջութիւնը  
**ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ**

**ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂ (ՔԱՂԱՔ, ԳԻՒՂ):**

**Ա. ՆՐԱՆՑ ՄԱՍՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:**

**Ուսուցիչը ցոյց է տալիս աշակերտներին այն  
աները, որոնք գանվումնեն ուսումնարանի հետ մի  
կարգով և անվանումէ այն քուչան (փողոցը), որի  
վերայ դանվումնեն այս աները, յետոյ վոքք վիրքով  
գծագրումէ այս քուչան իրանց աներովը կաւիճով  
տախտակի վերայ: Սորա հետ կարենի է պահանջել  
աշակերտներից որ նրանք քայլերով չափեն քուչի և  
տան լայնութիւնը և երկայնութիւնը: Այսպէս հար-  
կաւոր է գծագրել և միւս քուչաները և վերջապէս  
ողջ քաղաքի կամ գիւղի պլանը: Ուսումնարանի  
առաջին քուչայի հետ կմիանան մէկ մէկի եակեց և  
միւս հարեան քուչաները, հրապարակները, շինու-  
թիւնները, քաղաքի գոները և այն: Ամենանշանա-  
ւոր առարկաները զորօրինակ, եկեղեցին, արձանները,**

աւաղանները և գատաստանատեղերը պէտք է նշանաւիել առանձին նշաններով։ Սորտ հետ ուսուցիչը պէտք է պատմէ աշակերտներին այս առարկաների մասին իրան յայտնի պատմութիւնները։ Վերջապէս աշակերտներից ամէն մինը պէտք է իմանայ քուչաների և հրապարակների նկարագրութիւնները հետեւալ կարգով։ Եթէ ես այս տանից դնամ դուրս, ես կը դնամ նրեանու Հբապարակը, եթէ ես այս հըրապարակից դնամ դէպի արեւելք ես կմանեմ Հայոց (նեղ և ծուռ) վաղոցը, որ վերջանում է Թուրքի Մէիքանում, այս քուչի վերայ գանվումէ վաճառանոցը զանազան խանութներով։ Մէիդանումը ծախումեն զանազան հումքներ, որ բերումեն զիւղերից։ Խակ եթէ ես նրեանու հրապարակից զընամ դէպի Հիւսիս, ես կմանեմ Պալատական քուչան և Գօլօվինսկի Պրօսպէկտը, որի աջ և ձախ կողմերը գցած են հրապարակական տներ։ Կավկասիան Թանգարանը (Մուզէիյ), Օկրուժնօլիյ Առողը, Սուդենի Պալատը, Կասափրական Գիմնազիան, Փոխարքայի Պալատը և ուրիշները։ Եթէ ես այս քուչայով ուղիղ դնամ, ես դուրս կարող եմ դնալ քաղաքից, և հասնիլ Մօսկվայի Պատասխանին և կենսեմ Վլադիկավագի Ճանապարհը։

Մեր քաղաքը շրջապատած է վասերով և պատերով և այս ցայց է տալիս, որ մի ժամանակ մեր քաղաքը պաշտպանվումէր թշնամիների յարձակ-

մունքից։ Հիմայ այդ չկայ, և մեր քաղաքը անցելէ այդ դժիգ։ Այս պատի մնացորդը երեսումէ քաղաքից դուրս։

2. ՔԱՂԱՔԻ ԿԱՄ ԳԻՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՑ։

Ուսուցիչը պէտք է պատմէ աշակերտներին թէ ինչո՞վ են պարապում այն տեղի բնակիչները, և պահանջէ աշակերտներից, որ նրանք պատմեն թէ ինչ տեսակ բնակիչներից է բաղկացած այն քաղաքը կամ գիւղը և ինչ է նոցա պարապունքը։ Այս խօսակացութեան վերայ հիմնվելով ուսուցիչը հասկացնում է աշակերտներին թէ զիւղումը բնակվումեն Գեղարդութեամբ, խակ Պաղցի, որոնք ողարապումեն հողագործութեամբ, ինչ քաղաքումը զանազան արհեստագործներ, ինչպէս են գերձիկներ, կօշկականներ, հիւսներ, ատաղձագործներ, հայթխողներ, մշակներ, ուսուցիչներ, քահանաներ, աստիճանաւորներ, բժիշներ և այլն։

Աշակերտներին պէտք է հասկացնել սրանց ամէն մինի պարապունքը։ Թէ նա ի՞նչէ շինում, և որ տեղից է սուանում նիւթեղէնները իւր պարապունքի համար և ումէ վաճառում իրան գործածը և այլն։

Նիւթ. 1 Սորտ հետ ուսուցիչը միջոց ունի աշակերտների

ուշաղութիւնը դարձնել պաշտօնակատար անձանց  
վերայ, զորօրինակ, ոստիկանութեան պաշտօնեաների,  
քաղաքային վարչութեան, բժիշկների, ուսուցիչների,  
եկեղեցականների նշանակութեան և գործոնէութեան  
վերայ և հասկացնել նրանց այն օգուաները, որով  
շահվումեն բարեկարգ հասարակութեան մէջ բնակ-  
վող մարդիկ։ Հարկաւոր է նմանապէս երեխաների  
ուշաղութիւնը դարձնել հասարակական սեփ-  
հական ուժ եան վերայ, և ցոյց տալ թէ ինչու  
այդ սեփհականութիւնը հարկաւոր է և պէտք է մը-  
նայ հասարակութ եան համար անխախտ և  
անձեռնամուլուն։

Նույ. 2 Ուսուցիչների ուշաղութիւնը դարձնումենը  
և խառն Հատուածների՝ մէջ տպած մի քանի յօդված-  
ների վերայ (զիւղ, քաղաք, մեր ուսումնարան, մեր  
ուսումնարանի փողոցը, դարբնոց, վարուցանք, հունձ  
և այլն), որոնք կարող են նպաստել հայրենիքը ուսա-  
նելուն։

Հայոց բնակչութեան անունը անուն է անունը և ան-  
ունը և անունը անունը անունը և անունը և ան-  
ունը և անունը անունը անունը և անունը և ան-  
ունը և անունը անունը անունը և անունը և ան-  
ունը և անունը անունը անունը և անունը և ան-

## ԽԱՌԵ ՀԱՏՈՒԱԾՆԵԱՆ ՀԱՍԱՐ

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

#### 1. ՀՅԱԿԵՐ ԴԵՊԻ ՈՒՍՈՒՄՆԱԲԱՆ :

Երեխայք, շտապեցէ՛ք ուսումնարան։ Աքլարը  
արդէն վաղուց է կանչել։ Շուտով հազնվեցէ՛ք, ա-  
րեգակը լուսամուտից արդէն նայումէ։

Մարդիկ, անասուններ, թռչուններ, բոկորն էլ  
ձեռ են տուել իրանց գործին։ միջիւնը քաշէ  
տալիս իր բեռը, մեղուն թռչկոտումէ մեղրի հա-  
մար ծաղիկների քաղցր հիւթը ծծելու։ Դաշտը  
պայծառ է, մարդագետինը ուրախ։ անտառն արդէն  
զարթելէ և խշխշումէ։ ծառակտուտը տըկտըկ  
խփումէ կտցով ծառին արտուտը բարձրաձայն երգումէ։

Զինորանները արդէն ջրից հանումեն իրանց  
թռուերը։ Խոտատեղերում զերանդին զընդզընդումէ։

Դէ՛չ, երեխայք, էլ մի՛ ուշանաք, երեսներիդ խաչ  
հանեցէք ու վերցըէք ձեր գրերը։ Աստուած ծու-  
բւթիւն չէ սիրում։

Ո՞ւ ի՞նչ պէտք է անէ աստ-օտից. Է՞նչ պէտք է անէ  
աշուշէլով, վարժարելով։

## 2. ՄԵՐ ԳԱՍՏՈՒԻՆԸ :

Մեր դասատունը ունի օձօռք, տախտակամած,  
չորս պատեր, երկուսը երկար և երկուսը կարճ։ Զա-  
խակողմեան պատի վերայ կան երեք լուսամօւաներ,  
իսկ աջակողմեան պատի վերայ մի դուռը։ Մեր դա-  
սատունը ունի չորս անկիւն, և մի վառարան։ Մեր  
դասատանը կան ուժ՝ նստարաններ, ուժ՝ սեղաններ  
աշակերտաների և մի աթոռ ու մի սեղան ուսուցչի  
համար, երկու փայտէ տախտակ և մի պահարան։  
Պատերի վերայ կան կենականիների և բցաերի նկար-  
ներ, մեր քաղաքի պլանը, մեր երկրի քարտէզը և  
համարիչ։ Մեր դասատան օձօռքը սպիտակ կածով  
է սվաղած, տախտակամածը ներկած է կինամոնի դոյն  
ձիթադեղով։ իսկ պատերին թուղթ է կպցրած։

Ա իտրագրեցէ՞ չեր դաստունը, ո՞ւ չ շնել և ի՞նչէց  
չեր դաստունը և նրա թշունած աստարիները։

## 3. ԱՌԱԽՈՏԵԱՆ ՃԱՌԱԴԱՅԹՆԵՐԸ։

Կարմիր արեգակն զուրս եկաւ բարձր սարերի և-  
տեկից և սփռեց ամէն տեղ իր զեղեցիկ ոսկենման  
ձառագայշները, որ զարթեցնէ երկիրը։

Ա սաղայթը ճառագայթը ընկաւ ժեռի բունը։ Ճե-  
ռը իր բնից վեր թռաւ, բարձրացաւ գեպի երկինք  
և երգեց իւր գեղեցիկ երգը։ Ան ինչպէս զեղեցիկ է  
առաւօտեան գով և առողջարար օդը, ինչպէս լւե-  
է, ինչպէս ազատ։

Երերրդ ճառագայթը ընկաւ նապաստակի վե-  
րայ։ Նապաստակը շարժեց իր երկար ականջները և  
ուրախ ուրախ թռչուաց շաղակոլով կանաչ խոտե-  
րի վերայ։ Նա վագեց իրան համար նախաճաշիկ  
պատրաստելու հիւթալի խոտերից։

Երրրդ ճառագայթը ընկաւ հաւատունը։ Աք-  
ւարը թափ տվեց իր թեւերը և կանչեց ծուղրուզու։  
Հաւերը թառից վայր թռան, կրկուացին և սկսեցին  
աղը քուջուջել, որ ծիծուներ գտնեն իրանց համար։

Չորրրդ ճառագայթը ընկաւ փեթակը։ Մե-  
զուն գուրս թռաւ իր մօմեղէն խուցից, նստեց փե-  
թակի ծակի վերայ, ուղղեց իր թեւեւները և բզզա-  
լով թռաւ անուշահոա ծաղիկներից մեղրացու ժո-  
ղովելու։

Հինգերրդ ճառագայթը ընկաւ փոքրիկ ծոյլի  
տեղի վերայ, արեգակը ծակծըկորումէր նրա աչքե-

ըլ, բայց փոքրիկ ծոյլը շուռ եկամմիւս կողքի վերայ և էին խօսը քուն մտաւ: ի՞նչ էտէր արի:

**4. ՄԵՐ ԴԱՍՏԱՆ (ՓԱՅՏԵ) ՏԱԽՏԱԿԲ:**

Դաստան տախտակը շինելէ առաղձագործը փայտից և սև դեղովներկելէ: Մեր դաստան տախտակը չորս անկիւնանի է և կախարած է երկու հաստատա ոտների վերայ: Նա սևնի շրջանակ և երկու երես. շրջանակը կարմիր զոյնի է, իսկ երեսները սև, որոնց վերայ մենք կաւծով զբումենք: Մեր դաստան տախտակը միշտ դաստան մէջն է մնում:

Համեմատեցի՞ւ դաստան դաստանից առի դաստանի՞ւ հետ:

**5. Ա Շ Խ Ա Տ Ա Ս Ե Ր Ե Ր Ե Խ Ա Յ :**

Պրժեռի բանդ, հանգուացներ անվտի:

Երեխայն արդէն վաղ էր իր դասերը լուսամուտի մօտ սերտում, և արեգակն էլ արդէն վաղ էր նրան լուսամուտից հրաւիրում. ոմիթէ բաւական չէ սովորել, միթէ զուարձանալու ժամանակը չէ: Երեխայն պատասխանումէ. ոչէ, կարմիր բալի, չէ: Հիմայ զուարձանալ ինձ անկարելի է, առաջ դասս պէտք է աւարտեմ:

Երեխայն գրումէ և կարդում: իսկ լուսամուտի մօտ, ձիւղի վերայնուած թռչնիկը բարձր ձայնով երդում է. ոմիթէ բաւական չէ կարգալը, միթէ ուրախանալու ժամանակ չէ: — Զէ, սիրելի թռչնակ, չէ: Հիմայ զըօննել, ինձ անկարելի է, թռչն առաջ բանս պըճնեմ:

Երեխայն լուսը ժամանակը լուսամուտի մօտ նօտած ուշք ու միտքը իր գրքի վերայ էր գցել, էլ դուրս չէր նայում, բայց այգու կարմիր ալուբալին վաղուց էր կրկնում. ոմիթէ սովորելը բաւական չէ, միթէ ժամանակ չէ զուարձանալու: Երեխան բաւարան պատասխանումէ. ոչէ, կարմիր բալի, չէ: Հիմայ զուարձանալ ինձ անկարելի է, առաջ դասս պէտք է աւարտեմ:

Երեխայն գործն աւարտեց, պրծաւ. զըքերը դարսեց արկդի մէջ, թռաւ լուսամուտից այգին և համարձակ ձայն տուեց. դէհ, ովէլ էր կտնչում ինձ: Արեգակը ուրախ ուրախ ժպտումէ, թռչնակը երդում, իսկ բալին իր ձիւղերը նրա համար կուցանումէ:

**6. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՇԻՆՈՒՄ ՏՆԵՐԻ:**

Տները շինումեն քարից, աղուոից և փայտից: Քարէ աների պատը կալստողներն են դնում քարով. կամ աղուոով, իսկ փայտէ տներինը հիւսը:

Առաջ զետինը փորում են և զնում հիմքը: Հիմքի վերայ գուրս են լերում պատերը: Պատերի վերայ լուսամուտների և զրան համար ծակեր են թողնում: Պատերի վերայ գերաններ են զցում և կտուրը ծածկում: Կտուրը լինումէ տափակ, բրաձեւ և կամ եռանկիւնի — թեքված: Տափակ կտուրներով կարողէ անձրել տուն կաթիլ: Բլրաձեւ և թեք կը տուրների վերայ անձրելի ջուրը չէ կանդնում, այլ ներքեւ է թափվում: Կտուրները ծածկում են հողով երկաթով, ագուռով, ծղնոտով և տախտականերով: (Դուք ի՞նչպիսի կտուրներ էք տեսել):

Երբ որ տան շինութիւնը զրսեից աւարտում են, սկսում են ներսը բան անել: «Ներսը շինում են գուռը, լուսամուտները, վառարանը, օճոռքը և տախտակամածը: Պատերը և օճոռքը սվաղում են (ինչով): Տախտակամածին ներկ են քսում: Երբ որ տունը այսպէս պատրաստ է լինում, ներս են կրում կահ կարասիք և սկսում են նրա մեջ բնակվել:

«Եւրոպէրեցէն բերանայի և Գրուոր, Ան Էնչուին Են շնորհ պատելը:

#### 7. ՄԵՐ ՏՈՒՆԸ:

Մեր տունը մեծ չէ: Մեր տունը շինած է ագուրից քարէ հիմքի վերայ: Մեր տունը մի յարկանի է և կտուրն էլ տափակ է, հողով ծածկած:

Մեր տունը բաղկանումէ սենեակներից (քահնի, ուրո՞նք են), խոհանոցից, սարդամից և պահից: Մեր տան մօտ կայ պարտէզ, որի մեջ բուսնում են պտազատու ծառեր, խախովի որթեր, ծաղիկներ, կանաչեղիններ: Մեր տանը բնակվումէ մեր գերդաստանը:

Ի՞նչ անդամներց է բաղկանում չեր գերդաստանը: Առայէ՛ + ինչո՞վ է պարապատմ չեր գերդաստանի ամեն մը անդամը: Դժագրեցէ՛ չեր առն պահով:

#### 8. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ:

Առանց ուտելիքի մարդը սովամահ կը լինէր, առանց ջրի կրմեանէր ծարաւութիւնից: Մարդը սընդպատմէ բուսեղիններով, կենդանինների մսով ու կաթնով և աղով: Նա խմումէ ջուր, դինի, թէյ, ոուրծ, գարեջուր: Մարդու անհրաժեշտ ուտելիքը հայն է, ամենահարկաւոր և առողջարար ըմպելիքը մաքուր ջուրն է:

Դուք ի՞նչ էք ուտելմ և խմում: Պարապատմնեցէ՞ + բերանայն և գրաւոր:

#### 9. ՄԵՐ ԳԵՐԴԱՍԱՆԸ:

Մեր գերդաստանը փոքր չէ: Ես ունիմ հայր և մայր, երկու եղբայր և երկու քոյր: Ես անդասնիննեմ: Մենք ունինք մի ծերաւնի տաս (մեծ մայր),

նա արդէն տամնից շատ ուշ ուշէ դռւրս դալիս, նա միայն եկեղեցին գնում։ մեր տատը մեզ շատ է սիրում։

Իմ հայրս շատ է աշխատում։ մեր բոլոր գերադասանք նրա աշխատանքովն է մննդում և հաղովում։ Առանց նրան, մենք ինչպէս կ'ապրէինք, միշտ մեզ կրկնում է մեր մայրիկը։

Մեր մայրիկը տնտեսութիւն է անում։ նա պատրաստում է ճաշը և իրիգնահայր։ Ողջ օրը մեր մայրիկը մեզ համար հոգս է քաշում։ նա մեզ համար շորեր է կարում և միշտ Աստծուց աղաչում է, որ մենք շուտով մեծանանք, որ մեր հօրը օգնենք։

Ես մի փոքրիկ քոյրիկ էլ ունեի, բայց նրան տարան գերեզմանատուն և հողի տակն արին։ Մինչև այս օրս էլ-իմ մայրիկու լաց է լինում մեր փոքրիկ վարդուհու վերայ։

Ո՞ւնից է բաղկանում չեր գերտափառն։ Համեմատած չեր տառծը գրածէ հետ։

#### 10. ՀԱՐԵՒԱՆԻ ՈՐԴԻՔԸ :

Դէվօն վաղեց իր հարեանի տունը և տեսաւ որ նրանց առան դրութիւնը լու չէ, երեխայքը կեղատու, պատռտած շապիկներով, նրանց դլուխը կեղատու էր և չէր սանդրած։ Փոքրիկ երեխայքը գետնի

վերայ վոռուած են, միւս երկուսը կովում են, իսկ մեծը հիւանդ աեղումը ընկած է և ոչ չկայ, որ նրա վերայ հոգս քաշէ։ Դէվօն մոտաբերեց, որ հարեանի կինը շատ ժամանակ չէ որ մեռելէ, մոտաբերեց և իր մօրը, վաղեց առն նրա մօտ և ողը տանց գրկեց իր ծնողին։

Ի՞նչ է անում ձնում եր երեխանց համար։

#### Ա. Ա. Ե Խ Ո Ր Պ Ա Գ Ը :

Պապը ասստիկ ծերացելէր։ Նրա ականջները ծանրացելին և աչքերն էլ չէին կարում։ Նրա ձեռն ու ոտը ծերութիւնից դողդողումէին. գդալը բերանը տանելիս սպասը թափկումէր։

Այս բանը դուր չեկաւ ալեորի տղին ու հարս սին։ սկսեցին նրան էլ ընստացնել իրանց հետ սուիրի վերայ։ Նրան նստացնումէին անկիւնում և կերակրում քեղան։ Ծերունու ձեռները դողդողացին, քեղանը վեր ընկաւ և փշրվեցաւ։ Առաջուանից առելի բարկացան որդին ու հարսը. և սկսեցին ծերունուն կերակրել հին փայտէ ամանով։ Ալեորի որդին անէր մի փոքրիկ աղայ։ Մի օր այս տղան գետնի վերայ փայտի տաշեղներից ինչ որ շինումէր։

Այս ի՞նչ ես շինում, որդեակա, հարցրեց մայրը։ — ոՓայտէ աման, պատասխանեց երեխայն։

երբ որ դուն և իմ հայրս կծերանաթ, ևս ձեզ այս  
ամանով կը կերակրեմ:

Հայրն ու մայրը նայեցին միմեանց երեսին և  
կարմրատակեցին: Սրանից յետոյ էլ չեն նստացը-  
նում ծերունուն անկիւնում և կերակրում փայտէ  
ամանով:

**12. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ:**

Եղայրը ուսումնարանից եկաւ տուն: Կի՞նչ էք  
անում դուք այն տեղ՝ հարցըց նրա փոքրիկ քոյրը:  
Եղայրը պատմեց թէ ինչ են անում ուսում-  
նարանում: Ուսուցիչը նստումէ աթոռի վերայ՝ սե-  
ղանի մօտ: Աշակերաները նստումեն նստարանների  
վերայ: Ուսուցչի մօտ կանգնած է մի մեծ սե տախտակ:  
Այդ տախտակի վերայ գրումեն կաւճով: Աշակերտ-  
ների առաջը դրած են քարէտախտակներ: Քարէ-  
տախտակների վերայ գրումեն քարէդրչով: Ուսու-  
ցիչը սովորեցնումէ: Աշակերտները սովորումեն: Ու-  
սուցիչը հարցնումէ, աշակերաները պատասխանում  
են: Աշակերաներից մի քանիսը գրումեն, միւսները  
կարդումեն, ուրիշներն էլ նկարում և գծագրումեն:

**ՈՒՅԵԿՈՅԻՆ ԷՆ ԱԿՈՒՄ ՅԵՐ ՊԱՍՏԻԿԱՆԱԼԾ. պատմեցի:**

13. ԱՇԱԿԵՐՏԻ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸ ԻԹ ԵՂԲՈՒ ՎԵՐԱՅ:

**Սիրելի Եղբայր,**

Ես սովորել եմ միշտ ճշմարիտն ասել. սորա  
համար էլ սցոր ես քեզ կը պատմեմ թէ ինչպէս  
ուսումնարան մտայ:

Մեր զիւղից ոչ մի երեխայ ման չէր գալի ու-  
սումնարան, այս պատմառով էլ ես ուորից չէի կա-  
րող իմանալ, թէ ուսումնարանում ծեծումեն, թէ  
ոչ: Սիրելի Եղբայր, ես մօտ եկայ մի մեծ շինութեան,  
որի մէջ կարդումեն երեխաները և սկսեցի նայել  
ըւսամուտից: Ես ուսումնարանում տեսայ այնպիսի  
բաներ, որ իմ օրումը չէի տեսած. ուսուցիչ, աշա-  
կերտներ, երկար սեղաններ, պահարան, գրքեր, քա-  
րէտախտակներ, մատիաններ: Ահա ուսուցիչը վերա-  
ռաւ մի երկար վիայտ: Անս, Տէր Աստուած, պէտք է  
ծեծէ, մոքումս ասի, վիախեմ շուտով մեր տուն:  
Իսկ ուսուցիչը կնաց պահարանի, մօտ և այն տեղից  
հանեց մի պատկեր և սկսեց նրա վերայ ցոյց տալ  
զանազան առարկաներ: Պատկերի վերայ նկարած էին  
արջ, նապատակ, խոզ, ես նրանց ճանաչեցի: Աշա-  
կերտները անվախ և ուրախութիւնով էին նայում  
իրանց ուսուցիչին և իրանց աեղից ձգտումէին դէպ  
պատկերը: Զէ, երկի ուսումնարանումը չեն ծեծ-

ծռւմ, մտածեցի ես ու մտայ ուսումնարան։ Հիմայ  
ուսումնարանումը ինձ համար շատ լաւ է, դուն էլ  
ինձ դրէ ի՞նչպէս ես ապրում։

Քեզ ուրող եղբայր Ակէն։

14. ՓՈՔԻԿ ԱՇԱԿԵՐԾԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ԸՆԿԵՐ ԱՇԱ-  
ԿԵՐԾԻՆ։

### ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՄ։

Բացի մեր դասասնից մեր ուսումնարանում  
կան և ուրիշ շատ դասասներ։ Այս դասասները  
մերերից փոքր են և այն տեղ սովորումնն թուով  
քիչ աշակերտներ։ Ես երբեմ լու սամանից մտիկ եմ  
տալիս, բայց ներս մննել չեմ համարձակում։ Այս  
դասասնան աշակերտները մեղանից աւելի մեծ են և  
մեղանից ել շատ բան գիտեն. մենք երբեմն նրանցից  
վախումնենք և քաշվում։ Բայց մի՞թէ նրանք ել  
մեղ պէս չեն եղել։ Ես կ'աշխատեմ շուտով սովո-  
րել և հանել բարձր դասատներին, բայց ես իմ  
փոքրերի վերայ այդպէս չեմ նայիլ։ Ես քեզ ա-  
սի, որ մենք թուով աւելի շատ ենք, իսկ նրանք  
քիչ են. — որքան դասատունը բարձր է, այնքան էլ  
աշակերտների թիւը փոքրանումէ. նրանք բոլորն ել  
չեն համնում բարձր դասատուն։ Ի՞նչէ որտ պատ-  
ճառը, ես դեռ չգիտեմ, կը հարցնեմ իմ ուսուցիչն։

Մենք միայն մի ուսուցիչ ունինք. բարձր դա-  
սատներում աւելի շատ ուսուցիչներ կան. Մեր ու-  
սուցիչը մեղ սովորեցնումէ ամէն բան, կարդալ, դր-  
բել մեր լեզուով, հաշիւ, դժագըռութիւն և նկար-  
չութիւն, և մենք զննումնենք զանազան առարկա-  
ներ և կենդանիներ, որոնց համարեաւ ամէն օր տես-  
նում ենք. այս զննած առարկաները բոլորն ել մենք  
աչքով տեսել ենք կենդանի և պատկերի վերայ և  
ամէն մեղ ասածները հասկանում։

Առաջ ես կարդումէի աւելի խրթին գրքեր,  
բայց այդ գրքերից ոչնչ չեմ հասկանում։ Այն ժա-  
մանակ ինձ ասումէին, թէ ես արդէն շատ բան  
գիտեմ, որ այդպիսի անհասկանալի գրքեր եմ կարդում,  
բայց այս ասածները իմ զլխում չեմ գալի։ Հիմայ  
ես վորձով տեսնում եմ. որ շատ հասարակ բաներ  
չեմ գիտում և շատ անգամ չեմ կարողանում  
պատասխանել իմ ուսուցիչ տուած ամենահասարակ  
հարցերին։ Նաև որ մենք կարդում ենք և ուսուցիչը  
մեղ բացատրումէ, բոլորն ել հասկանում ենք, բո-  
լորն ել կարծես ես առաջուց գիտելի, բոլորն ել ինձ  
ծանօթ են. բայց ի՞նչպէս առաջ իմ զլխում չեր  
գալի, թէ կարելի է այսպիսի բաներից շատ բան սո-  
վորել։ Մեր ուսուցիչն ասումէ, երբ որ դուք կ'եր-  
թաք աւելի բարձր դասատներ, այն տեղ աւելի  
շատ բաներ կը սպասիք։ Ես կ'աշխատիմ և դասատան  
մէջ ուշադիր կը լինեմ, որ ամէն ըածներս ըմբռնեմ

որ կարողանամ դասաւներս փոխել։ Ա՛յս, ինչքան  
ուրախանումեմ, երբ միտոս դաշխաէ թէ այս բոլոր  
դասաւները պէտք է փոխեմ։

**Մեր** աշակերտների մէջ կան գիշերօնին աշա-  
կերաներ, որոնք զիշեր ցերեկ մնումեն ուսումնա-  
րանում։ և Երևաէիներ, որոնք դաշխան ցերեկով ու-  
սումնարան միայն սովորելու։

**Մեր** ուսումնարանը երկու յարկանիէ, վերին  
յարկումը գտնվումեն դասաւները, զիշերօթիկների  
ննջարանը, ուսուցչական, հոդաբարձական և Փի-  
զիքական գործիքների սինեակները։ Ներքին յար-  
կումը — զրատունը, սեղանատունը, խոհանոցը։  
Այս բոլոր սինեակների տեղերը ես գիտեմ։ Մեր ու-  
սումնարանում կայ բակ բայց այն աեղ պարտէզ և  
մարմնամարզական մեքենաներ չկան, այս ես տեսելեմ  
ուրիշ ուսումնարանում։

**Ոիրելի** ընկեր, զրէ դու էլ ինձ ձեր ուսում-  
նարանի մասին և թէ ի՞նչպէս ես սովորում դուն,  
ինձ սկս դուն էլ ուրամիւնս, որ ուսումնարան ես  
մասնգալի, թէ ոչ։ Յո ընկեր Տէգրան։

**Այլորդէցէն** Յեր ուսումնարանը և Գծորդէցէն պլան։

### 15. Մեր ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՓՈՂՈՑԸ։

**Մեր** ուսումնարանի փողոցը կարճէ, նեղ և  
ցեխոտ։ նա սկսումէ հասարակական պարտէզից և

հասնումէ հրապարակին, որ աեղ ծախումեն շատ  
ուտելեղէններ, որ գիւղացիք սայլով բերումեն զիւշ  
զից։ Մեր փողոցի հետ միանում են էլի ու բիշ շատ  
նեղ և աւելի կեղտոտ փողոցներ։ Մեր փողոցները  
քարայտառեն։ Մեր փողոցի վերայ կան երկույալ-  
կանի տներ, և արհեստանոցներ։ գարբնոց, հիւն-  
ոց, հայթևառների և կօշկակարների խանութներ։  
Ես շատ անգամ եմ կանգնում և նայում այս մը-  
շակ մարդկերանց վերայ, որ օրը մինչև երեկոյ ան-  
դադար բանումեն։ Ինչու են նրանք այդքան աշխա-  
տում։ միթէ չէ կարելի չաշխատել այդքան, ես այս  
կը հարցնեմ իմ ուսուցչին։

**Այլորդէցէն** Յեր ուսումնարանի փողոցը և համա-  
տեցէն Գծորդէցէն ուսումնարանի փողոցի պլան։

### 16. Դ Ա Ր Բ Ն Ո Յ ։

**Դարբնոցումը** կայ չուրի, որ աեղ ածուխ են  
ածում և վառում։ Քուրայի ետեկից շինում են եր-  
կու փուժունի աշակերտը վշումէ այս փուք-  
սելով, որ ածուխը աւելի թէժ վառվի։

**Դարբնը** երկաթի կտորը դնումէ քուրի մէջ։  
Երկաթը տաքանում, կարմրում, եւ է գալիս և յե-  
տոյ սպիտակում ու կակզումէ։ Դարբնը մաշով այս  
երկաթի կտորը քուրից հանումէ, գնում վարանի

վերայ և սկսում է ծեծել ծանր չաքուճով ու մեխ,  
նաև, հացին և ուրիշ բաներ է շինում: Դարբինը  
կազում է կաշուէ գոգնոց, որ շորերը չ'այրվին: Ես  
դարմանում եմ թէ ինչպէս է այս խեղճ դարբինը  
ամառուան շող ժամանակները այրվելով ու խորո-  
վելով բանում այս եռ եկած կրակի մօտ:

Ո՞ւ, ի՞նչպէս և ի՞նչ ե՞ն դադասադում երէալից:

17. Հ Ա 8:

Հացը թխումնն կամ տանը իրանք տանեցիք,  
կամ փողոցում հացթխողները (փռնչին): Հացը թք-  
խումնն խմորից: Հաց թխողը պիւրը խառնումէ  
ջրի հետ, նրա մէջը դցումէ թթխմօր և աղ.  
յեայ սկսումէ տաշտի մէջ հունցել, խմոր շինել:  
Խմորը դնումնն մի տաք տեղ, որ համի—եղգայ:  
Երբ որ խմորը համումէ և սկսումէ բարձրանալ,  
նրանից գնաեր են շինում և հաց թխում թորնի  
կամ փռան մէջ, որոնց առաջուց տաքայնումնն:

Ի՞նչպէս խեղճ հաց թխողը կռանումէ թորնի  
մէջ և այրուելով ու խորովուելով հացը կողնում  
է նրա պատին կամ թէ պցումէ թխակով թէժ  
փուռը: Հաց թխողները շատ դորժ ունին, նրանք  
դիշերվան կիսից արդէն սկսումնն բան անել, որ  
փափուկ հացը և բլիթները վաղ առաւօտը պատա-  
րատի լինին սովածներին կշտացնելու համար:

Ալիւրը աղումէ ջաղացպանը հացի հատիկ-  
ներից ջաղացում: (Դուն աւելէ են ջաղաց, ո՞ր աւել են  
շինում ջաղացը. ի՞նչպէս է շինուծ ժու աւեստծ ջաղացը,  
պատմէ): Հացի հատիկները բուսնումնն դաշտերի  
վերայ, արտերում հացի հասկի մէջ: Դաշտը մշա-  
կումնն գիւղացիք:

Ո՞ւ, ի՞նչից և ի՞նչպէս են լինում հացը, պատմախա-  
նէցէ բեշանացի և գրաւոր:

18. Մ Ե Ր Գ Ի Ւ Ղ Ը Ը :

Մեր գիւղը շատ մեծ չէ. այն տեղ միայն քա-  
ռասուն ծուխ կայ: Մեր գիւղի տները շինած են գետ-  
նի մէջ: Պատերը անտաշ քարերից են գարսած և  
սվաղած չեն: Տների կտուրները հողով են ծածկած,  
նրանք լինումնն տափակ կամ բլրածն: Մեր գիւղի  
տունը բաղկանումէ սրահից, մեծ տանից, երկու  
սենեակներից, մի հիւրանոցից և թորոնատանից:  
Մեր տան մօտ անասնանցն (գոմն) է: Փոքր ինչ  
հեռու մեր կալն ու մարտաքն են: Մեր տան մօտ կայ  
պարտէղ, որի մէջ բուսնումնն պաղատու ծառեր.  
բալի, ալուբալի, թթենի, գամբուլ: Այն աեղ բուս-  
նումնն նմանապէս խիար, սոխ, շաղկամ, բողկ և այլն:  
Մեր խաղողի այգին գիւղիցը դուրսն է: Մեր գիւղի  
փողոցները ծուռ ու մուռն են և կեղասոտ: Փողոցնե-

բում կիտածէ տաւարի վեհնը և նրանով մեր  
դադրած հողերը գիւղացիք չեն պարարացնում։  
Դիւղի վորոյներում մենք տեսնումենք անասուն-  
ներ, զանազան Հողագործական մեքենաներ, գութան,  
չութ — արօր, փոցի, սայլ, տափան։ Մեր գիւղումը  
կայ մի քարաշէն եկեղեցի։ իսկ ուսումնարան չկայ  
և կարգացող մարդ էլ հազիւ կը գտնեաւ Մեր գիւ-  
ղի բնակիչները բոլորն էլ հայ են։ Նրանք պարագում  
են Հողագործութեամբ, այդեւանութեամբ և ա-  
նասնապահութեամբ։

Արմագեցին յեր գեւուը և գծագրեցին նրա պլանը։

#### 19. Վ. Ա. Բ Ո Ւ Յ Ա Ն Ք :

Ի՞նչպէս է հշակում գիւղացին բաշտը և սրահում հաց  
հապիւնելը։

Գիւղացիք հացը ստանում են գետնից — հողից,  
բայց նա շատ պէտք է աշխատէ, որ գետինը խոսի  
փոխարէն, որնոր միայն անասուններին է պէտք գալի,  
հացի հատիկներ տայ։

Հողագործը դաշտը վարում ցել է շինում գռավառով,  
եթէ գիտինը պինդ է և հարկաւոր է խորը վարել, և  
չլու, եթէ վարում են փափուկ հողը ջռեթը գու-  
թանից թեթև է։ Զթումը լծումն մի կամ երկու

լուծ, իսկ գութանում ութից մինչեւ տասներկու  
լուծ եղն ու գոմեշ։

Ա արած ցելը ծածկուած է լինում։ Ճումպեա-  
րով։ Եթէ ցելատեղը խամէ, կամ պաղատու, էլ  
նրան պարարացնել չէ հարկաւոր, իսկ եթէ հողը  
դադրած է, այն ժամանակ հարկաւոր է նրան պա-  
րարացնել ֆէխով։

Գիւղացիք պէտք է վեհնը գուրս տանեն հան-  
դը աշնան կամ գարնան ժամանակները և շաղ տան  
արատեղը բայց միայն շաղ տալով ոչինչ օգուտ  
չի լինիլ, եթէ հողը չժողով կը կին չվարեն կամ լսւ-  
չիոցիւն, որ վեհնը հողի տակն ընկնի։

Փեհնը պէտք է փթի։ Սրանից յետոյ էլի դեռ  
ցաներու ժամանակ չէ, այլ առաջ հարկաւոր է ճմպ-  
ները լաւ փշրել։ Սորա համար գիւղացիք փոցիում  
են ցելը (ի՞նչպէս է շինած փոցիը) և յետոյ հողը  
սերմում ու տափում, որ հատիկները հողի երե-  
սին չմնան, տակն ընկնին։

Գիւղացիք ցանկը անում են գարնան և աշնան  
ժամանակները։ Գարնան ժամանակները ցանում են  
գարնան հացը (գարնան ցորեն, դարի, հաձար, խըր-  
փուկ, կորեկ, սիմինտը)։ իսկ աշնան ժամանակ —  
աշնան ցորենը։ Գիւղացին սերմը գետին զցելով,  
յանձնումէ ապագայ աշխատանքը բնութեան, ու  
ինքը գնումէ տուն և աչքը կթած, նայումէ իր  
ցանքին և սղասում մինչեւ ամառ, Աստծուն աղօթք

անելով, որ իր արտօնը լաւ դուրս բերէ, թափէ ու ազտաէ կարկուտից և երաշտութիւնից, ու չկարէ իր որդիկերանց առաջը<sup>1</sup>:

**Ա**րմը հողին յանձնելուց յեփոյ բնութիւնը սկսումէ իր առաջ և անվարձ աշխատանքը: Արմը ուղարկումէ նրան իր տաքութիւնը, ամպերը ուշ զարկումէն անձրեւ, իսկ գետինը իրան հիւթը նրան ծծելէ տալիս: Հացի հատիկը մննդվումէ, գետնի տակին ծլում և կանանց մախմուրի (թաւիշի) պէս դուրս գալիս, հողը ծածկում: Գիւղացու սիրտը ցնծում, փառաւորվումէ իր կտնաչէն տեսնելով:

**Ա**շնան ցորենը գեռա աշունքվանից է դուրս գաւ լիս և ողջ ձմեռը մնումէ ձիւնի տակը: Նրա անզօր և նորաբօյս տերեները փթումէն ձիւնից, իսկ արամատը աւելի խոր գետին է մտնում և մղնչե գարուն մնումէ կենդանի այս դրութեան մէջ: Աւելի վատն այն է կանանչերի համար, որ եթէ ձմեռը ձիւն չզայ և սաստիկ ցուրտ անէ: Գարնանալուն պէս, երբ արեգակի զօրութիւնը սկսումէ գիտինը տաքացնել և նրան շունչ տալ, աշնան ցանքը նորից սկսումէ կանանչել, նորից կենդանութիւնն է սաանում: Նա բուսանումէ նոր ձիւղերով և աւելի պինդ արմատով: Անձրել, արեգակը և հողը անդադար մննդումէն

1 Այս բառը մեր գիւղացոց մէջ դործածական է և «ամենահարկաւոր մնունդ» բառերի զօրութիւնն ունի:

յանքը. նա ծղնօսէ տալիս և յետոյ հասկէ զցում:

Ի՞նչպէս են անում զարդարանէլ: Ե՞նչ է հարջուռ ցանդին, Ե՞նչ է պատահէ ցանդին երաշխաւլեան ձամանակ: Պատասխանեցէ Բերանացին և գրաւոր:

## 20. Հ Ո Ւ Ն Ձ:

**Ա**րտը երկու գաղ բարձրացելէր և հատիկներով լիքը հասկերի ծանրութիւնից ու մեղմ քամուց ծովի պէս օրօրվումէր: Գիւղացու ալիւը քը ժողովի ու ջուալի մէջ հատելէր: Ալիւրի վերջին մը նացորդից նա արդէն վաղէր հաց թխել: Նա ապրում էր այս կամ այն հարեւանից հաց փոխ ուղելով և աչքը կթած նայումէր դաշտին, թէ երբ պէտք է համնէ նրա արտը, որ նոր հացը կուշտ ուտէ իւր գերգասատանով: Արտն էլ շտապումէր զիւղացու իղձը կատարելու. նա արեգակի տաքութիւնից օրէցօր գեղնանումէր:

**Ո**ի կիրակի օր, ամառը, պարզ և տաք երեկոյ էր, վեր առաւ զիւղացին իր մանգաղը և գնաց իր աշնան ցորենը տեսնելու: Նայեց հողի մի ծայրից, միւս ծայրը չէր երեսում, արտը վիզը թեքած և գետնին կռացած նայումէր զիւղացուն: Գիւղացու սիրտը ցնծաց ուրիխայքս շուտով լի ու բոլ նոր հաց կ'ուտեն, Աստուած մեր ուղղը հասցելէ,

ասաց գիւղացին հանդարտ ճայնով ու պոկեց մի հասկ, աղաղեց բռի ափում, փչեց, հատիկները ջռա կեց ու բերանը դյեց: ո՞նրիու օր էլ, երկու լաւ և տաք ամառվան օր՝, ասաց գիւղացին մաքում, ու երեսին խաչ հանելով, քաշեց մանդաղը կտրեց մի քանի բուռը, ո՞տանեմ երեխանցս համար, հետ շեղուա: Երեխայքը երեկոյեան փունջ կապեցին, վառ կրակի վերայ խանձելով, տրորեցին խախալի կիրայ, հատիկները ջոկեցին ու այն երեկոյեան հետ լիվացին: «Էգուց հարկաւոր է մանդաղները սրել, պատրաստել», ասաց գիւղացին իր ամենամեծ որդուն, ո՞մեր երկէն հողը հասելէ, հնձւոր է կանչ չում: :

Երեք օրից յետոյ հնձւորները սպիտակ շառ պիկներով, կռացած, կուրծքերը արտին դէմ արած ամառվան այրող եռ արեգակին, երգելով հնձւում էին արտը մանդաղով և խռորչ կապում: Երեկոյեան արտի տեղ խրձներից պահանջներ էին դրած: Վիւր օրը գիւղացին սայլով եկաւ խուրձը կրեց հանդից, կալի զրաղին դէղ կանդնացրեց ու շուտով կալը մաքրեց և խուրձները կալում եղանով փուց, քրքրեց, հաշումը լծեց եզները, ծղնոտը կասեց դարման շինեց, դարմանը լեռ արեց, հորովով քամուն տվեց, հատիկները ջոկեց, չորացրուց և տարաւ ջաղացում ալիւր աղաց: Այս ալիւրից տանը առ հաց թիւեցին իրանք էլ, ու իրանց հարեւաններն էլ մի ու բոլ կերան կշտացան:

Մի շաբաթից յետոյ ողջ հունձը ընկելէր և գիւղի մեծ ու պատիկը դաշտումն էին: Հունձը վերա ջանալուց յետոյ բոլոր խուրձ ու հաշան գիւղացիները կրեցին կալի զրաղը, դէղ զրին և կասեցին:

Սեպակմբերի վերջերն էր: Տարին լի տարին էր: Գիւղացին իր կասելէր, հորերը լորել հայի հատիկներով ու իր երկար և ծանր աշխատանքի պառուղը մի քանի օր հանգիստ վայելում էր:

Ահա մարախի պէս թափուեցան մի կողմից չէրչէնին, փօղբաղչիկները և պարտատէրերը, միւս կողմից արքունական խարջ հաւաքողը: Գիւղացին իր մերը հորերին ձեռը տուեց: Այս փօղբաղչուն, չափեց մի քանի թաղար, փողը կէս դնով առաւ ու տուեց խարջ հաւաքողին: Այս չէրչուն, չափեց էլի մի քանի թաղար շահ ու զլուխ: Այս էլ քեզ, չափեց պարտատիրովը, այս քեզ զլուխը, այս էլ քեզ շահը, ասաց գիւղացին, խոռը ան քաշեց, ու ծածակեց իր գարտակ հորերը: Սերմացուն հաշուեց, հաշուեց իր ուտեելու. հացը, հաշուեց, հաշուեց, ծայլը ծայլին չէր համնում: Նրա հաշուով մնացած հացը իրան բաւական էր, միայն մինչեւ ապրիւ ամիսը: Այս ուհի համար էլի զլուխ, էլի շահ, էլի պարտք . . . .

Չէրչն, փօղբաղչին և պարտատէրը ժողովեցին իրանց հացը քաղաք և մինը երկուսով քաղաքացու վերաբաշխութեցին:

«Եկանք կրեցէ՞ և հունչը:

21. ԱՌԱԽՈՏԵՍԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱԾԱՅ:

ԱՌ մարդ՝ այսօր շատ քընեցար նընջեցիր,  
Առաւոտեան հով ժամանակն անցուցիր.  
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,  
Ճերմութիւնը ձորն ու գաշար փըռուեցաւ :

Ընկերներդ վաղ արտերը դնացին,  
Ցորեն, գարին գերանդիով հընձեցին.  
Խուրձ կապիցին, բարդ բարզեցին դաշտումը,  
Նստան հանդէլ կաղնիներու հովումը :

ԱՌ մարդ վեր-կաց սառը ջրով լուացվիր,  
Գօտիզ կապէ, գերանդիդ առ դաշտը հասիր.  
Գանի հովէ, հունձդ արա արտումըդ,  
Հունձրդ հընձէ, մի' ծուլանար գործումըդ :

Հունձրդ կապէ, բարզըդ բարդէ, տան արի,  
Հանգստացիր, երբ քո հունձրդ կաւարտի.  
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,  
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը :

ԱՌ մարդ՝ հէրիք ի՞նչ որ այսօր քնեցար,  
Աչքդ մէկ բաց, տես թէ ո՞չչափ ուշացար.  
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն,  
Վաղ լոռել է մեր գզիրը ձայնելն :

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քնել, բարեկամ,  
Արեգական շողը հասաւ մեր դրան,  
Մի' ծուլանար, ժամանակը խընայէ,  
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակը :

22. ՄԵՐ ՔԱՂԱՔԻ ՊԱՐԱԳՐԱ:

Մեր քաղաքը մեծ է: Մեր քաղաքի միջով անցնումէ մի գետ (ո՞րը), որ քաղաքը երկու մասն է բաժանում, աջակողմեան և ձախակողմեան (ցոյց տուր պլանի վերայ, ի՞նչ թաղեր կան ամէն մի մասում, ցոյց տուր): Գետի վերայ կայ երեք կամուրջ, որոնք միացնում են քաղաքի աջակողմեան մասը ձախակողմեանի հետ: Մեր գետը շատ արագ է հսում, նրա մէջ ձուկն են բունում, և նրա ավելի բում շինած են սցղիներ և ջաղացներ: Մեր քաղաքում կան լոյն և ու զիդ փողոցներ, կան նմանապէս և ծուռը փողոցներ (որոնք են): Լայն և ու զիդ փողոցների երկու կողմերը սալած են. իսկ մէջ տեղը քարայատակ է: Մեր քաղաքում կան հրապարակներ (որոնք են, ի՞նչ են վաճառում այն տեղ), հասարակական աներ. թատրօն, դատաստանատներ, ուսումնարաններ (որոնք են): Կան նմանապէս երեք չորս յարկանի քարով կամ ագռավով շինած գեղեցիկ աներ: Փողոցներումը ես աեսնում եմ խանութներ, առհետանոցներ, կառըեր, գիւղական սպլեր, զանազան կարգի և ազդացնութեան մարդիկ (ռուս, հայ, վրացի, թուրք, գերմանացի և այլն): Մեր քաղաքում կան շատ եկեղեցիներ. մի եկեղեցին տմէնից մեծն է, և նրան ասում են հայ եկեղեցի:

Մեր քաղաքի բնակիչները պարապում են ար-

Հեստագործութեամբ (լոնչ), վաճառականութեամբ (որպիսի) և ծառայութեամբ։ Մեր քաղաքի մօտ կայ մի գործարան, բարձր ծխնելոյզով (լոնչեն պատրաստում այն տեղ)։ Մեր քաղաքին հասելէ երկաթուղու գիծը։

Մեր քաղաքը մեծ է, մեր քաղաքին նաշանգական քաղաք են ասում, իսան և փոքր քաղաքներ, ևս նրանց անունները գիտեմ, կոմիտասու ամենամեծ քաղաքը մեր Տփիսին է։

Այսպիսի է ի բաժանչերու չեր ժամանել իսմ գեղը և համեմատելու այս ժամանելիքը հետ։

### 23. Հ Ո Վ Ո Ւ Ի Զ Ո Ւ Խ Ե Ն :

Ինչու՞ հովիւը իր հոմար նոր շուխայ հարեւ ոռուեց։

Աշնան ժամանակ հովիւը իր ոչխարիների բուրդը խուզեց երկար մերասով։ Քաղաքից եկաւ նրա մօտ վաճառականը և փողով զնեց այս հում ապրանքը։ Վաճառականը ուղարկեց բուրդը արդասահան (ուրիշ երկիր), որ այն տեղ այն բրդից մահուդ գործեն։ (Ինչի են ուղարկում արտասահման)։ Արտասահմանի մի գործարանում վարձուած աշխատաւորները այս բուրդը լսւ լուացին, չորացրին, բըրբեցին և յետոյ նրանից բարակ թել մանեցին։ Միևնույն գործարանում ուրիշ մշակ աշխատաւորները այս թելից բարա-

մահուդ գործեցին ու ներկեցին։ Գործարանատէրը այս մահուդը վաճառականին, իսկ վաճառականը մահուդը տարաւ և իր խանութում դարսեց։ Հովիւը իր հարսանիքին ուզումէր մի մահուդէ չուխայ կարել տալ։ Նա գնաց դերձակի մօտ գերձակը վեր առաւ նրա չափսը, բօյը, մեջը, փէշը յետոյ վաճառականից գնեց մի քանի գաղ մահուդ ու այս մահուդից հովուի համար մի լաւ չուխայ կարեց։ Հովիւը սորա համար դերձակին փող վճարեց ու ուրախութեամբ հաղաւ իր մահուդէ չուխէն, բայց նա ամենելին չէր իմանում, որ այս մահուդը իր ոչխարների բրդիցը մշակները մահուդ գործեցին, ու դերձակը չուխայ կարեց։

Ի՞նչ էն շինուած բրդեց և ովուէլ ի՞նչ հագնելիք էնէր հան, ի՞նչ էն շինուած նիստ։

### 24. Կ Ր Ա Կ :

Արակը կգոյանայ եթէ վառենք փայտը, առ ծուխը կամ մի ուրիշ այրվող նիւթ։ Այս այրվող նիւթելիններից մի քանիսը այրվելու ժամանակը բոց են տալիս, իսկ միւսները առանց բոցի են այրվում։ Փայտը այրվելու ժամանակը բոց է տալիս, իսկ առ ծուխը չէ տալիս։ Բոցը դեղնակարմիր գոյնի է լինում և սրածայր է վերջանում։ Այրվելու ժամա-

նակ լոյս և տաքութիւն է գոյանում։ Որտեղ լոյս չկայ, այն տեղ խաւար է. որ տեղ տաքութիւն չը- կայ, այն տեղ ցուրտ է։ Լուսի և տաքութեան ընդ- հանուր աղբիւրը արեգակն է։ Արեգակը ցերեկն է լոյս աալիս, գիշերը, երբ երկինքը ծածկուած չէ ամ- պով, լուսինը և աստղերն են լոյս աալիս։ Լուսինը և աստղերը միայն լոյս են աալիս, նրանք տաքաց- նում չեն։

**Ա**րուեստական լոյս ստանումնք, երբ այրում ենք իւղը կամ մնմը։ Իւղը մզումեն զանազան առար- կաներից — կտուահատից և այլն։ Մոմը շինումեն ձրագուից կամ չէլից։

**Ա**մառը տաք է լինում, իսկ ձմեռը ցուրտ և սորա համար էլ ձմեռները սենեակները տաքացնում են, վառարաններում փայտ կամ ածուխ վառելով։ Սյրվող փայտը կամ ածուխը տաքացնումէ վա- ռարանը, իսկ վառարանը տաքացնումէ սենեակի մէջ դանված օդը։ Մուխը, որ գոյանումէ այրվելու ժա- մանակը, ծխնելովով դուրս է գնում։ Մարդու մար- մինն էլ ունի շատ տաքութիւն։ Առանց տաքութեան ոչինչ չէ կարող ոչ ապրիլ և ոչ բուսնիլ։ առանց լոյսի չէ կարելի բան շինել։ Լոյսը և տաքութիւնը ոչ թէ միայն մարդու կեանքի ապրելու համար են հարկաւոր, այլ և կենդանիների ու բոյսերի համար։

**25.** Օ Դ:

Օդը պատումէ մեր չորս կողմը • օդը թա- փանցիկ, թեթև և էլաստիքական (առաձգական) է։ Դանցիկ, մասնաւոր է մար- դուն էլ նմանապէս անհրաժեշտ հարկաւոր է մար- դուս, կենդանիների և տունկերի կեանքի համար։ Վերադարձի կեանքի ընթացքում մենք չնչառում Մեր ամբողջ կեանքի ընթացքում մենք չնչառում Ենք (ընդունում և մեզանից դուրս թողնում) օդը։ Ենք առաջ չնչառութիւնը օդը ապականումէ, սո- վարդու այս չնչառութիւնը օդը ապականումէ, սո- րա համար էլ հարկաւոր է լուսամուտները բայց ա- նել սենեակի օդը մաքրելու համար, այսինքն նրա սենեակից կարողանայ դուրս դը- համար, որ ապականած օդը կարողանայ դուրս դու- րականի ծակերը ծածկենք, այն ժամանակը նրա միջի կրակը կհանդչեալ։

Օդը երբեմն տաք է լինում և երբեմն ցուրտ։ Երբեմն նա շարժումէ, իսկ երբեմն անշարժ է մնում։ Օդի շարժմանը քամի են ասում։

**Զ**ուրը հեղուկ և թափանցիկ է։ Զուրը երկրի վերայի ամենացածր տեղերն է բունում և հանդարա- ժամանակը նա հորիզոնական մակերեսի ունի։

Զուրը բխումէ գեսնից և կազմումէ առուներ, գետակներ ու գետեր, որոնք դէպի վայր հոսելով ծովվերն են թափում. ջերմութիւնից ջուրը օդ-դոլորշի է դառնում, որ բարձրանալով դէպի վերև, ամպ, մէգ, և մարախուղ է դառնում. ամպից դշանումէն անձրև, ձիւն, շաղ, որոնք երկրի վերայ թափելով, ոռոգումէն նրան և պտղաբերացնում, յետոյ այս ջուրը գետինը ծծելով, կրկին ժողովումէ երկրի ցած ընկած տեղերը և կրկին աղբիւներ, գետակներ և գետեր են դշանում: Զուրը լինումէ երբեմն տաք և երբեմն սառն, երբեմն նա սառչումէ, սառցոյ է դառնում, ջերմութենից սառոյցը հալչումէ և կրկին ջուր է դառնում: Ջրի մէջը ապրումէն ձկները և ուրիշ կենդանիներ:

## 27. Ե Ր Կ Ի Ւ :

Երկրը, որքան մեղ յայտնի է, գնտաձեւ է և բարկանումէ քարերից և հողեղեններից ու մասամբ ծածկուած է ջրով: Հողագնաի վերին մասը, որի վերայ մենք բնակվումենք, անուանվումէ երկրի մակերեսոյթ: Այս մակերեսոյթը բաղկանումէ ցամաքից և ջրից: Մենք ցամաքի վերայ ենք բնակվում: Ցամաքի վերայ գտնվումենք քաղաքներ, գիւղեր, ճառնապարհներ, այգիներ, դաշտեր, անտառներ, մար-

դագետիններ և այնու նըկիրը պաղաբեր անելու համար նրան վարումէն և պարարտացնում փէինով:

Կրակը, օդը, ջուրը և հողը տեսանելի աշխարհի զինաւոր բաղկացուցիչ մասերն են, որոնց առում են գոյրեր: Կրակը լոյս է տալիս և ջերմացնում է, առանց օդի կրակը չէ կարող տաքացնել և լոյս տալ. կրակը ջուրը գոլորշի է դարձնում: Զուրը կրակը հանդիցնումէ: Հրդեհը ոչնչացնումէ, բոլը և կարող է մեծ աւերմունքների պատճառ դառնալ: Բէկ ջուրը առհասարակ մարդուն շատ օգաւաւէտ է, բայց նա էլ շատ անբազգութիւններ է պատճառում: Սաստիկ քամին կամ մրրիկը շատ անդամ տներ է քանդում և ողջ ծառեր է տակաւհան անում: Երբեմն երկրաշարժութիւններ են պատահում, որոնք աւերում են ողջ քաղաքներ և գաւառներ:

## 28. Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Փ :

Մի կաոր երկալթից մի և նցյն արհեստանուցում երկու խոփի շինեցին: Նրանցից մինը ընկաւ հողագործի ձեռը և խկոյն դորձ դրվեցաւ, միւսը երկար ժամանակ անպէտք և անգործ վաճառականի խանութում ընկած էր: Մի քանի ժամանակից յետոյ երկու ծանօթ խոփերը միմեանց յանկարծ պատահեցան: Հողագործի խոփը արծաթի պէս պաղպաւմէր

և աւելի լաւն էր այն ժամանակից, երբ նա արհեստանոցից դուրս եկաւ, իսկ այն խովը որ անդործ ընկած էր վաճառականի խանութում սեազել էր և ժանդոտել: Ա. Ասաւ, խնդրեմ, ինչու ես այդպէս պապղում հարցրեց ժանդոտած խովը իր հին ընկերին: — „Աշխատանքից, սիրելիս, աշխատանքից պատասխանեց նա. և յետոյ աւելացրեց. „իսկ եթէ դուն ժանդոտել ես և առաջուանից աւելի վատ ես, դրա պատճառը այն է, որ դու այն օրից սկսած, երբ դուրս եկար արհեստանոցից, ողջ ժամանակը հանդիսաւ պարկած էիր վաճառականի խանութում“:

### 29. ՊԱԲՏԷԶ (ԲԱՂՋԱՅ) ԵՒ ԱՅԴԻ:

Պարտէզը շինուածեն տների մօտ և նրա չորս կողմութ չափար (ցանկի) են քաշում. կամ պատումեն: Պարտէզում շինուածեն արխեր և մարդեր (ածուներ), որոնց վերայ ցանումեն զանազան կանանչեղներ, կոտեմ, ուշան, համեմ, տարխուն, լօբի, բակլայ, խիար, բողկ, շաղկամ, սոխ, կաղամբ և այլն. նմանապէս ցանումեն ծաղիկներ ու տնկումեն պտղատու ծառեր. բալի, ալուբալի, դամբիլ և այլն:

Այդիները շինումեն գիւղերի կամ քաղաքների մօտ և նրա բոլորը պատումեն: Այդին մշակումէ սյգեպանը: Այդիներում բուսնումեն խա-

զողի որթ և պտղատու ծառեր. տանձ, խնձոր, ղեղձ, սերպեփիլ և այլն: Այդիներում երբեմն անկումեն գեղեցիկ և բարձր չինարի ծառեր: Այդիներում շինումեն ծապաններ և կատումեն թալփարներ: Այդուն մես են տալիս թռչունները, թրթուրները, արջը և ընտանի կենդանիները:

### 30. Ս Ա Գ Ե Ր :

Ա աշանք մի օր տեսաւ մի վայրենի սաղերի խումբ, որ օդում բարձր թռչումէր:

Վ ահան: Մեր ընտանի սաղերն էլ կարող են այսպէս թռչել: — Հայք: Ոչ: — Վահ. Իսկ վայրենի սաղերին ովէ մննդում: — Հ. Նրանք իրանք են իրանց մնունցը գտնում: — Գ. Իսկ ձմեռը: — Հ. Զմեռը գալուն պէս վայրենի սաղերը մեր իրկրից թռչում գնումեն տաք երկիրները, իսկ գտրունները կրկին վերադառնումեն: — Վ. Բայց ընտանի սաղերը ինչու չեն կարողանում այդպէս լաւ թռչել և ինչու նրանք էլ չեն թռչում ձմեռները գնում տաք երկիրները: — Հ. Որովհետեւ ընտանի կենդանիները իրանց առաջվան ընդունակութիւնը և ոյմը կորցրելն և նրանց զգացմունքներն էլ այնպէս նուրբ չեն, ինչպէս վայրենիներինը: — Վ. Բայց այս բանը ինչու է նրանց զլուխը եկել: — Հ. Որովհետեւ մար-

զիկ նրանց համար հողս են քաշում և նրանց զըս կել են իրանց սեփական ուժից, որից կարողանային օդուտ քաղել: Արանից տեսնումեն, որ մարդիկ էլ պետք է աշխատեն իրանք շինել իրանց բանը, ինչ որ կարող են: Այն երեխաները, որոնք իրանց յոյը դրել են ուրիշների ծառայութեան վերայ և չեն աշխատում իրանք իրանց բանը շինել, ինչ որ կարող են, այն երեխաները ոչ մի ժամանակ չեն լինիլ խելացի և ընդունակ մարդիկ: — Ա. Զէ՛, ես հիմայ կաշխատիմ իմ բանս ինքս շինել, եթէ ոչ, Աստուած մի՛ արասցէ, ինձ էլ այն կը պատահի, ինչ որ պատահել է ընտանի սագերին, որոնք մոռացել են թռչիլը:

### 31. Ի՞նչ ՏԵՍԱԿ ԲՈՅՄԵՐ ԿԱՆ:

Դոյսերը զանազան աեսակ են լինում. Ճառ, Առափ, ծղնոր (Հացեղէն բոյսեր), Էռաջուկէղն, ծաղկէն, սունէն և խոր:

Ծառը ունի ամուր արմտա, միայն մի պինդ ու հաստ բռն և շատ սիւված ճիւղէր, որոնք ծածռ կուած են լինում կանաչ տերեներով (կաղնի, խնձորենի), և կամ սուլ-սուլ տուղներով (եղենի): Թուփը մի բնի տեղ ունենումէ մի քանի բարակ բներ: Հացեղէն բոյսերը բնի տեղ ունենումէն մի

մէջը դատարկ ծղնոր, որ հատիկներով լի հասկուէ վերջանում: Առոնկը ոչ տերեւ ունի և ոչ ճիւղեր, միայն մի արմատ և մի գլուխ: Խոտը ունի բարակ և կակուղ բուն, և փոքրիկ ճիւղեր: Խոտը հեշտութեամբ կարելի է արմատախիլ (տակուահան) անել:

Ծառերը բունումէն մեծ անտառներում. անտառուում լինումէ մութ, զոլ և խոնաւ: Անտառուում բնակվումէն զանազան վայրենի դապաններ, այն տեղ բուսնումէն սունկեր և պտուղներ: Կանանչ. և կակուղ խոտը բունուումէ թաւիշի պէս դաշտում: Նրա հետ բուսնումէն զանազան կանանչ, սպիտակ, կապուտ ծաղիկներ: Գաշտը լսյնէ և ընդարձակ: այն տեղ քո շուրջը միայն երկնքն ես տեսնում. դաշտում եռ արեգակը տաք է լինում և կիզումէ, բայց մեղմ քամին փրկումէ կիշղելուց: Ծառերը գործ են զնում (ինչու համար): Խոտը ուտումէ ասլրանքը:

### 32. ՃԱՆԱՊԱՐՀ ԵՒ ՊԱՆԴԻԽՈՒԹԻՒՆ:

Գիւղերի, դաշտերի, անտառների միջով և սարերի զլանով անցնումէ մեր կեռումեռ Ճանապարհը: Գիշեր յերեկ այս Ճանապարհի վերայ խրձներով, խոտով ու փայտով բարձած դիւղացու սայլերը ճըրձընումէն: Գնումէ սյս Ճանապարհով և քա-

զաքացի զինաւորված կօկուզ ազէն իր թամբած ձիու վերայ նստած : Անցնումէն գարունները այս ձանապարհով և սարը գնացող քօչփոները իրանց բոլոր գերդաստանով, սուրուններով, շներով և վը բաններով : Ահա գալիս են և այս ձանապարհովուները քարշ տալսվ խեղճ, աղքատ Մշեցի մշակները գաւաղանները ձեռին բռնած և պարկը ուսերին դցած : Կնք աեղից են զալիս այս օսար մարդիկը և ուր էն գնում . ինչպէս կ'ուզեի ես էլ սրանց հետ ձանապարհ ընկնել և դնալ տեսնել, թէ ի՞նչպէս են ապրում մարդիկ ուրիշ երկրներում , ասաց վոքրիկ երեխայն, որ այս ժամանակ դրանը կանգանած նայումէր օտար ձանապարհորդների վերայ : — Հայք. Դ նրանք գալիս են հեռու, երկրներից. նրանք այն տեղ թողել են իրանց մայրենի հողը, հայրենի օձախը, կին ու փոքր երեխայք անտէր, անօդնական ու գնումն զորիբութեն : — Դ իսկ ինչև են նրանք հեռանում իրանց սիրելիներից, իրանց ծնած աեղից, ի՞նչն է նրանց քշում, հալածում , հալցրեց հետաքրքիր Ստեփանը : — Հ. , Աղքատութիւնը, ոիրելիս, աղքատութիւնն ու չքաւորութիւնը. ապրելը զժամացելէ խեղճ մարդու, համար և նա գնումէ օտարութիւն, ուրիշ քաղաք համարութիւն և մշակութիւն անելու, որ մի քանի շահի կարողանայ աշխատել և ուղարկել իր տուն, որդիքը սովից փրկելու համար : — Սպեֆան. „Ուրեմն արի մեր տուն, խեղճ

պանդուխտ Մշեցի մշակ, արի մեր տուն տաքացիք, հանգստացիք, մեր աղ ու հացնէլ կեր ու այնպէս զնան պանդիստութիւն : Բայց դուն էլի շուտով կը վերադառնամ քու տունը, քո երեխանց մօտ“ : — „Այդ Աստուած է խաբար“ , ասաց մշակը, խոռը ախ քաշելով : „Իմ հայրս էլ այդպէս զնաց մշակութիւն, բայց մենք նրան սպասելէն դազրեցանք . մէկ էլ իւմացանք , որ նա էն աշխարհն է փոխվել, ու մեզ ուղարկելէ ահա այս գաւաղանը և այս պարկը, որ հիմա ես եմ ձեռս առել և գնումեմ նրա ձանապարհով . — „Գէհ մնան բարեւ“ : — „Գնան բարով, Աստուած քեզ հետ“ , ասաց Յտեփանը ու խոռը մասձեց այս հանգամանքների վերայ :

### ՅՅ. ՊԱՆԴՈՒԽՏ Ա. ԿՈՒՌԻՆԿ :

Կոռունկ, ուստի կուդաս, ծառայ եմ ձայնիդ, կոռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս :

Թողեր եմ ու եկեր եմ մըլքերս ու այդիս, քանի որ անս կ'անեմ կուքաղուի . հողիս :

Աըրտներնիս կամեցաւ. ելանք գնացանք , Աղուհաց կեր մարդկանց կարօտ մնացանք :

Աստըներիս բաներն կամաց կամաց է, Կարիսին սիրոն է սուզ, աշերն ՚ի լաց է :

**Աստուած,** քեզնէ խնդրեմ մաւրվէթ ու քերէմ,  
Դարիալին սիրտն է խոյ, ջիկէրն է վարէմ:  
Կերած հայն է լեղի, ու ջուրն է հարամ:

Ոչ ըզլուր օրն գիտեմ ոչ ըզ կիրակէն,  
Զարկած են զիս շամփուրն, բըռնած կրակին.  
Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ:

**Առունի, Պաղտատու կուղաս, կերթաս ՚ի Սէհրաս,**  
Պղթիկ մի զբեր եմ, տամ քեզ ամանաթ:

Գլըրերեմ մէջ թղթիս, թէ հոս մնացի,  
Օրիկ մի օրեր զաշերս չերացի,  
Ալրելիք ձեզանէ կարօտ մնացի:

**Առունի, մեր աշխարհէն խապրիկ մի չունը:**

82  
83  
84

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցանելու Եղանակը (Դիստերվիդ) . . . . . Ա:  
Դիստ. կանոնները դաստիարակութեան մէջ . . . . . Ե:

## ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Դասաւուան մէջ գտնվող առարկաների  
հետ ծանօթութիւն:

## ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

1 Ուսուցչի առաջին զրոյցները նորեկ աշակերտների հետ . . . . .	1
2 Առարկաների անունները . . . . .	5
3 Գասական առարկաների անունները . . . . .	8
4 Գասատոն . . . . .	9
5 Գռու. (Դիստերվիդ) . . . . .	17
6 Լուսամուտ (Դիստերվիդ) . . . . .	19
7 Վառարան (Դիստերվիդ) . . . . .	21
8 Անդան (Դիստերվիդ) . . . . .	22
9 Քարէտախտակ (Դիստերվիդ) . . . . .	23
10 Գրիչ (Դիստերվիդ) . . . . .	24
11 Գրչահատ (Դիստերվիդ) . . . . .	26
12 Թանաք (Դիստերվիդ) . . . . .	27

13	Թանաքաման (Դիստերվեդ)	28
14	Թուղթ (Դիստերվեդ)	29
15	Գիրք (Դիստերվեդ)	30

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Վախընթաց կրթութիւնների մէջ նը-  
կարագրած առարկաների համեմա-  
տութիւնը (նմանութիւն և դանաղա-  
նութիւն):

1	Դասատան տախտակամածը և սննեակի դուռը (Դիստերվեդ)	34
2	Աւզան և շիֆերի (քարե) տախտակ (Դիստ.)	35
3	Թուղթ և թանաք (Դիստերվեդ)	37

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԳԱՆԱԿԱԾ

Բնական պատմութեան սկիզբը :

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ԸՆՏԱՆԻ ԼԵՆԴԱՆԻՆԵՐ :

1	Յառաջաբան (Դիստերվեդ)	40
2	Շուն (Դիստերվեդ)	45
2	Կատու (Դիստերվեդ)	49

3	Զի (Դիստերվեդ)	50
4	Կող և Եղ (Դիստերվեդ)	51
5	Գամշալ	52
6	Եշ	53
7	Ուզն	54
8	Խող (Դիստերվեդ)	55
9	Ոչխար և այծ (Դիստերվեդ)	57

Վայրենի լենդանիներ :

10	Գաղլ	58
11	Արջ	61
12	Մուկ	62
13	Խլուրդ	64
14	Մաշկաթեուկ	66

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Այս լենդանիների համեմատութիւնը  
միմեանց հետ (նմանութիւն և զանա-  
նութիւն) :

1	Շան համեմատութիւնը կատուի հետ	70
2	Կող և ոչխար (Բարօն — Կօրֆ)	71
3	Խլուրդ և մաշկաթեուկ	72
4	Ընդհանուր կրկնազութիւն	74

ԵՐԵՐՈՐԴ ՎԱՐԺԱՌԻԹԻՒՆ

**Թուչուններ:**

1 Ա.քլար (Դիստերվեդ)	77
2 Ծիծեռնակ	81
3 Բաղ	83
4 Արծիւ	84
5 Կռունկ	87
6 Բու	88
7 Ընդհանուր կրկնողութիւն թուշունների վերաց	90

---

ԶՈՐՅՈՐԴ ՎԱՐԺԱՌԻԹԻՒՆ

**Սողուններ և Զկներ:**

1 Գորսու	92
2 Զուկը	96
Այս բոլոր կենդանիների վերաց մի ընդհանուր հայեացք	100

---

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԱՐԺԱՌԻԹԻՒՆ

**Միջատներ:**

1 Բաղմնեանգ թրթուր	102
2 Մեղու (մնողրաճանձ)	107
3 Աբրէշումի (շերամի) թրթուր	114

---

ՎԵՅՏԵՐՈՐԴ ՎԱՐԺԱՌԻԹԻՒՆ

**Մարդ (Դիստերվեդ):**

1 Մարդու մարմնի գլխաւոր մասերը . . . . .	118
2      Մարմնի զվարաւոր մասունքների մասերը .	119
3      Մարմնի երկրորդական մասերի մասերը .	120
4      Մարմնի մասունքների միմեանց հետու- նեցած յարաքերական դրութիւնները . . . .	123
5      Մարմնի մասունքների թիւը . . . . .	124
6      Մարմնի մասունքների դոյնը . . . . .	124
7      Մարմնի մասունքների ձերը . . . . .	126
8      Մարմնի մասունքների նշանակութիւնը .	127

---

ԵՐԵՐՈՐԴ ԲԱԺԱԱՆՈՒՄ

**Ծայրենիքի Հետ:**

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺԱՌԻԹԻՒՆ

Տուն (Դիստերվեդ) . . . . .	131
----------------------------	-----

---

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺԱՌԻԹԻՒՆ

Բնակութեան տեղ (զիւղ, քաղաք) . . . . .	135
--	-----

---

**ԽԱՌԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ**

**Լ ն թ ե ր ց ա ն ո ւ թ ե ա ն հ ա մ ա ր :**

1 Հրաւեր զէպի ուսումնարան (Ուշինսկի)	139
2 Մեր Դասաւունը . . . . .	140

3	Առաւօտեան ճառագայթներ (Ուշինսկի)	141
4	Մեր Դաստանն (Քարէ) տոտխակը	142
5	Աշխատանէր երեխայ (Ուշինսկի)	142
6	Խնչղէս ևն շմում անելը (Ուշինսկի)	143
7	Մեր տունը	144
8	Ուսելիք և Բմպելիք (Ուշինսկի)	145
9	Մեր գերդաստանը (Ուշինսկի)	145
10	Հարևանի որդիքը (Ուշինսկի)	146
11	Ալեսր պապը (Ուշինսկի)	147
12	Ուսումնարանում (Ուշինսկի)	148
13	Աշակերտի զրած նամակը իր եղբօր վերայ (Բարօն — Կօլֆ)	149
14	Փոքրիկ աշակերտի նամակը իր ընկեր աշակերտին (մեր ուսումնարանը)	150
15	Մեր ուսումնարանի փողոցը	152
16	Դարձնոց (Ուշինսկի)	153
17	Հաց	154
19	Մեր գիւղը	155
19	Վարոցանը	156
20	Հունձ	159
21	Առաւօտեան երդ շինականաց (Ո. Գատկանեան).	162
22	Մեր քաղաքը	163
23	Հովսի չուխէն	164
24	Կրակ (Դիստերվեդ),	165
15	Օդ (Դիստ.)	167
26	Զուր (Դիստ.)	167
27	Երկիր (Դիստ.)	168
28	Երկու խոփ (Ուշինսկի)	169
29	Պարտէղ և այդի	170

30	Սադեր (Ուշինսկի)	171
31	Խնչ տեսակ բայսեր կան	172
32	Ճանապարհ և սպանդիստութիւն	173
33	Գանդուխտ առ կոռոնկ (Քնարից)	175

Այսարշանկան ռասուցիչների համար : Գիրքը բաղկանումէ երկու մասերից, անկատարական ռասուցից — սփուտեմստիքական, կանոնաւոր, կրթողական և զարգացողական վարժութիւններից և թ. խոսն հայուածներից ընթերցանութեան համար : Առաջինի յօդուածները նախ և առաջ պէտք է զատատան մէջ չօշափելի ձևով, տեսանելի առարկաների վերայ մանրամասնարար զննվին և առանցին յօդվածները կարելի է անվախ տալ աշակերտների ձևոր կարդալու, ուսուցչի վերահայեցողութիւնամբ : (Նարդարու համար տեսլի յարմարաւոր նենդանների վերայ յօրինված յօդվածները) : Այդ միանցն յօդվածները կարող են գրաւոր վարժութիւնների նվազ էլ լինել : Սորա համար ուսուցիչը փայտէ տախտակը (աշակերտները իրանց տեսրակները) բաժանումէ գծով երկու մաս, աջակեղմնան և ձախակողմնան : Զախակողմնան մասում տառագիշը դրսւմէ հարցերը, իսկ աշակերտներից մինը այդ հարցերի դէմուդէմ, աջակողմնան մասում զրումէ պատասխանները : Միւս աշակերտները մը և նայնը շինումնն իրանց տեսրակների վերայ : Յետոյ ուսուցիչը բարձրածայն կարգումէ պատասխանները բառ առ և սփանները ուղղել է տալիս, միւս աշակերտներն էլ իրանց գրածներն են ուղղում : Գյուղը հարցերը պէտք է լինին բարդովլին պարզ և հասկելուլի:

Առաջն Հագուստածները ընթէ բցանութէոնն կամաց , թէն  
գրի վերջն են դրած , բայց ամենելին չպէտք է յետ զցուին ,  
այլ այս յօդվածներն էլ դուզնթաց առաջի մասնի հետ  
պէտք է կարգացվին միայն բացատրութեամբ :

Խառն յօդվածներն էլ կարող են լինել դրաւոր վար-  
ժութիւնների առարկայ:

Առաջին մասում զննելով ամէն մի առարկայ առան-  
ձին , մենք նրանով կամեցել ենք աշակերտներին տալ նկա-  
տողալէս զարգացողական անմոռանալի գործնական դի-  
տութիւն և մտքի ու խելքի զարգացում :

Խառն յօդվածները առ հասարակ ուղղված են աշա-  
կերտի շրջապատող բնական և հասարակական իեանքի հետ  
ծանօթանալու , նրան ուսումնասիրելու ու իր շրջապատող  
հանդամանքներին մօտիկ նայելու : Այսպիսի յօդվածները ա-  
ռաջնորդում են մանաւանդ սեպհական տունը և բնակութիւնը  
ուսումնասիրելուն : Հայրենիքը ուսումնասիրելու հումար  
խորհուրդ ենք տալիս պ. պ. ուսուցիչներին երբեմն եր-  
րեմն աշակերտների հետ զմօսանք անելու բնակած զիւղի  
կամ քաղաքի մէջ և նրանց շրջականները , նկատողութեան  
արժանի հանդամանքները նկատել և միաները պահել և  
յետոյ դասատան մէջ նկարագրելով զրօսանքի հաշիւ տալ .  
Զրօսանքները նմանապէս կարող են լինել դրաւոր կրթու-  
թիւնների առարկայ :

Այս մեր և թէ բնագրի մէջ նկատած խորհուրդները  
կստարելուց յետոյ , մենք վստահնում ենք հաստատելու ,  
որ աշակերտի մտաւոր և թէ բարոյական ուժերը կը ստա-  
նան մի կանոնաւոր և հաստատ կենդրանական զարգացում  
և նա կունենայ մի կրիտիքական հայեացք , զարգացման միակ  
զրաւական , որի վերայ արդէն կարելի է յետոյ հիմնել մի  
ուսումնական հաստատ շինութիւն :



Դիմու է 50 կ : — Հանապարհի ծախսը առնողների  
վերայ է :

Ծախսումն է թիֆլիսի գրավաճառ անտոդներում և պ.  
Բ. Աբովյանցի խանութում, Կուկիայի կամուրջի  
վերայ, — Օտար քաղաքացիները կարող են ստանալ ուղ-  
ղակի հեղինակից ոյս հասցեով. Տիֆլոս, Վասլիո Շավեր-  
ձով, վերաբերյալ բարեկարգությունը գործում է առաջ և առաջ:



